44904

2.14.

# ՀԱԶԱՐ ԵՒ ՄԻ

# ԱՌԱԿԱՒՈՐ ԲԱՆՔ

## ԱԶԳԱՅԻՆՔ ԵՒ ՕՏԱՐՔ

ԳԱԲՐԻԷԼ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԷ

ԱՅՎԱԶԵԱՆ



44804

Կ. ՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԵԱՆ

**1874 — ՌՅԻԳ**

# ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

Առակաւոր խօսքերը ամէն ժամանակ եւ ամէն ազգաց մէջ գործածուած են իբրեւ մէկմէկ բարոյական վճիռ, պտուղ փորձառութեան եւ ուղիղ դատողութեան, համառօտութիւն ռամկական իմաստասիրութեան, ազդու խրատ առաքինութեան եւ զօրաւոր, յանդիմանութիւն զանազան մոլութեանց. եւ այսպիսի խօսքերուն չափաւոր մէկ հաւաքումը ընդունելի եղած է միշտ որ եւ իցէ ժողովրդեան՝ իբրեւ տոմար կամ մատեան օրինաց եւ սովորութեան նախնեաց:

Մեր ազգին մէջ այսպիսի առակաւոր խօսքեր շատ կան մեր լեզուովը, մանաւանդ Հայաստանի մէջ, ինչպէս որ յայտնի է. բայց կան անշուշտ նաեւ շատ տաճկացած՝ այսինքն Տաճկերէնի թարգման-

ւած Հայերէն առածներ, որ աւելի կը գործածուին այն տեղերը՝ ուր որ ազգային.ք մինչեւ ցայժմ Տաճկերէնը իրենց հասարակաց լեզու դարձուցած են դըժբաղդաբար: Հարկաւ կգտնուին նաեւ. այնպիսի առակներ ու առածներ որ Տաճկերէնէ, Պարսկերէնէ եւ ուրիշ լեզուներէ Հայերէնի թարգմանուած են: Ասոնք ամէնը մէկտեղ հաւաքելու աշխատութիւնը տարակոյս չկայ որ մեծապէս զուարճալի եւ օգտակար է ճշմարիտ ազգասիրին, այսինքն պարզամիտ ու բարեսէր՝ ժողովրդեան կրթութեանը վրայ սէր եւ փոյթ ունեցողին. բայց եւ գուցէ փափկագոյն ախորժակի եւ երկարագոյն ժամանակի կարօտ աշխատութիւն: Մեք կցանկամք որ այս մեր փոքր ձեռնարկութեամբը համարուիմք իբր այսպիսի աշխատութեան ճաշակ մի տուած. վասն զի այս *Հազար եւ Մի* առակաւոր խօսքերն ու առածները՝ որ մենք միակերպ մէկ ձեւի բերուած, կոկուած ու պարզած՝ մէկտեղ բովանդակեցինք, գուցէ հինգերորդ մասն ալ չեն այնքան ռամկական առակաց եւ առածից՝ որ մեր ազգին մէջ

կգործածուին, թող ուրիշ ազգաց մէջ գործածականները։

Մեր ընտրած առակաւոր խօսքերուն մէջ ընդհանուր դասաւորութիւն մի դրբինք, անոր համար որ մեկզմեկ պարզեն, բացատրեն եւ երբեմն սրբագրեն. իսկ իւրաքանչիւր առակին մեկմեկ վերնագիր դնելն աւելորդ համարեցանք, որովհետեւ ընդհանրապէս կարօտ չեն մեկնութեան։

Հայաստանի առածներուն մեծ մասին լեզուն բստ կարի անփոփոխ պահեցինք. բայց ուր որ հարկ երեւցաւ հասարակաց դիւրիմաց անել անոնց խօսքերը, երբեմն փոփոխեցինք, եւ շատ անգամ անծանօթ կամ անսովոր բառերը կարճ ծանօթութեամբ բացատրելու չդանդաղեցանք. Շատ տեղ ալ Տաճկական բառերը, ինչպէս որ կըտնին դեռ այն առակներուն մէջ, առանց Հայերէնի վերածելու՝ նոյնպէս Տաճկերէն թողուցինք։

Երբ ազգիս մէջէն ուսումնասէր եւ իմաստասէր անձինք կամենան յուղարկել մեզի այլեւս այնպիսի առակաւոր խօսքեր, որ այս մեր հաւաքման մէջ չեն

գտնուիր, եւ միանգամայն առնցմէ վար չեն մնար իրենց իմաստներուն ու խորքերուն ուղղութեամբն ու գեղեցկութեամբը,— թէ Հայերէն լեզուով լինին. թէ Տաճկերէն, Պարսկերէն կամ ուրիշ լեզուով,— սիրով եւ շնորհակալութեամբ կընդունիմք, եւ սոյն առածներուն ձեւին վերածելով՝ կտպագրեմք առ այժմ իբրեւ յաւելուած, յետոյ երբ խիստ շատնան՝ յաւաքմանս մէջ կանցընեմք :

Այս առածներուս մէջ շատ անգամ յիշատակած եմք Խիկարայ անունը. ասոր ալ պատճառը հասկցընեմք համառօտիւ : —

Խիկար իմաստունը մեր ազգին մէջ գրեթէ նոյն համբաւն ունի՝ ինչ որ ունեցեր է Յունաց մէջ Եսովպոսը, Արաբացւոց մէջ Լոգմանը, Տաճկաց մէջ Նասրէտտինը, եւ ուրիշներուն մէջ ուրիշ աւելի կամ պակաս խելացի ու բամպառակ առակախօսներ, թէպէտեւ ստուգութեամբ յայտնի չէ մեզի թէ մեր Խիկարը որ ժամանակի մարդ է, եւ իր առակներն ու խրատները գրով ալ աւանդր է թէ ոչ :

Շնորհալւոյն անունովը զտնուած հանելուկներէն մէկուն մէջ Խիկարայ անունը այս կերպով յիշուած է.

«Ջետ ըզաղար խիստ է ի յար,
Սիրէ զմորթի ւ՚ատէ զբանջար.
Ես քնչ կարդամ զիւրմէն քեզ ճառ,
Խելոքն ծով է ու *խիկար*։»

Ասով կրնայ կարծուիլ թէ Խիկարը Շրնորհալիէն առաջ, կամ գէթ նորա ժամանակակից անձ մի է. բայց շատ կարելի է որ այդ հանելուկն ալ Շնորհալւոյն օրերէն յետոյ շարադրուած լինի։ Նմանապէս հին Ոսկեփորիկի մը մէջ համառօտ հատուած մի կայ խրատական խօսքերու. եւ այն խրատները՝ հանդերձ առասպելախառն պատմութեամբ Խիկարայ՝ տպագրուած են ի Կոստանդնուպօլիս 1807 ին *Դղնձէ քաղաքի պատմութիւն* անունով գրքուկին մէջ։ Բայց այնպիսի եւ այնքան միայն աշխատութեամբ անկարելի էր որ այն համբաւը ստանար Խիկարը մեր ազգին մէջ. պէտք է որ ուրիշ շատ գրաւոր եւ անգին յիշատակներ թողած լինի նա իւր իմաստա-

սիրութեանը: Մեզի կերեւի թէ մեր ազգին մեծ մասին բերանը մինչեւ ցայժմ պտըտող Հայերէն առակներուն ու առածներուն գոնէ մէկ մասը Խիկարայ հնարածներն են եւ Նասրէտտինի խօճայի անունովը պատմուած առակներուն եւ նոցա բերանը դրուած առածներուն մէկ մասն ալ մեր Խիկարայ իմաստնոյ հնարածներն են, ինչպէս արդէն յայտնի է որ Չինաց Կոնֆուցէին, Յունաց Եսովպոսին ու Դիոգենեսին, Արաբացւոց Լոզմանին, Տաճկաց Նասրէտտինին առակներն ալ իրարու հետ շփոթած են, եւ մէկուն հընարածը միւսին անունովը կյիշուի, ուստի եւ կարելի չէ համարձակ վճռել թէ այս կամ այն առակն ու առածը Խիկարինն է թէ Եսովպոսին, թէ Նասրէտտին խօճային, թէ ուրիշ ազգային կամ օտար առակախօսի:

Յանկալի է որ ատենով նաեւ գրաւոր աւելի ընդարձակ եւ ստոյգ տեղեկութիւն գտնուի հին ձեռագրաց մէջ նորա անձին եւ առակներուն վրայ: Խիկար իմաստունը՝ ոչ թէ Ասորեստանեայց Սենեքերիմ թագաւորին ատենադպիրն է եղեր (ինչ-

պէս որ Պղնձէ քաղաքին անհամ ու անժուր պատմութեան հեղինակը հնարեր է), հապա ինչպէս որ մեք կարծեմք՝ մեր Արծրունեաց Սենեքերիմ թագաւորին օրերուն, այսինքն ասկից 850 տարիի չափ առաջ, Հայաստանի մէջ անուանի եղած զուարճաբան առակախօս եւ ժողովրդական իմաստասէր էր:

Ի վերջէ աւելորդ չեմք համարիր յիշեցընել որ այս աշխատութեան նպատակն եղած է՝ մերազնեայ ժողովրդոց բարոյական կրթութեանը նոր տեսակ օգնութիւն մի եւս արած լինել, նոցա հասկացողութեանն ու ախորժակին յարմար ոճով մը առաջ բերելով ու մտքերնին ձգելով շատին ծանօթ ու անծանօթ առակները ու առածները: Յուսամք թէ մեր դիտաւորութեանը նպատակին կհասնիմք Աստուծով, բարեմիտ ընթերցողաց սիրալիր ընդունելութեամբը:



ՀԱԶԱՐ ԵՒ ՄԻ

# ԱՌԱԿԱՒՈՐ ԲԱՆՔ

## ԱԶԳԱՅԻՆՔ ԵՒ ՕՏԱՐՔ

## Ա

### ԱԳԱՀՈՒԹԻՒՆ ԵՒ ՇՌԱՅԼՈՒԹԻՒՆ

**Ա.**

Ագահին ու առատին
Ծախսերը մէկ է՝ սիրելի.
Կարծեմ թէ ծախսն ագահին
Մէկէն մէկ այլ է աւելի:

**Բ**

Չուտողին հացն ու դրամ
Ուտողին անուշ լինի·
Անկարօտ մարդուն *հարամ*
Կարօտին ջուրն ու գինի:

Դ

Մի կենար ագահի տուն,
Ըղձեղ աչքով դուրս կը վարէ.
Թէ իր հացին նայի կատուն,
Քահով քրշով դուրս կը վարէ:

Դ

Ձեր տեսել պատէն ի կախ,
Յանկարծ տեսած ճակտէն ի կախ.
Հեռու կայց չրտես մարդէն,
Մարդ կը խեղդէ՝ ճրտէն ի կախ:

Ե

Խոզի կրունկէն մի մազ,
Ծիլասի փողէն մի մաս,
Ինձ զուցէ տահ մի բերեն,
Նոցա եւ ոչ մի վրնաս:

Զ

Սոխ սրխտոտն ու քացախը
Հասուի դրնող մեր *դօնախը*
Թող *փաշայէն* յոյսը կտրէ,
Նրտսի ուտէ քողկն ու ժախը:

Է.

Տէրտէրին տունը *գերտե*,
Բոշային տունը *չիերտե*,
Հացըդ կեր, յետոյ գընա·
Այս խրատըս լա՛ւ սերտէ:

Ը.

Ով որ տընանկ աղքատ է,
Ու ագահէն քան խընդրէ,
Զարմա՛նք թէ որ այս չըգիտէ,
Թէ աղքատն ինք չէ՝ ագահն է:

Թ.

Հաւատար մարդոց միջին
Քո ընկերին մօտ ընտրիր·
Բայց ագահին ու անմըտին
Հետը քընաւ մի՛ ընտրիր:

Ժ.

Այս տըղուրըս ինչ ունի,
Խելք չը՛հասնիր՝ ա՛ տըղայ·
Հարիւր հակ [1]) բամպակ ունի,
Վըրան հարիւր հաս ծակ կայ:

1) Հակ, բեռ, *Թա՛յ*:

44904

ԺԱ.

Ազահին աչքը կըշտանայ ինչո՞վ.
Բոլոր աշխարհիս ոսկովն արծաթով.
—Ոչ եղբայր ո՛չ, մի՛ հաւատար,
Ցես մահուանը ափ մի հողով:

ԺԲ.

Այդ շոքին բո՞ւք կըդիմանայ,
Այդ ծախքին փո՞ղ կըդիմանայ,
Խելքըդ գըլուխըդ բեր, եղբայր,
Ձախորդ հովին չես դիմանայ:

ԺԳ.

Պարտքըդ ելաւ հազարի,
Ինչո՞ւ կերթաս *պազարի*.
Վերջըդ միտք արա՝ եղբայր,
Ձեղխութենէդ *վազ* արի:

ԺԳ.

Անունը մեծ՝ տունը դատարկ,
Տան դուռը մեծ՝ փուռը դատարկ.
Ճըռայլին բանը բուրդ է,
Ճուտ կըմըրնայ բուռը [1]) դատարկ:

---

1) Բուռ, ափ *աւուճ*:

## Բ

## ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԳԵՐՈՒԹԻՒՆ

---

### ԺԱ

Որքան ուժով կոխես վրան,
Այնքան վեր ցատքէ շատրուան·
Որքան ուժ տաս անզթութե՛. բըռնութե՛.
Այն քան սաստիկ զրգռի սէրն ազատուե՛:

### ԺԲ

Ընտի՛ր փայլի պըլպըլայ
Ցաղբիւսի գոհարն անգին·—
Ընտի՛ր երգէ ճըլվըլայ
Սոխակը կատուի ճանկին:

### ԺԳ

Կատուն եղաւ ազատը, —
Մրկներն իջան ամպարը·
Կատուն եղաւ երդիքը, —
Մրկներ բռնեցին պարը:

ԺԸ

Ի՞նչ անես, մի՛խ, ինչ անես.—
Այն ձեռքն որ կըտրել չ'ըլնիր՝
Հարկաւ պիտի պաչ անես
Ու ճակտիդ վըրայ դընես :

ԺԹ

Քաղցած մընաս՝ ծարաւ մընաս,
Երէ կուզես՝ մեռնիս մընաս,
Ես առանց քեզի օր չունիմ,
Այս իմ դըռնէս դուրս չը գընաս :

Ի

Աղքատ եղիր,
Ազատ եղիր.
Ի՞նչ անեմ ոսկի արծաթ,
Սըրտովըդ ազատ եղիր :

## Գ.

### ԱԶԳԱԿԱՆ ԵՒ ԱՄՈՒՍԻՆ

---

**ԺԱ.**

Զաւակ է, մեծ ըռզակ է՝
Թէ ունի ծէնք ու ծընորհ.
Անողորմ աւազակ է
Թէ հնազանդ չէ հօրն ու մօր:

**ԺԲ.**

Անզաւակը մէկ ցաւ ունի՝
Թէ ինչո՞ւ զաւակ չունի.
Զաւկի տէրը բիւր ցաւ ունի,
Ո՞ր մէկը խոստովանի :

**ԺԳ.**

Քանի փոքր էր զաւակըդ՝
Սեղանէդ կուտէր հացըդ.
Քանի մեծցաւ քու մօտըդ՝
Սրնտուկէդ պարպեց գանձըդ :

ԻԴ

Ձագ ունեցող հաւերուն
Խածիքը մեծ կը լինի.
Ցաւ ունեցող հայրերուն
Երեցքը մեծ կը լինի :

ԻԵ

Պոպոկն ելաւ իւր փոճոկէն,
Փոճոկին չըհաւանիր.
Զաւակն ելաւ հօր վիճակէն,
Հօրն ու մօր չըհաւանիր :

ԻԶ

Հայրը որդւոյն այգի բաշխեց,
Որդին իմացաւ՝ չիմացաւ.
Որդին հօրը մէկ կուզ բաշխեց,
Ու տասնըհինգ տեղ պարծեցաւ :

ԻԷ

Հայրը կերաւ ազոխը,
Որդւոյն ակռան հարուեցաւ.
Հայրը կերաւ խաղողը,
Որդին գինով հարբեցաւ :

**ԻԸ**

Տղոյն կերածն է *հալալ*,
Վրան հագածն է *հարամ*.
Հօրմէն առածն է *հալալ*.
Իրմէ մըխածն է *հարամ* :

**ԻԹ**

Խաղախորդըն սիրած կաչին
Գեսնէ գէշին զարնում է.
Խելօք հայրըն՝ սիրած որդին
Թէ խեռ է՝ լաւ թակում է :

**Լ**

Պասանը՞ ես, — մի՛ մոռանար՝
Օր մի տի լինիս ծերունի.
Ծերունի՞ ես, — մի՛ մոռանար՝
Եղեր ես դուն ալ պասանի :

**ԼԱ**

Եղբայր եղբօր հետ կըռուըտին,
Դու մի՛ մըտներ երկուսին մէջ.
Կըսկիծ կուտայ փուշը մատին՝
Իր բղունկին ու մըսին մէջ :

ԼԲ

Տան տէրտէրին չեն սեեր՝
Օրհնեա, տէր.
Ազգականին չեն սեեր՝
Եկ հայց կեր :

ԼԳ

Ծարիկը տես, գոտիկն առ,
Մարիկը տես՝ աղջիկն առ.
Որտուղը տես՝ ծառիկն առ,
Ծաղիկը տես՝ պրտղիկն առ :

ԼԴ

Կին ունիս, տիկին ունիս,
Դուն քեզի տէր չես՝ աղբէր.
Թէպէտ եւ բազւոր լինիս
Գերի ես քան զիս *պէպէր* :

ԼԵ

Կին մի առնուր՝ օգնական առ,
Տուն մի առնուր՝ հարեւան առ,
*Պաղ ու պօւպան* մի առնուր,
Օդը ջուրն ու ջաղացն առ :

ԼԶ

Անունը Մուսա,
Մօրուքը *քոսա*·
Ասի՛ ո՞վ է սա,
Ասին, խեւ հարսին խենթ փեսայ:

ԼԷ

Կրնկան ձայնով էրիկմարդէն,
Էրկան ձայնով կրնիկմարդէն
Վախցիր ու փախիր կ'ասեն·
— Ի հարկէ բան մի գիտեն :

ԼԸ

Ընկերըդ առնուս դաշտէն,
Հացիկըդ առնուս տաշտէն·
Վա՜յ սաս գեղի կըտրըճին
Որ հարսն առնու քաղաքէն :

ԼԹ

Ո՞ր բանը գըտնըւի քիչ.—
Գոհարներն ու մարգարիտ,
Յետոյ կանանց ազգին մէջ
Խորհրդապահ ճըշմարիտ :

**Խ**

Մածուկ խորհուրդը կճոշպահեմ սար,
Դրամ ու բըղբեր կճոշ պահ մի սար.
Ձանելու բանովդ կըճոշ ահ մի սար,
Թէ համար խըճրէ՝ *զահրումահ* մի սար:

**ԽԱ.**

Անմուսնութեան խօսք սուիր, —
Լեզուով հանկուրց մի արիր,
Որ բոլոր ասամներով
Քակելու հար չըլինիր:

**ԽԲ.**

Կին արմասին լըսողն էլ
Կասեն թէ կին արմաս է. —
Ուրեմն Աղամն էլ նման է
Թէ ինչ վայ է:

**ԽԳ.**

Զար կինէն հեռի խիկար,
Նա մարդ չէ, մեղրի եփոց,
Բերանն է մեղր ու համար,
Սըրտումը կրակ ու բոց:

ԽԴ

Տանը սատանայ,
Դուրսը խանանայ.
Լաւ չէ որ այն ամուսին
Որ մի յառաջ փընձանայ:

Դ

### ԱԶԳՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՅՐԵՆԻՔ

ԽԵ

Հոռոմին ճիճը սիրեմ,
Հըռոմին ճո՛րը սիրեմ.
Հայն իմս է՝ թէ հին թէ նոր,
Ի՞նչ ասեմ ու չըսիրեմ:

ԽԶ

Ուժին մեռնիմ Ըռուսին,
Լեզուանութեան Փռանցուզին,
Վարպետութեան Ինկլիզին,
Մաքրութեան Հոլանտըզին:

ԽԷ

Թրդանկի խելքին մեռնիմ ,
Արաղի ծիուն մեռնիմ ·
Հային ինչին կուզես մեռիր ,
Ես լոյս հաւատքին մեռնիմ :

ԽԸ

Չին առնուս՝ ձիանոցէն ,
Շունն առնուս հովուանոցէն.
Հարսին համեստը թէ կուզես՝
Առնուս մեր հայանոցէն :

ԽԹ

Չիու քնութիւնը չը սովրած՝
Չիուն եսեւէն մի երթար ·
Ազգի քնութիւն չը սովրած՝
Ազգի առջեւէն մի երթար :

Ծ

Ոսկին հարցուր ոսկերչին ,
Չին՝ ձի հեծնող կտրիճին ·
Մէկ ազգ մը կուզես ճանչնալ , —
Հարցուր ազգի մատաղին :

ԾԱ

Հայը մա՛րդ պէտք է լինի
Որ իւր ազգը շա՛տ սիրէ.
Մարդը Հա՛յ պէտք է լինի
Որ իւր ազգը քիչ սիրէ:

ԾԲ

Իմաստութիւն Յունաստան,
Ճարտարութիւն Ֆռանկըստան,
Փարթամութիւն Հընդկաստան,
Անզըքութիւն Պարսկաստան:

ԾԳ

Կատուին ասին, հէ՞րդ է լաւ թէ մէրըդ.
Պատասխանեց՝ *նաօ՛ նաօ՛*, —.
Հային ասին, քը՞րդն է լաւ թէ թրքմէնդ.
Պատասխանեց՝ *նաօ՛ նաօ՛* [1]):

ԾԴ

Ճըրագն իր տակը լոյս չի՛ տար,
Այս վիճակըս մեզ յոյս չի՛ տար. —
Քանի որ Հայն ազգասէր չէ՝
Մէկն իրեն աչքիլոյս չի՛ տար:

---

1) Ոչ նա, ոչ սա:

ԾԵ

Տէրն Ադամայ հետն է խօսել արպերէն,
Օձն Եւայի հետ է խօսել պարսկերէն.
Տէրն է զԱդամ յանդիմանել թուրքերէն,
Ադամ Եւա լացեն եղել Հայերէն:

ԾԶ

Վանայ լեզուն, չիտակն ասած,
Քրդի կարպետէ՝ լաւ հիւսած.
Հայի՝ Քրդի՝ Պարսկի բառով
Նաքշի նըման նախշուն արած:

ԾԷ

Հայու խելքը գլխումն է,
Վըրացունը աչքումն է,
Խոյեցունը ոտքումն է.
Քըրտինը ո՞ր տեղումն է:

ԾԸ

Հոռմին օգուտ՝ Հայուն վընաս.
Հայուն օգուտ՝ Հոռմին վընաս,
Քեզ ի՞նչ օգուտ Հայ-Հոռոմէն.
Լաւ չէ՞ որ Հայ ես՝ Հա՛յ մընաս:

**ԾԹ**

Մեր երկրումը ինչ որ ուտեն,
Վրայէն պըտուղ կուտեն.—
Մեզանում ինչ որ ուտեն
Թերաններըը սըրբեն կեղլեն:

**Լ**

Հայաստանին ամառը
Կուգայ դէպ ի ձմեռը.
Ըստամպօլին ձըմեռը
Կուգայ դէպ ի ամառը:

**ԼԱ**

Ըստամպօլին կըրակը
Կուտէ *մայրը մէկայլըը*.
Բանի հոն է էն կրակը,
Աղբար՝ *խարայ* է *հայրը*:

**ԼԲ**

Միսը միս է,
Խաշուն աչքի լիս [1]) է.—
Թիֆլիսը Թիֆլիս է,
Պօլիսն աուլիս [2]) է:

---

1) Լոյս. | 2) Խապէր:

ԿԳ

Կասեն թէ լաւ տեղ է Թիֆլիս,
Բայց ըզմարդըն կանէ *մուֆլիս*.
Պէտք է շատ գատիս՝ քիչ շահիս.
Կէնա դառնանք մենք ի Պօլիս:

ԿԴ

Հողն ի Մասիս ,
Փողն Ազուլիս,
Խօսքն ի Պօլիս ,
Սուտն ի Թիֆլիս :

ԿԵ

Ըստամպօլն Հոռմըստանի
Փայծաղն է, լաւ են ասած·
Որքան Ըստամպօլն ուռչի՝
Հոռմըստան կըլլի վասած :

ԿԶ

Մըսըր գընաս՝ շատ մի մընար,
Թէ մնացիր՝ վեր մի գընար.
Մըսրի մէջ աշխարհք մի մտնար,
Եթէ մըտար՝ մի ամըչնար :

ԿԷ

Ասիա, օրհնեալ աշխարհ,
Դրախտ էիր՝ մորս դարձար.
Դու նորէն դրախտ կուդառնաս
Երբ անցնի մէկ երկու դար:

ԿԸ

Ա՛խ Եւրոպէ Եւրոպէ,
Արքմունս ես ամէն րոպէ.
Խելք՝ ուսում՝ զէնք ու արհեստ,
Ծաղկեցնես ամէն րոպէ:

ԿԹ

Ո՛վ Աֆրիկէ սեւ երես,
Մինչեւ ցերբ ամօթ կրես.
Քանանու բռունցերէն ես,
Թէ գազան մարդակեր ես:

Հ

Ամերիկա նոր աշխարհ,
Եւրոպիոյ քուր աղբար.
Զորս հարիւր տարուանըս մէջ,
Ի՞նչ էիր ու ինչ եղար:

ՀԱ.

Մերկանանչըմին լուացվան կլինէր
Թէ Հայրն աղ՝
Քուրդը հացախ՝
Հոռոմը եղ չը լինէր :

# Ե

## ԱՄՕԹ ԵՒ ԱՆԱՄՕԹՈՒԹԻՒՆ

—

ՀԲ.

Էշ հեծնիլը ամօթ է. —
Ամօթ է, բայց մէկ ամօթ.
Էշէն իջնիլն ամօթ է. —
Եւ ինչպէս, երկու ամօթ :

ՀԳ.

Իշիցը վար է ընկել,
Զօշօշը դեռ չի թողուր.
Ձիւիցը վեր է ելել,
Փիս կ՚անէ առոր անոր :

**ՀԴ**

Անէրէսին էրէս թըքիր, —
Կ'ասէ թէ անձրեւ կը գայ.
Ասես, ամօթ է՝ քեզ քաշիր, —
Կ'ասէ, ամօթն ինչ է քմ։

**ՀԵ**

Ցուցանք է կին լիրբ ու յանդուգ.
Թէ խրնդալիս՝ թէ լալիս.
Անէրէսին էրեսը թուք,
Կ'ասէ՝ անձրեւ է գալիս։

## Զ

### ԱՇԽԱՏԱՆՔ ԵՒ ԾՈՒԼՈՒԹԻՒՆ

**ՀԶ**

Բաւական ժամանակով
Եւ անխոնջ աշխատանքով
Ազոխն եղաւ քաղցր բսպաս,
Թուքի տէրեւըն կերպաս։

ՀԷ

Ո՞վ կը դատի աշխատաւոր ,
Եւ ո՛վ կուտի աղւոր աղւոր.—
Ասել են՝ սուտ կա՛մ թէ իրաւ,
Խեւին հացը խելօքին փոր :

ՀԸ

Հերի՛ք դատիս, ո՛վ մարիկ , —
Սեւին սապոնն ի՛նչ անէ.
Հերի՛ք խօսեցար, հա՛րիկ ,
Խեւին խըրատն ի՛նչ անէ :

ՀԹ

Պարի մէջ պէտք է պարես ,
Բաղանիքը քըրտընիս·
Ջաղացքը որ մըտեր ես ,
Ինչ՞ զարմանք՝ թէ ճերմըկիս :

Ձ

Աշխատեցանք աշխատեցանք ,
Սուտ աշխարհիս զուր դատեցանք.
Տընկեցինք ծառ ու ծաղկունք ,
Մացառներէ պատառուեցանք :

ՁԱ.

Ես դիզեցի դիզեցի ,
Օտարներու ծրգեցի ·
Ինքըս քաղցած ապրեցայ,
Մերկ գերեզմանն գընացի :

ՁԲ

Կ'աշխատէի խեղճ իշուկը ,
Կը պարծի մեր գիժուկը [1]) ·
Գիժուկը ձի է՝ Ծիկար ,
Դու տես իշուն խըշխըշուկը :

ՁԳ

Դաշտում քարոզ տըւողը
Ձայնը ի զուր կորսընէ ·
Տաշտում խոզ լըւացողը
Սապոնն ի զուր կորսընէ:

ՁԴ

Ես այն մարդուն կ'ասեմ յիմար
Որ հող կանէ այլոց համար,
Մինչ ուրիշները չեն գիտեր՝
Կա՞յ թէ չըկայ նա յայս աշխարհ :

---

[1]) Գիժ, գիժուկ . խենդուկ։

ՁԵ

Ես ալիւրս մաղեցի ,
Մաղըս պատէն կախեցի ·
Իմ նետերըս նետեցի,
Աղեղս մէկդի ձըգեցի :

ՁԶ

Խարբալով ջուր մի կըրեր ,
Ջըրին դէմ թի մի քաշեր ·
Երկընքին սիւն դրնելու
Ջուր տեղը սիրտ մի մաշեր :

ՁԷ

Ուղտին հարցին սարի ծորին ո՞րն է լաւ.
Ասաց. աղա՝ *նայլա՛ք* սարի՝ ծորին ալ
Մեզի դուրան դաշտըն է լաւ ,
Այն օրհնածն էլ չի՛ լմընալ :

ՁԸ

Ալիւրը մենք մաղեցինք ,
Նայէ զաքան ո՛վ կերաւ ·
Խըմորը մենք շաղուեցինք,
Տես *փախլաւան* ո՛վ կերաւ:

ՁԹ

Էջը հարսնիք են ձէնել,
Ա՛խ արել է իշուկը,
Կամ փայտ կամ ջուր է պակսել.
Հարկիք է խրթխրթուկը:

Դ

Անտակ ամպար,
Դատարկ խալվար,
Հա՛մ չափէ ու հա՛մ չափէ,
Այդ ազգէն խէր չես տեսնար:

ԴԱ

Անտուած սարը կը տեսնէ,
Յետոյ ձիւնը կը դրնէ,
Մարդ եղիր դու մարդու պէս,
Տէրդ գործի կը դրնէ:

ԴԲ

Աշխատանքը *սափա* է,
Պարապ կեանքը *ճափա* է.
Հոգին կրակ է՝ գործը փայտ,
Փայտ դիր վրան՝ վառ պահէ:

ԿԳ

Ձեան վրայ սահիլ
Թէ սիրես սիրէ,
Սահնակն [1]) ալ սայլիր՝
Դէպ ի վեր կրէ։

ԿԴ

Որսի կերթայ,
Առանց որսի տուն կուգայ,
Գիրք կը կարդայ,
Խելք չըսովրած տուն կուգայ։

ԿԵ

Ծառին վրայ նառ կը բուսնի՝
Եւ ոչ թէ *նառ շարապի*·
Արտումը սիսեռ կը բուսնի
Ոչ թէ Թուրքի *շապշապի*։

ԿԶ

Իմաստունը առտուն հընձեց,
Ցիմարն իրիկուան ըսպասեց·
Նա իւր ամպարը լըքցըրեց,
Սահասկաքաղ ելաւ՝ բան չհաւաքեց։

1) Գըզաք, չանա։

Դէ

Հաւատարիմ ծառայ կուզես՝
Տիրասէր՝ չուտ ու արթուն.—
Դըժուար թէ լաւը գըտնես.
Մէկ հատ մի կայ, որ ես դուն:

Դը

Բանն ո՞վ անէ,—
Ես ու դուն.—
Հացն ո՞վ ուտէ,—
Ես ու դուն:

Դթ

Ամէն բանի մէջ չափ կայ,
Ամէն մարդոց մէջ կարգ կայ.
Ես աղա, դուն աղա,
Հապա ցորենն ո՞վ աղայ:

Ծ

Սըխտոր տընկեց՝ վրան բըքեց,
Ըսաց՝ այսքանը բաւ է.
Սըխտորը թէ չորացաւ,
Ըսա՝ մեղաւորն ո՞վ է:

ԾԱ.

Նա *Սիմ* չասած՝ Սիմաւոն հասկըցիր,
Նա *Գար* չասած՝ Գարաւոն հասկըցիր.
Ձուսը սոված չի մընար,
Եղբայր, ալ դուն հասկըցիր։

ԾԲ.

Հաց տըւէք՝ ուտէ,
Ջուր տըւէք խըմէ,
Ծածկեցէք քընէ,
Պահպանեցէք՝ հոգին չելնէ։

ԾԳ.

Պարտէզը բէ դարմանես՝
Կը ծըլի ու կը ծաղկի,
Երեսի վըրայ թողնես՝
Փուշ ու տատասկ կը ծածկի։

ԾԴ.

Մանուկն ինչո՞վ բան կըլլի. —
Զըրով՝ բէ տան տըրոռման—.
Ջուր չը տեսած՝ բան կըլլի
Քո մանուկն սիրտըդ միայն։

ԾԵ

Ձմեռը բաղնեպան դառնաս ,
Ամառն այգեպան դառնաս ,
Ղարաբաղումը վարդապետ ,
Վանքումը վանապան դառնաս :

ԾԶ

Մահն ամենուս համար է ,
Պատրաստ եղիր յարաժամ.
Բայց հերկ արա՝ ցանք արա
Որ չը մեռնիս տարաժամ :

ԾԷ

Պարապ կ'երեւիմ՝ պարապ չեմ ,
Գործի վրայ կը մտածեմ ,
Մինակ կ'երեւիմ՝ մինակ չեմ ,
Մտքիս հետ զրոյց կ'անեմ :

ԾԸ

Դրկիցդ *փիլաւ* է ուտում ,
Դու միտ *շիլա*, — ընչի՞ցն է. —
Դու պառկած էիր *այվանում* ,
Նա արտումն էր, անտիցն է :

**ԾԹ**

Ծոյլը ծախելու է հաներ
Եզներըն ու արօրները·
Աշխատասէրը դուրս բերեր
Այգու գինին ու բերքերը:

**ԾԺ**

Ո՞ր բանալին ցոլուն է. —
Որ ամենէն շատ կը բանի. —
Ո՞ր մարդը սիրուն փայլուն է, —
Որ ծուլութեան ժանկը չունի:

---

## Է

## ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՄՈԼՈՒԹԻՒՆ

---

**ԾԺԱ**

Առաքինին թէ չունայ
Արդարանալ յայսմ աշխարհի,
Կը ցածնայ, Նուաստանայ,
Վատերուն կը հաւասարի:

ՃԺԲ

Թէ սարի քար մի դըպաւ,
Ու ճաքեցուց ոսկի թաս,
Ոչ էն քարն արժէք առաւ՝
Ոչ թասի գինն եղաւ պակաս:

ՃԺԳ

Սըխտոր չեմ կերած
Որ բերանս հոտի.
Յանցանք չեմ արած
Որ խիղճըս տանջի :

ՃԺԴ

Խըղճմըտանքիդ աչքը սըրբիր ,
Իրկունն այնպէս աչքըդ փակիր,
Տես թէ ինչ լաւ լաւ երազներ
Կը տեսնես դուն ամէն գիշեր :

ՃԺԵ

Երուսաղէմ շուն չիկա՛յ·
Էջմիածին ձիուն չիկա՛յ·
Սուրբ Կարապետ Քուրդ չիկա՛յ·—
Էնտո՛ւր ուխտաւոր չիկայ:

ՃԺԶ

Կրակն որ Աստուած վառէ՝
Մարդըս մարել չէ կարող.
Ճրագն որ Աստուած մարէ՝
Մարդըս վառել չէ կարող:

ՃԺԷ

Հոգեւորըն ու մարմնաւոր
Մի բաժաներ ուրախ օրէդ.
Տաճկին առակը միտքդ բեր,
*Համ զիարէթ՝ համ թիճարէթ*:

ՃԺԸ

Ամէն ապրանք մէկմէկ գին,
Միայն հոգին է անգին.
Ո՛վ մարդ, նայէ որ հոգաս
Նախ հոգին, յետոյ մարմին:

ՃԺԹ

Ով որ ասաց
Աստուա՛ծ Աստուած,
Նա մէկ բանէ
Զուրկ չը մնաց:

ԾԻ

Մինչեւ երկինքըն չորոտայ՝
Աչքը երկինք չը վերացայ·
Մինչեւ երկիրըս չը դողայ՝
Ժամ պատարագ մըտքէ չանցայ:

ԾԻԱ

Այսօր զըտնեմ՝ այսօր կուտեմ,
Աստուած ողորմած է վաղը·
Սուտ աշխարհիս ցաւը գիտեմ,
Այս օրը լաւ է քանց վաղը :

ԾԻԲ

Բանըդ գործըդ կարգի դիր,
Նայէ որ չըղալտենաս·
Թէ ղալտեցար՝ ձայնդ քաշիր,
Աստուծոյ դէմ զո՛ւր տժգոհաս :

ԾԻԳ

Հեռու կեցիր դու այն մարդէն
Որ սուրբը պիղծ կ'անուանէ,
Կը փախչի աղօթքին շատէն
Ու քիչը ոչ երբէք կ'անէ :

ԺԴ

Մայտաղի մըսով
Շուն չը գիրանար.
Ժամնու փողերով
Մարդ չը մեծանար:

ԺԻԵ

Ասուած որ մէկուն տայ ,
Բայց որդի՝ առաջ զնա ,
Այնպիսին հանց կուվազէ
Որ բռչունն ռւր կը մընայ :

ԺԻԶ

Թէ խորանը մոմ վառես ,
Աստուած մեղրամոմ կուտայ.
Թէ դուն նըրազու վառես՝
Ճըրազու չըտայ՝ ինչ տայ :

ԺԻԷ

Բառսուն տարին միանգամ
Ասի՝ աղօրքի կենամ.
Այն ալ դիւանք չեն թողուր,
Ասոր տաս կը զարմանամ :

ՃԻԸ

Ինչ որ Աստուած կը կանգնէ՝
Մարդիկ քանդել չէ կարող.
Ինչ որ Աստուած կը քանդէ՝
Մարդիկ կանգնել չէ կարող:

ՃԻԹ

Այն մարդն որ հոգի ունի՝
Ի հարկէ հոգ մի ունի՝
Այն մարդուն մարդ չեմ ասեր
Որ հոգուն հոգ մի չունի:

ՃԼ

Բարձր տեղէդ վար նայէ,
Փառք տուր քեզ վեր դընողին.
Թէ վարն ես՝ ա՛լ վար նայէ,
Փառք տուր քեզ վեր բռնողին:

ՃԼԱ

Աստուած որ զրկուի մէկէն,
Առաջ խելքը կառնէ գլխէն,
Յետոյ կայքը կառնէ ձեռքէն,
Հուսկ յետոյ հոգին բերնէն:

ՃԼԲ

Մեծին գըլուխ չիծըռողը
Աստուածապաշտ եմ չասէ.
Աստուածապաշտ չեղողը
Ես բարի մարդ եմ չասէ:

ՃԼԳ

Սուտ աշխարհիս ո՛ւմն է բաժին.—
Աներեսին՝ անհոգին.
Անտէնի փառքն ո՛ւմ է բաժին.—
Որոյ հոգն է միայն հոգին :

ՃԼԴ

Աստուծոյ պահած գառը
Գէլը չի ուտել՝ եղբայր.
Ահա էս է պատճառը
Որ Հայը չիկորիլ՝ եղբայր :

ՃԼԵ

Աստուած իւր ծառային դէմ
Չի՛ փակեր իւր դըռնակը ,
Մինչեւ ծառան Աստուծոյ դէմ
Չըդարձընէ կըռնակը :

ՃԼԶ

Ասուած աչքիդ առաջէն
Թռնիր գընա շիփ-շիտակ,
Մի հոգար թէ քո ետեւէն
Ո՛վ կուգայ քեզ հակառակ:

ՃԼԷ

Աշխատէ՝ կը կըշտանաս·
Աղօթէ՝ կը սըրբանաս·
Համբերէ մինչեւ իսպառ,
Արքայութեան վարձ կըստանաս:

ՃԼԸ

Եկեղեցին հեռու չէ,
Բայց ճանապարհը սառոյց է,
Խահուէխանէն շատ հեռու է,
Բայց ինչ անես, գընալու է:

ՃԼԹ

Մարդ երկու հեղ չը մեռնիր·
Երկուքը շատ կը լինի·
Բայց մէկ մահէն չ՛ազատիր,
Թող անոր պատրաստ լինի:

**ԾԽ**

Երեք կերպ մարդն է Աստուծոյ ատելի
Աղքատ հպարտ՝ որ հարստի պէս վարուի
Հարուստ ագահ՝ որ աղքտի պէս ապրի
Տէր հեշտասէր՝ որ ալիքէն չամաչի:

**ԾԽԱ**

Այն մոլութիւնն որ ծըծեց
Երեխան հետ մօր կաթին,
Չե՛լներ, ո՛չ, զուր կը ծեծես,
Մինչեւ որ չելնէ հոգին:

**ԾԽԲ**

Ջրի ամանն՝ ջրի ճամբան,
Թիթեռնիկըն ճրագի *ղուրպան*.
Ե՛տ կացիր մեղաց ո՛վ մարդ,
Մատաղ կ'երթաս այդ մոլութեան:

**ԾԽԳ**

Վա՛յ թէ ո՛րքան նըման են.
Երկու մարմին՝ մի *ջան* են.
Գիտեմ, էն շունն էն շանէն,
Երկուքն էլ են մին տանէն:

ՃԽԴ

Քառսուն տարին միանգամ
Ասի՝ զողութեան գընամ.
Լուսինն ալ իր կուրնէ
Ծագեց որ զիս խաղք անէ:

ՃԽԵ

Անհաստատ մարդուն համար
Ամէն տեղ գործ կը պակասի .
Մի՛ լինիր գլորուող քար ,
Ձես լինիր հիմ դարպասի :

ՃԽԶ

Յանցանք արիր՝ խաբուեցար ,
Քեզ մեղադրիր՝ ո՛վ եղբայր.
Ով որ ինքնիրեն ընկնի՝
Կ'ասեն՝ պէտք չէ լաց լինի :

ՃԽԷ

Արդէն շիլ էր՝ աչքը ծուռ ,
Մեղուն կրծեց՝ կուրացաւ .
Արդէն գիժ էր՝ միտքը ծուռ ,
Հաւատք օրէնք ուրացաւ :

ՃԽԸ

Լաւ է մարդ անքուն մընայ
Քան թէ ահեղ երազ տեսնայ.
Հանգիստ ու գոհ սիրտ ունեցիր,
Փառքն ու պատիւ տեղը մընայ:

ՃԽԹ

Չեկար՝ չեկար, դո՛ւ գիտես.
Որ եկար՝ ինչի՞ դառնաս.
Միթէ քամին ուսկի՞ց փըչէ
Դուն ալ անդին պէտք է դառնաս:

ՃԾ

Տընաքանդը տուն չո՛ւնենար,
Չարսիրտ մարդը քուն չո՛ւնենար.
Նեղսիրտ մարդը գոյն չո՛ւնենար,
Չարը լաւ անուն չո՛ւնենար:

ՃԾԱ

Չարին բերնումը յիշոց,
Սըրտումը կըրակ ու բոց.
Կարելի՞ է որ չըլինի
Ճակտումը մէկ երկու խոց:

ՃԾԲ

Անըզգամին տեղ չըկայ,
Ո՛ւր տեղ նըստի՝ նեղ կուգայ,
Անմեղին ամէն նեղութիւն
Իբրեւ մեղր ու եղ կուգայ:

ՃԾԳ

Գայլը մըշուշ օդ կուզէ,
Ձարը խըռով սիրտ կուզէ·
Քըրդին օդը միշտ մըշուշ,
Սիրտը կըռիւ կը յուզէ:

ՃԾԴ

Ժամանակով ձուագողը [1])
Մեծ ձիագող եղեր է·
*Հախ* ու *նահախ* հաց ուտողը
Մեծ *հախ* ուտող եղեր է:

ՃԾԵ

Թէ Աստուծոյ մարդ չես եղեր,
Սատանի մարդ մի՛ լինիր·
Թէ դըժոխքէն մարդ չես խըլեր,
Դըժոխքը մարդ մի՛ տանիր:

---

1) Յու՝ հաւկիթ գողցող:

ՃԾԶ

Գաղտնիքը գաղտ պահողին
Աչքի՛ մընա՛յ ասացին.
Գաղտնիքը դուրս հանողին
Կորի՛ գընա՛ ասացին:

ՃԾԷ

Կուզը երբ կըշըտկըւի. —
Երբ ի գերեզման մըտնի.
Ջարը երբ կըշըտկըւի. —
Երբոր գաւազան ուտի:

ՃԾԸ

Ոսկի արծաթ ու ճավահիր մսխեցիր,
Զաղքասացար այնքան՝ ո՛րդի.
Երբ ժամանակդ ու պատիւդ մսխեցիր
Եղար մին անառակ որդի:

ՃԾԹ

Էծն որ մի հետ ցեխն ընկաւ՝
Էլ դէնը [1]) չի՛ անց կենար.
Դուն էծ չէիր խօ, — ինչ եղաւ
Որ նոյն ցեխը նորէն ընկար:

1) Նորէն անդին։

# Ը

## ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՆԻՐԱՒՈՒԹԻՒՆ

---

**ԾԿ**

Ինչ որ անես՝ զայն կը գտնես,
Ինչ որ ցանես՝ զայն կը հընձես.
Աշխարհիս բանն այս է, Խիկար,
Թէ հոս չառիր՝ հոն կը գտնես:

**ԾԿԱ**

Խօսքը տեղը թող գընայ,
Հոգիս քեզ մատաղ կենայ.
Ոչ իրաւունք ես մընայ,
Եւ ոչ քո *խաթրը* մընայ:

**ԾԿԲ**

Գայլերն որ իրար ուտեն՝
Ոչխարները շունչ կառնուն.
Չարերն որ իրար ջարդեն՝
Արդարները թեւ կառնուն:

ՃԿԳ

Ձին իմս է՝ իջիր,
Տունն իմս է՝ ելիր.
Վարձքս վըճարիր,
Ու գընա կորիր:

ՃԿԴ

Բռնութիւնը դըռնէն մըտաւ,
Խըզեց խըլեց ինչ որ գըտաւ.
Արդարութիւնն ինչ անէր, —
Երդից ծակէն դուրս փախաւ:

ՃԿԵ

Հալալ մարդը մազ դառնայ՝
Ոչ փըրթի՝ ոչ կը կըտրի.
Հարամ մարդը գերան դառնայ՝
Պըտկի նըման կը կոտրի:

ՃԿԶ

Վանքերումը՝ թէ՛ իմն է եւ թէ քոնը.
Աշխարհքումը՝ էս իմն է եւ էն քոնը.
Բայց շիտակըն թէ նայիս՝
Սուտ աշխըրհի բան ո՛չ իմն է ո՛չ քոնը:

**ԾԿԷ**

Մինչեւ որ հաստը լըղարի՝
Լըղարի հոգին կը քաղուի.
Մինչեւ որ չարը չարչարի՝
Արդարն ի հող կը թաղուի:

**ԾԿԸ**

Յետ Աստուծոյ ո՞վ է արդար. —
Ժամանա՛կը՝ ասաց Խիկար.
Ժամանակըն ամէն բանին
Կ'անէ իւր հատուցումն արդար:

**ԾԿԹ**

Անէծքն ու օրհնութիւնը
Երկու բերանի բուր է,
*Համ* դէսն է կըտրում *համ* դէնը.
Եթէ արդար չէ՝ զուր է:

**ԾՀ**

Ո՞վ կը ծըծէ իւղին լաւը.
—Բըռնաւորին *փիշաւը*.
Ո՞վ կուտէ պըտղին լաւը.
— Անտառի արջն՝ անիրաւը:

ՃՀԱ.

Նոքա առին՝ մենք տուինք ,
Նոքա առին՝ մենք տուինք .
Նոքա մեռան գընացին ,
Մենք տըս տըկլոր մընացինք :

ՃՀԲ.

Հիներն ասին՝ առ ու տուր ,
Նորերն ասեն՝ տուր եւ առ .
Տէրտէրք ասեն՝ տուր ու տուր,
Խիկարն ասէ՝ առ ու առ :

ՃՀԳ.

Դատարանը կայ՝ դատաւոր չըկայ,
Դատաստանըդ ո՞վ տեսնայ .
Ժողովուրդը կայ՝ գըլխաւոր չըկայ,
Հա՛յ ազգ՝ բանըդ ո՞վ տեսնայ :

ՃՀԴ.

Աշխարհիս մէջ՝ ա՛յ եղբայր ,
Խառն է միշտ չարըն ու բարի .
Ուրեմըն մի՛ զարմանար
Որ չարին հետ թացն ալ կ'այրի :

ԾԺԵ

Թէ որ զանգակդ իշխանէն է՝
Թագաւորին հասած լինի.
Թէ դատախազըդ տանէն է,
Դատաւորըդ Աստուած լինի:

ԾԺԶ

Մէկ մի ոտից տեղ անեմ,
Տեսնես քեզիկ ինչ անեմ.
Վըրադ սրտս մի գտնեմ,
Իսկոյն մահապարտ անեմ:

ԾԺԷ

Լոկ բըրինձը *փիլաւ* չըլնիր,
Եղը առանց ու յաւ պիտի.
Հայի խօսքըն իրաւ չըլնիր,
Քըրդին առանց փող տալ պիտի:

ԾԺԸ

Թուրքը բէկութիւն առաւ,
Հաւատք օրէնք մոռացաւ.
Մըռնեց իւր հայրը կախեց,
Արդար մարդու անուն առաւ:

ՃՀԹ.

Փըտտած կոտըրտած նաւին
Ամէն քամի ներհակ է.
Մուրացկան՝ անիրաւին
Ամէն մարդ հակառակ է :

ՃՁ

Կախաղան ելնել կուզե՞ս , —
Թագաւորէն բան գողցիր.
Դըժոխքը իջնել կուզե՞ս , —
Եկեղեցուց բան գողցիր :

ՃՁԱ.

Անտառներու մէջ
Գայլք եւ աղուեսունք ,
Գաւառներու մէջ
Գողք ու վաշխառուք :

ՃՁԲ

Ցոպոպն ինքը հոտած է ,
Կ'ասէ թէ բոյնն է հոտած.
Ծանծաղն ինքը փըտած է ,
Կ'ասէ՝ Հայ ազգն է փըտած :

# Թ

## ԲԱՂԴ ԵՒ ԴԺԲԱՂԴՈՒԹԻՒՆ

---

ՃՁԳ

Ի՞նչ ասեմ քեզ, ո՜վ կոյր բաղդ,
Սա ցեխ նըստի՝ նա ի *բա՛խտ*·
Սա կուտի մեղր ու կարագ,
Նա կը հոտի սոխ ու քաղք :

ՃՁԴ

Թէ որ մարդըս բաղդ ունի,
Բաղդը պաղտատէն կուգայ·
Թէ որ մարդըս բաղդ չունի,
Հացը քըթէն բերնէն գայ :

ՃՁԵ

Բաղդ կայ՝ փորձանք կուբերէ,
Փորձանք կայ՝ բաղդ կուբերէ.
Սիրեմ ես այն փոքրիկ
Որ ինծի *բախտ* կուբերէ :

ՃՁԶ

Բա՛ղդն է կոյրը՝ թէ մարդիկ
Որ բաղդի յարգ չեն գիտեր.
Բաղդն որ լեզու ունենար՝
Շատ մարդէ գանգատ կանէր:

ՃՁԷ

Թէ *ճարտ* ունիս՝
Բաղդըդ ե՛րբ լինի կուգայ.
Թէ բաղդ չունիս՝
*Ճարտըդ* ինչ բանի կուգայ:

ՃՁԸ

Էշն ընկաւ յանկարծ
Գարիի հորը,
Էս լաւ է ասաց
Քանց իմ ախոռը:

ՃՁԹ

Բըռնիր բաղդին մազերէն,
Ու թօթվէ ատեն ատեն.
Թէ չէ՝ քու ձեռքդ կը թօթվէ,
Կը փախչի հեռու քեզնէն:

ՃԴ.

Եղբայր՝ թէ քո գըլուխըդ
Խելօք է՝ տինն ու բարի,
Ի՛նչ բարձ ալ դընէ բարձըդ՝
Քո գըլխուն կը յարմարի:

ՃԴ.Ա.

Բաղդաւորին
Աքլորն ալ ձու կը բերէ.
Տարաբաղդին
Զատիկն ալ ձիւն կը բերէ:

ՃԴ.Բ.

Բաղդի *քարվանսարային*
Դուռը ցած է՝ ա՛յ եղբայր.
Ցածուցիր նըման ուղտին,
Կը մըտնես հարուստ *պալատ*:

ՃԴ.Գ.

Աստուած *փըլաւն* ո՛ւմ է տըւեր,
*Իշտահն* ո՛ւմ.
Փողն ու գոհարն ո՛ւմ է տըւեր,
*Հունարն* [1]) ո՛ւմ:

---

1) Հիւնէր:

ՃԴԴ

Քամիին բերածը
Քամին կը տանի.
Սատանին կրածը
Սատանան կառնի:

ՃԴԵ

Ուղտին ասին, աչքդ լուս,
Քեզի քոռակ մի եկաւ.
Ասաց. ինչ անեմ աչքիլուսն
Որ բեռն ինձնից վար չ'եկաւ:

ՃԴԶ

Մինչեւ սայլդ չըշըրջես,
Կ'ասեն՝ ճամբան չեն շըտկեր. —
Ազգը քանի սայլեր ջարդեց,
Մեր ճամբան ո՞վ է շըտկեր:

ՃԴԷ

Վաղ վեր կենաս՝ ինչ օգուտ, —
Ասուած յաջողած պիտի.
Տան բէ փրռես՝ ինչ օգուտ, —
Տանըդ հաւաքած պիտի:

**ՃՂԸ**

Քանի երկաթը տաք է՝
Կը ծեծեն՝ ձեւի կուտան.
Քանի թոնիրը տաք է՝
Հացն անոր քովին կուտան :

**ՃՂԹ**

Գինին գինովի ձեռին,
Թըռչունը տըղի ձեռին,
Փողը շըռայլի ձեռին,
Մեր Հայը Քըրդի ձեռին :

**Մ**

Առողջութիւն մարմնաւոր,
Հանգըստութիւն հոգեւոր,
Հարըստութիւն չափաւոր,
Բարեկամք անկեղծաւոր :

**ՄԱ**

Մեր տըղան որ տաք կաթէն
Խարշատեց էրից բերան.
Հիմի պաղ ջուր էլ բերեն՝
Սաստիկ կը փըչէ վըրան :

**ՄԲ**

Եկաւ փորձանքը ,—
Ամէն սուրբ Թորոս.
Անցաւ վըտանգը , —
Մոռցանք սուրբ Թորոս:

**ՄԳ**

Պապի՝ զող մի բըռնեցի·—
Ո՛րդի՝ Ներս բեր.— Ներս չի՛գար·—
Ուրեմըն դո՛ւն ներս արի·—
*Եախայ*իցըս վար չի՛գար :

**ՄԴ**

Կանքնումն ամէն օր
Մատաղ չիլինիլ ,
Տէրտէրն ամէն օր
Դաքա չի ուտիլ :

**ՄԵ**

Քարն ուրիշ՝ շաքարն ուրիշ·
Քուրն ուրիշ՝ աղբարն ուրիշ.
Տէրն ուրիշ՝ տէրտէրն ուրիշ·
Ձերն ուրիշ՝ մեր *տէրտէ՛ն* ուրիշ :

**ՄԶ**

Քանի փործանք ու տառապանք։
Ինչե՛ր անցան մեր գլխէն.
Ասեն անցաւ՝ մենք չիմացանք,
Ուղտեր անցան շարմաղէն։

**ՄԷ**

Ուխէն անցայ՝ հոգն ընկայ,
Մուխէն անցայ՝ հուրն ընկայ,
Անձրեւէն փախչիմ ասի՝
Կարկուտէ բռնուեցայ։

**ՄԸ**

Բաղդը կացինը ձեռք առեր
Կեանքիս ճիւղերը կտրատեց նեղօրիս
Ո՛վ բարեկամք իմ լաւ օրիս,
Օգնեցէք ինձ այս նեղ օրիս։

**ՄԹ**

*Տումանը* մեծ սարին գլխէն,
*Տուշմանը* արդարին գլխէն,
Ե՞րբ պակաս եղած ունի
*Հրամանը* գերւոյն գլխէն։

**ՄԺ**

Ծեծն ու պատիժ մէրը[1] կուտայ,
Ցետոյ կուտայ համբուրիկը.
Ցաւն ու փորձանք Տէրը կուտայ,
Հետը կուտայ եւ ճարիկը:

**ՄԺԱ**

Ծրնճղուկը կուտ որ գտնէ,
Իւր ձագին ճարակ կ'անէ.
Կընտակը ձութ որ գըտնէ,
Իւր գըլխին ճարակ կ'անէ:

**ՄԺԲ**

Մէկուն աղուհաց,
Միւսին է զատիկ.
Մէկուն ողբ ու լաց,
Միւսինը տըռտինկ:

**ՄԺԳ**

Մեղր ու շաքար ո՞վ կուտի.—
Ով որ երկայն մա՞ս ունի.—
Ոչ եղբայր, չը հաւատա՛մ.
Այլ ով որ *ղըամաթ* ունի:

1) Մայր:

ՄԺԳ

Փորձանք չիգար մարդուս գլխին,
Թէ նախասումը չէ գրուած.
Պատիժ չիգար մարդուս գլխին՝
Թէ բարքն ու վարք չէ խանգարուած:

ՄԺԵ

Ոսկին փորձը *մահանն*,
Մարդուն *մահանը* փորձանք.
Մի վախնար քէ կը մաշուիս,
Կը մաշուի քո աղտն ու ժանկ:

ՄԺԶ

Ամէն դարմերն իրեն համար
Ունի երեք մի դարիվար.
Ամէն դիւրինն իրեն համար
Ունի նաեւ մաս մի դըժուար:

ՄԺԷ

Աշխարհս է բախդ ու փորձանք.
Մի սուեր ոչխարի պէս,
Նա մորթուեցաւ՝ մեզ պըրծանք.
— Այսօր ինձ էր՝ վաղը քեզ:

**ՄԺԸ**

Ղարիպը կեցաւ ու նայեց
Աշխարհիս *մաշին մէղաշին*,
Ա՛խ ասաց. եղբայր՝ ինչ ասեմ
Իմ *հաշին*՝ քո տըռտիկ տալին :

**ՄԺԹ**

Անձրեւէն փախանք պըրծանք՝
Կարկըտի բըռնըւեցանք.
Չարակամէն ազատեցանք,
Բարեկամէն մատնըւեցանք :

**ՄԻ**

Ես կաթ մի ջրի եմ կարօտ
Որ խըմեմ՝ ծառաւս անցնի.
Նա կամըրջի է կարօտ
Որ ջըրէն անդին անցնի :

**ՄԻԱ**

Ամենուն հետ եկած փորձանք
Մարդուս մեծ մըխիթարանք.
Մենակ մարդուն սրած *սէֆան*
*Սէֆա* չէ, դառըն *ճէֆա* :

**ՄԻԲ**

Սուտ աշխարհիս երեսին
Ամէն փորձանք մին խըրատ·
Վերջ չունին՝ վախնան չունին
Ոչ փորձանքն ու ոչ խըրատ:

**ՄԻԳ**

Հաւատարութիւն կը փընտռեն,
Ու այս բանըն էլ չը գիտեն՝
Թէ թըռչուն կայ՝ միսը կուտեն,
Թըռչուն էլ կայ՝ միս կերցընեն:

**ՄԻԴ**

Նեղութիւններ չը ճաշողը
Հանգըստութեան համն ինչ գիտէ·
Ով չը կերաւ մեր մախոխը՝
Զատկի ժամի համն ինչ գիտէ:

**ՄԻԵ**

Ջափըն անցաւ թըշուառութեան,
Կ'ասեն թէ լաւ նըշանակ է·
Կ'երեւի որ հանգըստութեան
Այսուհետեւ ժամանակ է:

**ՄԻԶ**

Ձափն անցաւ հանգրստութեան,
Կասեն թէ վաs նրշանակ է.
Կերեւի որ ննղութեան
Այսուհետեւ ժամանակ է։

**ՄԻԷ**

Մարդուս յաջող ժամանակին
Հազար խըրասբ մէկ բսակ.
Բան թէ հազարներով ոսկին՝
Օգտակար է քեզ մի փորձանք։

**ՄԻԸ**

Քուն կը լինի իրեն համար,
Երազ տեսնի այլոյ համար,
Հայի բանն այս է՝ եղբայր,
Մասաղ գրնալ գայլու համար։

**ՄԻԹ**

Ի՞նչ ես լաց լինում
Թէ այգի [1]) չունի.
Լալուն մեր էշն է
Որ ագի [2]) չունի։

1) Այգի, պտաղ։ | 2) Ագի, պոչ։

Ժ

ԲԱՐԵԿԱՄ ԵՒ ԹՇՆԱՄԻ

ՄԼ

Բարեկամ, սիրեմ ըզքեզ,
Սըրտիս մէջ կըրեմ ըզքեզ.
Ո՛ւր որ գնամ՝ յիշեմ զքեզ,
Մին տերեւ ընծայեմ քեզ:

ՄԼԱ

Հին գինին ջըրհամ չըլնիր.
Հին ճանչւորն անհամ չըլնիր.
Հին բարեկամ երբ եւ իցէ
Սատսիկ բըշնամի չըլնիր:

ՄԼԲ

Սերտ բարեկամ թէ զըտուի՝
Նըմանն գանձ ո՞ւր կը գըտուի.
Որ թէ կրակի մէջ ընկնիս,
Հետըդ կըրակը նետուի:

ՄԼԳ.

Հոգւոյս հոգեկից գըտնէք ,
Սրտիս սրտակից գըտնէք.
Ի՞նչ անեմ պաղ ազգակից,
Ցաւիս ցաւակից գըտնէք :

ՄԼԴ.

Բարեկամըն ինչ որ ըզգայ՝
Լաւ բարեկամն ալ նոյն կըզգայ.
Մի ասեր թէ այդ զարմանք է,
Սրտէ ի սիրտ ճանապարհ կայ :

ՄԼԵ

Սրտիդ ամէն գաղտնիքները
Բարեկամիդ մի՛ հաւատար.
Բարեկամիդ բանն ու գործը
Քու չարկամիդ մի՛ հաւատար :

ՄԼԶ

Լաւ է կէս ճամբէն ետ դառնաս ,
Կամ թէ կորչիս մէկդի գըննաս ,
Քան բարեկամդ ու թըշնամիդ
Իրարու հետ նըստած տեսնաս :

ՄԼԷ

Ամէն բարեւ տրուողը
Քեզ բարեկամ չը կարծես.
Սերտ բարեկամ սաուողը
Գուցէ չարկամ լինի քեզ:

ՄԼԲ

Բան քէ փեսյրուած *փերչամ*,
Լաւ է կոկիկ կեղծամը.
Բան քէ անխելք բարեկամ
Լաւ է խելօք չարկամը:

ՄԼԹ

Թէ բարեկամ ունիս հազար,
Շաs չէ՝ սակա՛ւ, ո՛վ եղբայր.
Մէկ թըշնամի քէ ունեցար,
Քիչ չէ՝ շաs է, ո՛վ եղբայր:

ՄԽ

Բարեկամի հեs սէր արա
*Խաղվարով* ու *խանճարով*.
Հեsն առուsուր ու ծախս արա
Դըրամով ու sըրամով:

**ՄԽԱ.**

Թըշնամի էր, գընաց եկաւ՝
Ինծի բարեկամ դարձաւ.
Բարեկամ էր, չգնաց չեկաւ՝
Ինծի թըշնամի դարձաւ:

**ՄԽԲ**

Սիրեմ ես այն հովանեակը [1])
Հաւատարիմ արքանեակը [2]),
Որ լաւ օդին հեռու կենայ,
Մօտ գայ ի վատ եղանակը:

**ՄԽԳ**

Կասկածելի բարեկամէն
Տէրը փրկէ ազատէ.
Յայտնի *տուշմանէն* չարկամէն
Ես ինքըս պըրծիմ, հոգ չէ:

**ՄԽԴ**

Լաւ է խըմես աղֆատիկ
Բարեկամիդ տունը պա՛ղ ջուր,
Քան թէ հարուստ չարկամիդ
Ապարանումը մեղրաջուր:

---

1) Հովանեակ, *շէմսիյէ, զօնթիք:*
2) Արքանեակ, սպասաւոր, ծառայ:

**ՄԽԵ**

Գըրեանքըդ սակաւ լինին,
Բայց լաւին լաւը լինին·
Բարեկամքդ սակաւ լինին,
Բայց լաւին լաւք լինին :

**ՄԽԶ**

Սուտ բարեկամ
Եւ սուտ ղըրամ·
Ո՛րն ալ ճանաչես կամ գըտնես,
Նայէ որ շո՛ւտ մէկզի թողնես:

**ՄԽԷ**

Քանի մէջտեղն էր սեղան ,
Ամէն մարդ ինձ հարեւան·
Գըլխիս որ փորձանք եկաւ՝
Բոլորն եղան ցիրուցան :

**ՄԽԸ**

Քան թէ հեռու բարեկամ՝
Լաւ է մօտիկ հարեւան·
Քան թէ եղբայր անըզգամ
Լաւ է սըրտանց բարեկամ :

**ՄԽԹ.**

Հացին կապածը բըռով չի կըտրիր.
Միրոյ կապածը ջըրով չի կըտրիր.
Տարիներուն կապածը
Երկու օրով չի կըտրիր :

**ՄԾ.**

Ես փաշա ,
Դուն բոշա.
Բարեկամացանք՝
Հաւասարեցանք :

**ՄԾԱ.**

Մին ըսակ տուր ,
Ծինէ քեզի քո ատելին սիրելի.
Հազար սակ տուր,
Մի չիներ քեզ քո սիրելին ատելի :

**ՄԾԲ**

Բարեկամը մարդու գլխին կընայի,
Իսկ չարկամը մարդուս ոտքին կ'նայի
Խելացին՝ խելքին բարքին ու վարքին
Իսկ յիմարը դըրսի տեսքին կընայի:

**ՄԾԳ**

Աշխատէ, եւ ըսաւ դիզէ,
Թէ դիզեցիր՝ պահէ քովդ·
Թէ մընայ՝ չարկամի մընայ,
Բարեկամի չլինիս կարօտ:

**ՄԾԴ**

Թող ինծնէ հեռի լինի,
Թող Քուրդ բէկին քեռի լինի·
Դըռնէս դուրս *թէք* կորընչի,
Թող դըժոխքին *շէգիր* լինի:

**ՄԾԵ**

Քուն եղած օձին
Մի կոխեր պոչին.
Թմրած չարկամին
Փառք լուռ եղածին:

**ՄԾԶ**

Կապիկին ոտքը այրել է,
Ձագն ոտիցը տակ առել է·
Ի՞նչ զարմանաս որ բարեկամդ
Ցաւին մէջ քեզ մոռացել է:

**ՄԾԷ**

Տիրոջ վերայ ոխ ունի,
Խեղճ ծառայէն կը հանէ.
Իշուն վերայ ոխ ունի,
Նորա քամքէն կը հանէ:

**ՄԾԸ**

Ծառի երեին ծառէն է,
Զար բրճնամին տանէն է.
Վա՜յ այն տոհմին՝ այն ազգին
Որոյ մատնիչն ազգէն է:

**ՄԾԹ**

Ո՜վ բրճնամի բրճնամի,
Ինծի ամիք յաջողա՜կ,
Հացիս կարագ քսեցիր,
Դուն զիս արիր անուանի:

**ՄԿ**

Նախ երեսին մուր քսեց,
Ցետոյ երեսին բրքեց.
Արջը լակոտն ուտել ուզեց,
Առաջ ցեխով պրլրտրկեց:

**ՄԿԱ.**

Լեռը լեռան խըռովեր է ,
Ձեմ գիտեր թէ ինչո՞ւ համար․
Սա էլ ուռեր ու տըկռեր է ,
Միւս լեռը չունի *խապար* :

**ՄԿԲ**

Թէ բըռնամիդ մըրջիւն լինի,
Մեղաւո՞ր ես նէ վախեցիր ,
Թէ բըռնամիդ առիւծ լինի ,
Դուն անմե՞ղ ես, անվախ կացիր:

**ՄԿԳ.**

Հիւր գընաս՝ ուր որ կոչեն ,
Զըկենաս երկար ատեն ,
Հիւրը չախորժիր հիւրէն ,
Տանուտէրն եւ ոչ մէկէն :

**ՄԿԴ.**

Հարսնիք երթաս՝ կուշտ գընա․
Զայն տըւին, անշուշտ գընա.
Թէ կանչ ու ճիչ հանեցին ,
Դըտակդ առ՝ շուտ տուն գընա :

ՄԿԵ

Բարով եկար, Հատուր աղա,
Բայց նըստելու տեղ չըկայ·
Պէտք էր ճըւազեղ եփէինք,
Տապակը ծակ, եղ չըկայ։

ՄԿԶ

Ցիմար շունը գեղէ գեղ
Հիւր կը բերէ օտար շուն·
Ցիմար մարդը դատարկ տեղ
Մարդ կը բերէ իրեն տուն։

ՄԿԷ

Հիւր երթալը կամաւոր·
Տուն դառնալը հարկաւոր·
Գընացիր՝ շատ մի՛ կենար,
Որ լինիս միշտ հարկեւոր։

ՄԿԸ

Հիւրը տանտիրոջ մօտին
Վարդ է՝ կըզմայլի հոտին·
Բայց թէ շատ կենայ մօտը,
Կը թոռմի՝ կերթայ հոտը։

**ՄԿԹ**

Մեզ հիւր եղաւ երկու օրուան ,
*Թէլլալ* դարձաւ խառնուն տարուան.
Աղ ու հացին զօրքը մեծ է,
Թըշնամին կ'անէ հարեւան :

**ՄՀ**

Հիւրը երեք օր կը լինի ,
Չորրորդ օրը *զօռ* կը լինի.
Համը հոտը կը կորսընէ
Կամ չափազանց *շօռ* կը լինի:

**ՄՀԱ**

Թէ հրաւիրեն՝ ել գընա ,
Ջուր տեղը *նազ* մի՛ աներ.
Չը հրաւիրեն՝ մի՛ գընար,
Տեղըդ քե՛զ նեղ մի՛ աներ :

**ՄՀԲ**

Թէ որ քեզ տեղ մի ձայն տըւին ,
Գընա՝ բայց մի՛ տեղաւորիր.
Ուր որ քեզի ձայն չըտըւին,
Ամենեւին մի՛ երեւիր :

ՄՀԳ

Թէ գընացիր մէկին տունը ,
Լաւ նայէ երեսին գոյնը ·
Թէ վար նայեց՝ ձայնը քաշեց,
Ճուտով տուր եսքի ողջոյնը :

ՄՀԴ

Երբուլն երբամ, ինչ անեմ ·
Ներս որ մըտնամ՝ ինչ ասեմ ·
—Մեր տունը հոս կացին բերան ,
Միթէ այս պէտք է հարցընեմ :

ՄՀԵ

Թէ ուրիշին փոս կը փորես ,
Նայէ որ տաս չը խորես ,
Որ երբ դուն մէջը գըլորուիս՝
Ողջ մընաս՝ ողջ դուրս ելնես:

ՄՀԶ

Ուրիշի փոս մի փորեր ,
Գուցէ մէջը դուն ընկնիս ·
Թըռչունին ցանց մի լարեր ,
Գուցէ դո՛ւն կը բըռնըւիս :

**ՄՀԷ**

Ցան ցանէ վարած տեղը,
Բան բանէ չկոռած տեղը·
Թող չերթան ոտուըներըդ
Սըրտիդ չը սիրած տեղը:

**ՄՀԸ**

Խիկար՝ քէ տեսնել ուզես
Թըթու խաղցումեղց երես,
Ճանչուորիդ մօտ շատ գընա,
Շատ նիստ երես առ երեսս:

**ՄՀԹ**

Թէ որ ակռադ փըտտուկ է,
Քաշէ հանէ՝ ազատիր·
Թէ դըրացիդ խենթուկ է,
Քաշուէ քովէն՝ ազատիր:

**ՄԶ**

Թէ ամիսը մէկ մի գաս՝
Կուտես գաթա *փախլաւա*·
Թէ որ օրը մէկ մի գաս՝
Կուտես *քօթակ փաշախա*:

### ՄՁԱ.

Թըշնամիդ է միշտ զօրեղ՝
Քան թէ քո բարեկամըդ·
Թէ թըշնամիդ լինի մէկ,
Քիչ է հինգ բարեկամըդ:

### ՄՁԲ

Կըռուեցանք փողի համար,
Կործանեցանք հողի հաւսար·
Լաւ չէ՞ր որ հաշտըւէինք,
Ապրէինք եղբայրաբար:

### ՄՁԳ.

Հիւրն եկաւ՝ հիւրը գընաց,
Պարպեցաւ մեր քըսակը·
Հիւրն եկաւ՝ հիւրը գընաց,
Աւելն աւլողին ա՛չքը:

### ՄՁԴ.

Տես ի՛նչ կ'ասեմ, ո՛վ քրիստոնեայ,
Բարի՛քն արա, ձըգէ ի ծով·
Ձուկն ի ծովուն թէ չիմանայ,
Վարձըդ կառնուս դուն յԱստուծոյ:

### ՄՁԵ

Չարին չարիք հատուցանել
Փոքրահոգի մարդու բան է.
Չարին բարիք հատուցանել
Մեծահոգի մարդու բան է:

### ՄՁԶ

Անձրեւ օրին հաւին ջուր
Առատ առատ տըւող ճա՛տ.
Կարօտին նեղ օրիդ տուր
Որ վարձք անես շատ ու ճա՛տ:

### ՄՁԷ

Ում որ աղէկութիւն արիր՝
Այն մարդէն ըզգոյշ կեցիր.
Այսպէս է այս աշխարհըս.
Բարիքի տեղն չարի՛ք ըսպասիր:

### ՄՁԸ

Հացագործին հացը կերանք,
Մըսագործին միսը կերանք.
Քեզնէ ինչ բարիք տեսած ենք
Որ քեզի շընորհակալ գանք:

ՄՉԹ.

Մի՛ թըքներ այն չըրհորը,
Խըմեր ես անոր ջուրը.
Որ կուգայ՝ պէտք կը լինի
Նորեն խըմել այն ջուրը:

ՄԴ.

Խորհուրդ մի տամ քեզ՝ Մըղտեսի,
Կուզես մերժէ՝ կուզես արա.
Քանց շինես եօթն եկեղեցի՝
Եօթը որբուկ առ՝ մա՛րդ արա:

ՄԴԱ.

Ո՛վ բարեգործ յուսահաս,
Ա՛ռ ինձնէ քեզի խըրատ.
Քանի որ ազռւն ողջ է՝
Զըգանես կըտաւահաս:

ՄԴԲ.

Հարեւանիդ մի կով ուզի,
Որ Աստուած քեզ երկուսը տայ.
Թէ տընկեցիր մէկ ընկուզի,
Քեզի հազար ընկուզ կուտայ:

ՄՂԳ

Սառած օձին տաքացուր ,
Առաջ ըզքեզ կը կըծի ,
Անըզգամին ջուր խըմցուր ,
Քո երեսին կը թըքի :

ՄՂԴ

Արջը նայեցաւ տանձին ,
Տանձն էր բարձր՝ ծառն ահագին.
Ասաց, սա էլ թող կենայ
Իմ հօրը հոգուն *խակեր*ին :

ՄՂԵ

Վարդապետը թէ թողուց
Աղքատանոց ու դըպրոց ,
Ահա ժառանգ՝ ժառանգութեան
Քանց զաւակ՝ զանձ բիւրք բիւրոց:

ՄՂԶ

Ապերախտներ շատ ես գըտած,
Ամենեւին մի տըժգոհիր·
Յայտնի նըշան մը քեզ համար
Որ լաւութիւն շատ ես արած :

**ՄՂԷ**

Ո՛ր տեղէն որ հաց ես կերել՝
Այն տեղը քար չի ձըգես.
Որ տեղէն որ ջուր ես խըմել՝
Այն տեղը վար չի թըքես :

**ՄՂԸ**

Երբոր ձին հեծաւ՝
ԶԱստուած ուրացաւ.
Ձիէն վար իջաւ,
Ըզձին մոռացաւ :

**ՄՂԹ**

Ուր տեղ որ ձայն տըրուած չես՝
Ինչո՞ւ երթաս դու քեզմէն.
Թէ ջուր կրող՝ հաց բերող չես,
Հոս ինչ բան ունիս կ'ասեն :

**Յ**

Ես բըրդեցի՝ նա կերաւ,
Ես բըրդեցի՝ նա կերաւ.
Ինչքան բըրդածըս ես գիտեմ,
Նա կերաւ ու չըգիտցաւ :

**ՅԱ.**

Սիրտիկ՝ ինչու կը տրտմիս.
Թէ հիւր ես՝ կեր ինչ որ գտնիս.
Թէ չես հաւան դուն այս բանին,
Երբ քաղցենաս՝ կը կակղնաս:

**ՅԲ**

Ոչ նորա ջուրն եմ խմեր,
Ոչ կերակուրն եմ կերեր.
Զը գիտեմ՝ նորա մուխէն
Աչքերս ինչու են կուրցեր:

**ՅԳ.**

Հաւիկը ջուր որ խմէ,
Աչքը երկինք վերցընէ,
Որ փառք տայ ըստեղծողին
Ինձ եւ քեզի սովրեցընէ:

## ԺԱ.

### ԲԱՐԵՐԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՊԵՐԱԽՏՈՒԹԻՒՆ

---

**ՅԴ**

Ագռաւն ինչի՞ կը պահես, —
Որ մի հարցին խիկարայ, —
Ասաց. *ղուրպան* կըտուցին,
Աչքիս հանել պէտք կուգայ :

---

## ԺԲ

### ԲԱՐԿՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԵԶՈՒԹԻՒՆ

---

**ՅԵ**

Ա՛խ, սատանին մին տեսնեմ,
Երեսին լաւ մի թքնեմ. —
Ոչ սատանին տես, եղբայր,
Ոչ էլ երեսին թքիր :

**ԿԶ**

Բարկ քացախն իր ամանին
Կը բերէ կասեն վընաս.
Տէրն հեզո՛ց տայ երանին,
Լայնսիրտ եղիր, ապրիս մնաս:

**ԿԷ**

Ապրուստըս թող լինի քիչ,
*Թէֆ* զըլուխըս լինի *տինճ*.
Ի՞նչ անեմ *մալն* ու *մէլալ*
Երբ տանս է միշտ կանչ ու ճիչ:

**ԿԸ**

Աշխարհըս լայն արձակ է,
Բայց սիրտըս նեղ, ինչ օգուտ.
Ճամբան հանգիստ՝ շիտակ է,
Կօշիկըս նեղ, ինչ օգուտ:

**ԿԹ**

Խենթին հետ ծախսի մի՛ նըստիր,
Ծախսը կըռուի կը փոխէ.
Քըրդին հետ վէճի մի՛ նըստիր,
Վէճը ծեծի կը փոխէ:

ՅԺ.

Թէ կանչելով մարդ տուն շինէր,
Էշն որ հինգ տուն կը շինէր.
Թէ բոռչելով հերկ զարնըւէր,
Եզն որ տասն արտ կը վարէր:

ՅԺԱ.

Թէ զարնես պըտուկ պըտկի,
Մէկը չէ նա՝ միւսը կոտրի.
Թէ չը կոտրի երկուսին մէկ,
Երկուսին մէկը կը ճաքի:

ՅԺԲ.

Քըրդին ասի, ա՜յ աղբար,
Հերիք կըռուիս դեւի պէս.
Ասաց, չե՞ս գիտեր՝ խիկար,
*Չէքիշմէնէ դիէքիշմէզ*:

ՅԺԳ.

Դիր անցընես՝ միշտ կը մընայ,
Դիր չ՚անցընես՝ ո՞ւր կը մընայ.
Կիրքըդ վառուած՝ բան մի՛ գըրեր,
Կիրքըդ կանցնի, գիրդ կըմնայ:

**ՅԺԴ**

Թէ ուժով է՝ ինչու՛ զարնես ,
Ի զուր ձեռքդ կը ցաւի.
Թէ զինով է՝ ինչու՛ զարնես ,
Ինքիրմէ կը կործանի :

**ՅԺԵ**

Ջուրը մինչեւ չը պըղտորի՝
Չը հանդարտիր՝ չը պարզիր ,
Ծովը մինչեւ չը հանդարտի՝
Դէմքդ միջին չերեւիր :

**ՅԺԶ**

Հարբած խելօք խօսածըդ
Օդուն մէջը կը ցրնդի .
Հարբած խելօք գըրածըդ
Դըժոխքին մէջ կարդացուի :

**ՅԺԷ**

Երկու Քուրդը՝ մէկ կարաւան ,
Երկու կին՝ մէկ բընակարան.
Երկու տէրտէրը մէկ խոռան ,
Երկու Հայը մէկ Հայաստան :

### ՑԺԸ

Բարձըր կանչողն ով է՝ խիկար,
Մեր ժամակոչը քէ *մօլլան*.
Ոչ մին եւ ոչ միւսն է՝ եղբայր,
Այլ յանցանքին տէրը միայն։

### ՑԺԹ

Ո՛վ որ չուտս կը բարկանայ
Ու ինքիրմէն դուրս կ'ելնէ,
Քիչ անգամ տուն կըմնայ,
Տաս անգամ իւր տանը չէ։

### ՑԻ

Բարկասրտին ինչ անեմ՝ խիկար.
—Կամ ասածին պատասխան մի տար
Կամ ուզես տուր, բայց խոնարհաբար
Լաւը քէ կուզես՝ մօտը մի կենար։

### ՑԻԱ

Մարդիկ՝ հերիք է հերիք
Երկրնքէն կայծակ առիք,
Մէկըզմէկ կոտորեցիք,
Հող ու մոխիր դարձուցիք։

**ՅԻԲ**

Փոշմանութեան ինչ ասեմ, —
Մեր տէրպապին գովածն է.
Անմեղութիւնը սիրեմ ,
Ըստեղծողիս դըրածն է :

**ՅԻԳ**

Ժանկլէն երկաթը
Կուտուի կը մաշուի·
Հոգէն քաշ մարդը
Սըրտով կը մաշուի :

**ՅԻԴ**

Հըմուկ ձիուն զարկած ոտքը
Ծանր ու զօրեղ կը լինի·
Հեզուկ մարդուն ասած խօսքը
Ծանր ու զօրեզ կը լինի :

## ԺԳ

## ԲՆԱԽՈՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԿՐԹՈՒԹԻՒՆ

---

### ՏԻԵ

Հաւիկի մին թուխսը դըրին,
Տակըն սագի ձուեր դըրին.
Ձագերն ելան՝ ընկան ի ջուր,
Հաւիկը վա՜յ տըւաւ գըլխին:

### ՏԻԶ

Հոգին է մարմնոյն ներքեւ,
Իրնութքն է հոգւոյն ներքեւ.
Մինչեւ հոգին դուրս չըգա՛յ,
Մարդուս բնութք դուրս չի՛գայ:

### ՏԻԷ

Մեր արտին սիսեռն եկեր
*Լապլապի* դարձեր է հոս.
Կառոյին աղբէրն եկեր
*Զալապի* դարձեր է հոս :

**ՅԻԸ**

Օրըն արեւծագէն ,
Տըղան փոքր հասակէն ,
Փորձ մարդիկ ամէն բանը
Առաջուց կը գուշակեն :

**ՅԻԹ**

Նա սարեկը սոխակ կանէ ,
Սա սոխակը սարեկ կանէ.
Կուզե՞ս տըղադ բանի գայ ,
Անո՛ր տուր որ մարդ կ'անէ :

**ՅԼ**

Գառը քերթել թէ չես գիտեր ,
Միսը մորթին հետ կը ջարդես.
Մարդը կըրթել թէ չես գիտեր՝
Հոգւով մարմնով կը կորսընցես :

**ՅԼԱ**

Գըլուխը մեծ՝ մէջը դատարկ ,
Նա չի՛մանար, դու զա՛րկ ու զարկ.
Թէ իմանայ ալ չը՛սորվիր ,
Թէ եւ սորվի՝ մարդ չը՛լինիր :

ՑԼԲ

Տըգետին թէ դաս կուտաս ,
Սոված մարդուն ըսպաս կուտաս,
Մերկ որբին կերպաս կուտաս,
Սատանին մեծ վընաս կուտաս :

ՑԼԳ

Թէ շատ ասես՝ կը լըրբանայ ,
Սոված պահես՝ գող կը դառնայ ·
Երես տուիր՝ աստառ կուզէ ,
Մարդըս դըժուա́ր մարդ կըդառնայ:

ՑԼԴ

Կ'ասեն, թէ Տէրըն չէ տուեր՝
*Փեղամպարըն* ի՞նչ անէ·
Ծեծ շատ կերեր՝ չէ խըրատուեր ,
Հարըն մարըն ի՞նչ անէ :

ՑԼԵ

Աղան որ ձէթ տայ՝
Գոգըդ դէմ արա.
Հարըդ որ փէտ [1]) տայ՝
Կուռըդ [2]) դէմ արա :

---

1) Փայտ, ծեծ ։ | 2) Կուռ , կռնակ։

### ՅԼԶ

Մանկուց դասումն ու ջանքը
Ծերուցը գաւազան է.
Ծերոց խըրատք ու բանքը
Մանկութեան աւազան է :

### ՅԼԷ

Ջըրի ճամբան կը փոխես ,
Վազուածքը չես արգիլեր.
Ազգի ծէսը կը փոխես ,
Բընութիւնը չես յաղթեր :

### ՅԼԸ

Գայլը առին որ կըրթեն ,
Աչքը իծիր մորին էր.
Բուրդը առին որ կըրթեն ,
Աչքը իծիր սարին էր :

### ՅԼԹ

Բարկասիրտ է, սո՛ւր կը նայի.
Կասկածոտ է՝ ծուռ կը նայի.
Կեղծաւոր է՝ վար կընայի ,
խեւ տըրուկ է՝ վեր կը նայի :

### ՑԽ

Սերը կուտէ սովորը ,
Թանը կուտէ մոլորը ·
Լաւին սովորիլ չուզողը
Թող զրնայ մրնայ ախոռը :

### ՑԽԱ.

Երեխային հարցուցին ,
Ինչու ես լալի՝ մնսաղ .
Աստց, չէ չկայ իմ խօսքին ,
Էնտոր եմ լալի՝ մնսաղ :

### ՑԽԲ

*Զուռնաչու* կրնկան են հարցրել
Գիտես խաղալ դուն կենդապար[1]).
Աստց, *քաս* ուր եմ պառաւել
Որ կենդապրէն չինիմ *խապար*:

### ՑԽԳ

Ծախեն՝ մի առնուր դեղինը ,
Քովըդ մի պահեր դեղինը ·
Թէ դուռըդ գայ՝ բռնիր նրտէն
Ու դուրս քըշէ դուն դեղինը :

---

1) Հայաստանի պարերուն մէկ տեսակը :

## ԺԴ

### ԳԵՂԵՑԿՈՒԹԻՒՆ ԵՒ ՏԳԵՂՈՒԹԻՒՆ

---

ՅԽԴ

Ես գեղեցիկ անոր կ'ասեմ
Ում որ սիրտըս կուհաւանի․
Վարպետ բժիշկ անոր կ'ասեմ
Որ ցաւիս դարման կուլինի :

ՅԽԵ

Ո՞վ է տեսօքն ու գեղեցիկ․ —
Սիրտըդ որո՛ւն որ կը սիրէ․
Սըրտի աչքերն է թափանցիկ,
Հոգու տեսքըն լո՛ւ կընտրէ :

ՅԽԶ

Զորս բան գովեց խիկարը ,
Արհամարհեց յիմարը․ —
Գողութենէ դողալը ,
Խաղն անխըռով խաղալը ,
Ջրի մէջ լո՛ւ լողալը ,
Ծանչնալն իրեն սըղալը :

**ՑԽԷ**

Բարի անունը չափազանց մի ծուեր,
Գուցէ շիտակ տեղ ունի.
Ծուած անունը չափազանց մի տեկգ
Դուցէ ծուռ տեղ ալ ունի :

**ՑԽԸ**

Ուզած մարդը բարձրացընէ՝
Գըլխուն համար կանէ թագ.
Զուզած մարդը կը ցածցընէ :
Զարնէ կառնու ոտից տակ :

## ԺԵ

### ԳՈՎՈՒԹԻՒՆ ԵՒ ՊԱՐՍԱՒ

---

**ՑԽԹ**

Ազռւունկին հարցուցին ,
Դեղեցիկն ո՞վ է , մզռաւ. —
Իմ սեւսըւուկ ձագո՜ւկըս ,
Կըռկռաց ագռաւն ու թըռաւ :

ՑԾ

Ծաս լաւ աղջիկ է. —
Ինչէն է յայտնի. —
Մայրն այնպէս կ'ասէ. —
Հաւտա՛յ ով կամի :

ՑԾԱ.

Թէ չես ուզեր կովը գրժուի ,
Ծաս մի՛ կանչեր հո հո , հո հո՛.
Թէ չես ուզեր տղան գրժուի,
Ձասես ամէն խօսքին այո՛ :

ՑԾԲ

Թէ քո տղուն քառասուն օր
Խեղճ ու խելառ անուանես ,
Քառասուն մէկին իրաւ որ
Խելօքը խենթ կը գտնես :

ՑԾԳ.

Վարժապետին անունն Ոսկան ,
Ձեռքէս եկածն է այսքան .
Մի ասեր թէ բան չես գիտեր ,
Մեզնէ տգէտներ շատ կան :

ՅԾԴ

Վար զարնելու համահրելու
Ամենայն մարդ վարպետ է․
Բան զուրիշը լաւն անելու
Բաւական շընորհք պէտք է։

ՅԾԵ

Հատաղերը չեն ծամեր,
Բերան կառնուն՝ կուլ կուտան․
Վաս խօսքին ու մի դըներ,
Թողուի սըրտիդ գերեզման։

ՅԾԶ

Ո՛վ որ կապած վեր կենայ՝
Վըռնասուած վար կը նըստի․
Ո՛վ որ վառօղ կուլ կուտայ,
Բերնէն կըրակ դուրս կուտայ։

# ԺԶ

## ԵՐԵԽՈՅԹ ԵՒ ԽՈՍԿՈՒԹԻՒՆ

---

ՅԾԷ

Թմբուկին ձայնը հեռաւոր
Ականջի անոյշ կուգայ.
Հեռաւոր սուրբը զօրաւոր
Կ'սեսն, վախեմ ու կուգայ:

ՅԾԸ

Դրացւոյն հաւն հասարակ
Դրկեցին սագ կ'երեւայ.
Մեր Հայուն իւր բաղն ու սագ
Ճընճըղկի ձագ կ'երեւայ:

ՅԾԹ

Միթէ քու հմրդ է ամէն միրուքւոր.
Միթէ սուրբ մարդ է ամէն կարգաւոր.
Չես տեսեր, եղբայր, թատրոնի միջում
Մէկ երկու ժամւան սրտլիկ թագաւոր

ՅԵ

Հաւին ո՞ր տեղն է համեղ.—
Կաշին ու կրծիցը եղ: —
Հայպա մեր ուղտին ո՞ր տեղ.—
Կաշին ու կրծիցը եղ
Ասաց մեր գիժըն Կըրեղ:

ՅԵԱ

Աժան մըսի արգանակ
Ի հարկէ համ մը չունի,
Առանց մոմի աշտանակ
Ի հարկէ լոյս մի չունի:

ՅԵԲ

Ամէն հոտիկ մարգարիտ չէ,
Ամէն խայրիկ ճըշմարիտ չէ.
Ամէն վար հայեցող մարդը
Կարծածիդ պէս միամիտ չէ:

ՅԵԳ

Գայլին անունն է ելած,
Աղուէս կայ որ մարդ կուտէ.
Քրդին անունն է ելած,
Ազգէն մարդ կայ՝ մա՛րդ կուտէ:

ՑԿԴ

Գլուխը մեծ, կ'ասեն իմաստ կ'լինի.
Ոտքերը մեծ, կ'ասեն խնդամ կ'լինի.
Թէ քիթն է մեծ՝ ինքնահաւան,
Պորտը մեծ կ'ասեն անբան կ'լինի:

ՑԿԵ

Բուխերիկը ծուռ լինի,
Բարձր լինի՝ ցած լինի,
Հոգ չէ եղբայր, զեն չունի,
Թող մուխը շիտակ ելնի:

ՑԿԶ

Բարձրահասակ քանձրամօրուս՝
Ցիմար կըլլի անտարակոյս. —
Կարճահասակ՝ կըռնակը կոզ,
Թող մայրն ասէ, վայ իմ գըլխուս:

ՑԿԷ

Պեխը զարդ է կըտրճին,
Մազը զարդ կանանց ազգին.
Թէ մանչը աղջիկ դառնայ,
Միթէ աղջըկունք մանչ ասուին:

ՅԿԸ

Ես եղեր եմ քեզի նըման ,
Դու կըլինիս ինծի նըման·
Երանի քո հօրն ու մօրը
Թէ տղայ լինիս մեծի նըման :

ՅԿԹ

Գէշը լաւին կապիկն ըլլայ ,
*Կէնա* գէշ է՝ *կէնա* գէշ·
Ցիմարն հագնի *մախմուր քուլլահ*,
Կէնա էշ է՝ կէնա էշ :

ՅՀ

Կերած հացին՝ խըմած ջրին
Ինք թէ հաւնի՝ թող հաւնի·
Հագած լաթին զարդարանքին
Պէտք է ուրիշը հաւնի :

ՅՀԱ

Փող ունեցիր ու համրէ ,
Հաշիւ անել կը սովրիս·
Հագուստ հագիր *մախմուրէ* [1],
Ճէնքով քալել կը սովրիս :

---

1) *Մախմուր*, թաւիշ, *գատիֆէ*։

**ՅՀԲ**

Կանաչւորն է սոխ ու սըխտոր ,
Կըճեպէ ո՛րքան կ'ուզես·
Ծըռանկն է չոր մըսի կըտոր,
Լաքն հանես՝ միս կը գտնես :

**ՅՀԳ**

Երեխէն *մահանայ* ,
Մօրը փորը կըծտանայ·
*Թապախը մահանայ* ,
Տէրտէրի փոր կըծտանայ:

**ՅՀԴ**

Հեռուանց անուշ հոտ առանք ,
Կարծեցինք որ քէպապ կ'անեն·
Կամաց կամաց մօտ գընացանք,
Տեսանք որ էշ կը տաղեն :

**ՅՀԵ**

Ոսկի բեռցուր իշուն վերայ ,
Նա դարձեալ նոյնպէս կը զըռայ.
Ագռաւին հագցուր կապայ ,
Նա դարձեալ կը կըռկըռայ :

ՅՀԶ

Գըտակըս փոշոտ տեսար,
Կարծեցիր թէ չաղացպան եմ.
Գըլուխըս վեղար տեսար,
Կարծեցիր թէ վանական եմ:

ՅՀԷ

Քանց պուտը կարմիր չըկայ,
Որ ճըղես՝ սիրտը սեւ է.
Դըրսէն հրեշտակ կ'երեւայ,
Ներսեւն անիծած դեւ է:

## ԺԷ

### ԵՐԿԻՒՂ ԵՒ ՔԱՋՈՒԹԻՒՆ

ՅՀԸ

Վախկոտին մայրը չէ լացեր,
Ցանդուգնին հայրը չէ լացեր,
Խոհեմ քաջին հայրն ու մայրը
Հաւասար են ուրախացեր:

ՅՀԹ

Տեսա՛ր մի դուն ծեծն ու ահը. —
Եբր ծիէն վազուկ կ'անեն.
Թէ չըլինի օրհնեալ մահը՝
Մարդիկ իրարու ինչ կ'անեն:

ՅՁ

Զին վարպես ձիաւորին,
Թուրը կըտրին զինւորին.
Ի՞նչ վայլէ ոսկի սանտրը
Քո կուռս ու կեղտոտ գըլխին:

ՅՁԱ

Ես գող կ'ասեմ նարպիկ գողին
Որ տանտէրը գող կը բըռնէ.
Ի՞նչ ասեմ օրէնք չուզողին
Որ օրէնքին մեղ կը դընէ:

ՅՁԲ

Ծովու մէջ եմ բըջըլեր,
Անձրեւէ երկիւղ չունիմ.
Գըլխուս կայծեր են թափեր,
Տերեւէ երկիւղ չունիմ:

ՅԶԳ

Վա՜յ քէ տեսաւ մին փոսուռայ.—
*Հառա՜յ* կրտայ [1]) քէ կըրա՜կ կայ.
Վա՜յ քէ լըսեց ճանճի բըզզոց,
Կ'ասէ քէ գող աւազակ կայ:

ՅԶԴ

Զինուորական՝ վաճառական,
Եղա՜ն վախկոտ կասկածոտ,
Ոչ պատուոյ եւ ոչ շահու տէր եղան,
Շահեցան զեն եւ ամօթ:

ՅԶԵ

Կըտրիճըն որ ձիէն ընկնի,
Յասքէ նորէն կը հեծնի.
Ես կըտրիճը անո՜ր կ'ասեմ
Որ ընկնի՝ նորէն կանգնի:

ՅԶԶ

Օտար ձեռքով ամենայն մարդ
Կըրնայ լինել մեծամարտ.
Քաջ նա է որ ազգին համար
Կը մեռնի ուրախ զըւարթ:

---

1) Հառայ տալ, աղաղակ վերցընել, կանչուըռտել:

ՅՁԷ

Կատղած ցըլուն առջեւէն ,
Զարնող ձիուն ետեւէն ,
Իմաստակին ամէն կողմէն
Փախիր , հոգիդ կը հանեն :

ՅՁԸ

Հըրէին հան թէ ծեծ տաս՝
Կանչիր վըրան ու վախ տուր.
Բռսային հան թէ փող տաս՝
Կանչիր վըրան ու փախ տուր:

ՅՁԹ

Պըղինձն ընկաւ՝ չը կոտրեցաւ ,
Միայն ձայնը վեր բարձրացաւ.
Պըտուկն ընկաւ՝ ջարդ բուրդ եղաւ,
Կըտորները դուրս ձըգուեցաւ :

ՅՂ

Խորհուրդները ծածուկ լինի ,
Զըրոյցները հեղուկ լինի.
Զարկամները ըզգոյշ կացէք ,
Չորս պասը չորս անկան ունի :

ՅՂԱ

Այրիցում է՝ չի՛ փըրթիր ·
Պողպատ է՝ չի՛ կըտրւիր ·
Ոսկի է՝ չը ժանգոտիր ·
Հայ է՝ չը յուսահատիր :

ՅՂԲ

Հայն որ իրան ձին հեծնի
Ու թուրը մէջքին քաշի ,
Քուրդը գետին թող անցնի ,
Թուրքը թող ձայնը քաշի :

ՅՂԳ

Կա՛մ ամենեւին մի վախեր բանէ ,
Կա՛մ այս երեքէն միայն ·
Ի ժամանակէ , ի մարդոյ , քեզնէ ,
Կամ թէ յԱստուծոյ միայն :

ՅՂԴ

Գող , սըրտումը դող ·
Փող , սըրտումը դող ·
Կին առնող, սըրտումը դող ;
Կին չառնող, սըրտումը դող :

# ԺԸ

## ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՌԱՆՁՆՈՒԹԻՒՆ

ՑԳ,Ե

Զին ու գոմէշ լըծեցին ,
Սայլը գընաց ջուրն ընկաւ·
Խեղճ ձիուն ծեծ քաշեցին ,
Գոմէշն աւել խորն ընկան :

ՑԳ,Զ

Ամէն բան իրեն կարգով·
Մեծը մեծ է պըզտիկով·
Ձեռքին յուացուի ձեռքով ,
Երեսը երկու ձեռքով :

ՑԳ,Է

Մին խեւ մին քար ձըգեց ի հոր ,
Հորըն խորունկ՝ մէջըն լի ջուր·
Հարիւր խելօք մէկտեղ եկան ,
Քարը հանել կարող չեղան :

### ՅՂԸ

Նայուածքը տես՝ միտք առա ,
Խօսուածքը տես՝ խօսք առա ,
Քալուածքը տես՝ սիրտ առա ,
Յետո՛յ քեզ ընկեր առա :

### ՅՂԹ

Մեծ ըղտապանին
Ընկեր եղողին
Դուռը մեծ պիտի
Խալկինն ահագին :

### Ն

Գըլուխը մեծ՝ մէջը դըդում ,
Մօրուքն երկայն՝ բայց խելքը հում.
Բարեւ մի տուր ու անց գընա ,
Մի՛ գըտնըւիր նորա գործում :

### ՆԱ

Տըխմարին հետ՝ ո՛վ գիտուն՝
Ճամբու ընկեր մի՛ լինիր ·
Տըգեղին հետ՝ ո՛վ սիրուն՝
Կեանքի ընկեր մի՛ լինիր :

ՆԲ

Թէ մին ուտէ կուտս ու կուլ տայ ,
Միւսը նայի՝ թուքը կուլ տայ ,
Կագն ու կռուիւ տուն կուքացուի ,
Տուտով աշխարհս ի փուլ կուգայ :

ՆԳ

Պատ չըլինիր մինակ քար ,
Հոտ չըլինիր մինակ զառ ·
Մէկ ազգասէր Հայն ինչ անէ,
Անժաժ [1]) քար է մեր աղբարը:

ՆԴ

Մի՛ լինիր հացի ընկեր ,
Եղիր նաեւ լացի ընկեր·
Ընկերըդ խելօք լինի,
Լինիս խելացի ընկեր :

ՆԵ

Ես ուղտ ունիմ, դուն ուխտ ունիս.
Ես խօսք ունիմ, դու թուղթ ունիս.
Ես այս աշխարհըս տանջըւիմ,
Դու դէպ ի վեր սանդուխս ունիս:

---

1) Անշարժ :

ՆԶ

Խաղաղութիւն ընտանի
Երջանկութեան ըսկիզբ է.
Երկու սիրտ մէկ որ լինի՝
Մարագն [1]) ամուր պարիսպ է:

ՆԷ

Ի՛նչ կ'անես՝ արա որդի,
Զար ընկերի հետ մի՛ մընար.
Ի՛նչ կ'անես՝ արա որդի,
Լաւ ընկերէ ես մի՛ մընար:

ՆԸ

Ձագը ձագի հետ,
Սազը սազի հետ,
Հաւը հաւի հետ,
Հայը Հայի հետ:

ՆԹ

Միայն ձեռքը ծափ չի տար,
Երկուսն իրար խփել պիտի.
Միայն ձեռքը չի տաքանար,
Երկուսն իրար շփել պիտի:

---

1) Մարագ, յարդ' խոտ պահելու տեղ. *սամանլըք*:

ՆԺ.

Շատ մարդ նըման է հասակով,
Քիչ կայ նըման ախորժակով.
Խիստ քիչ մարդիկ կըրնաս գըտնել.
Նոյն ճաշակով ու նոյն խելքով:

ՆԺԱ.

Մարդու ձեռքը հինգ մատ ունի,
Որը կարճ՝ որը երկայն.
Ի՞նչ զարմանք թէ յայսմ աշխարհի
Մեծ ու փոքր մարդիկ կան:

ՆԺԲ.

Ով իր հացը միանակ կուտէ,
Բեռը լեզուովը կը կապէ,
Բեռը միանա՛կ կը վերցընէ
Լեռնէն էլ միանակ կանցընէ:

ՆԺԳ.

Քանց ընկերի հետ հաւ ուտես՝
Լաւ է միանակ հաւկիթ ուտես.
Դուն աշխատէ՝ դո՛ւն վայելէ,
Թէ գլուխդ տինճ պահել կուզես:

ՆԺԴ

Մարդըս մարդամիջի լինի,
Պարտքըս հազար ոսկի լինի.
Վանք անապատն ինչ անեմ,
Թէ մարդ հոն սուրբ չը լինի:

ՆԺԵ

Ձեռքը ձեռք է,
Բըռունցն [1]) է որ ուժեղ է.
Հայը Հայ է,
Միաբան Հայն ուժեղ է:

ՆԺԶ

Մենակ ձեռքը ինչ ունի.—
Երկու ձեռքը ձայն ունի.
Մէկ խելքը ինչ ոյժ ունի.—
Երկուքը մեծ ոյժ ունի:

ՆԺԷ

Ծանըր հետ ընկերացի՛ր,
Քարը ձեռիցըդ մի՛ ձըգեր.
Քըրդին հետ ճամբայ ելի՛ր,
Թուրը մէջքիցըդ մի՛ ձըգեր:

---

1) Բռունց, Եումրուզ:

ՆԺԸ

Ձար աչքէն՝ անգամ խօսքէն,
Փակ ձեռքէն՝ ցրնկած կուրծքէն
Հեռու կեցիր՝ ո՛վ եղբայր,
Քեզ կրակը կը ձըգեն:

ՆԺԹ

Թէ կուզես բան առաջ երթայ՝
Դո՛ւն արա.
Թէ չուզես բանն առաջ երթայ,
Մէկ ուրիշին յանձն արա:

ՆԻ

Լեռը լեռան մօտ չի զըներ
Տարիներով ու դարերով.
Մարդիկ միշտ զատ զատ չեն մընար
Ցանկած կուզան իրարու քով:

## ԺԹ

## ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՑԻՄԱՐՈՒԹԻՒՆ

---

**ՆԽԱ.**

Հայի խելքն ուշ կը գայ գլխին
Ասեր է Քուրդը՝ ինքն ապուշ·
*Բայց* ինչ ասես Քրդի խելքին
Որ ոչ կանուխ կը գայ ոչ ուշ :

**ՆԽԲ**

Միրուք ուզես մեծ ու սպիտակ ,—
Ահա մերին նոխազը·
Թէ խելք ուզես սուր ու չիտակ ,
Ահա *ֆոսս* Մալխազը :

**ՆԽԳ.**

Մարդուս պատիւն ու յարգը
Տարիքում չէ՝ խելքումն է ,
Իշխան մարդ մեր աշխարհքը
Ծեր Տասօն չէ՝ Մելքումն է :

### ՆԻԳ

Առաջ մըտածէ ու յետոյ խօսէ,
Փողըդ լաւ համրէ ու յետոյ մըխէ.
Ձուր չէ որ կ՚ածես, եղբայր
Բիւր անգամ չափէ՝ մի անգամ կըտրէ։

### ՆԻԵ

Խելօքին հարցին, վարպետդ ո՞վ է,
Ասաց, իմաստնոց խօսքն ու խրատ.
Խեւին հարցին, թէ վարպետդ ո՞վ է,
Ցուցուց խոցուած ձեռքն ու ճակատ։

### ՆԻԶ

Խըրատըդ խընդրողին տուր,
Խորհուրդըդ ատենին տուր.
Իմ սայլս արդէն կոտրեցաւ,
Ճամբան ուրիշին ցուցուր։

### ՆԻԷ

Խելօքը ծառ էր՝ ծաղկեցաւ,
Խեւը ծառիկ էր՝ թոռմեցաւ.
Խելօքը շուտ պըտուղ տըւաւ,
Խեւը քանի գընաց չորցաւ։

ՆԻԸ

Գիտուն չէ շատ՝ շատ ապրողը,
Գիտուն է շա́տ տեղ քալողը·
Ես գիտուն մարդ անո́ր կ'ասեմ
Որ գիտէ փո́ղ անել հողը:

ՆԻԹ

Աչքըդ բաց՝ որ չը բանան,
Աջըդ բաց՝ որ չը բանան·
Բերնիդ դուռը ծանըր բաց
Որ սրտիդ գանձը չը գողնան:

ՆԼ

Աչքըդ մըշուշ որ պատէ,
Բանըր մըշուշ կը տեսնի·
Ուղիղը նա́ կը դատէ
Որ սըրտին կիրք մի չունի:

ՆԼԱ

Ես լուսին եմ տեսած՝ եղբայր,
Աստղին լուսին չեմ ասեր·
Ես ուղիղն եմ տեսած՝ եղբայր,
Ծուռին ուղիղ չեմ ասեր:

ՆԼԲ

Քուրդն ինչ գիտէ ծոմն ու պաս,
Թուրքն ինչ գիտէ տօնն ու դաս.
Մեր Հայուն ինչն է պակաս,
Տէրտէրին հարց՝ կ'իմանաս:

ՆԼԳ

Ասածըդ գիտցիր,
Առածըդ գիտցիր,
Արածըդ գիտցիր,
Գըրածըդ գիտցիր:

ՆԼԴ

Չըյոգնիր ճամբան գիտցողը,
Չիտըրտմիր *տէրման* գիտցողը,
Չա́նճըրկիր ճարը գիտցողը,
Չա́պշիր պատճառը գիտցողը:

ՆԼԵ

Մեծ գործերու ձեռք զարնողը
Դըժուարութենէ չըվախնար.
*Մինարէն* գողնալ ուզողը
Պատեան[1]) պատրաստել չմոռնար:

---

1) Պատեան, գըն գըլըֆը:

ՃԼԶ

Խորհուրդ հարցուր սորա նորա ,
Լըսածըդ լա՛ւ դիր կըշիռը ,
Թէ չըհաւնիս՝ գիտցածդ արա ,
Ձեռքդ է քու գործիդ վըճիռը :

ՃԼԷ

Հարցընելով հարցընելով
Նա սար ու ձոր անցեր է,
Սա էլ՝ ե՛ս գիտեմ ասելով
Դաշտին մէջ մոլորեր է :

ՃԼԸ

Բան սովրենալ եթէ կուզես ,
Չըգիտցածըդ պէտք է հարցնես ·
Ամօթ մը չէ՛ չըգիտնալը ,
Ամօթ է չըսովրենալը :

ՃԼԹ

Ես թուրք ասեմ՝ քուրդ իմացիր ,
Ես տանձ ասեմ՝ գանձ իմացիր ·
Աղջիկ՝ ես քեզի կ'ասեմ ,
Հարսիկ՝ խօսքըս դուն իմացիր :

ՆԽ

Գեղն ու քաղաք առջեւս է,
Ինձ առաջնորդ չէ հարկաւոր.
Գիտեմ որ այս այսպէս է,
Ինձ մեկնութիւն չէ հարկաւոր:

ՆԽԱ

Լաւ է փոքր ինչ հեռի գըճաս,
Զոր ոտքով անցնիս կամըրջէն,
Քան թէ մօտի ջուրը մըտնաս,
Զագատիս յայտնի վըտանգէն:

ՆԽԲ

Ուրիշի չըւնով թէ իջնիս հորը,
Կէս ճամբան չեկած՝ անկանիս խորը
Օտարի խօսքով գործի ձեռք զարնես,
Գործը կէս չարած՝ փըճտըւես նորը:

ՆԽԳ

Փըտտած յարդը առողջ եզին
Վընաս չ՛ներ ամենեւին·
Անխելք մարդը խելօք մարդուն
Վընաս չ՛ներ ամենեւին:

ՆԽԴ

Խելքըդ թէ հասնի՝ ձեռքըդ չըհասնի,
Տանջանք տառապանք·
Թէ ձեռքդ հասնի՝ խելքըդ չըհասնի,
Հըրճուանք ու բերկրանք:

ՆԽԵ

Գիշերը մայր ասած են
Բարի բարի խորհըրդոց,
Ցորեկը անուանած են
Խառնամայն վաճառանոց:

ՆԽԶ

Թող ես խեղճ լինիմ
Իմ գիտցածիս պէս,
Քան թէ երջանիկ
Քո գիտցածին պէս:

ՆԽԷ

Անցած բանին մի՛ ափսոսար,
Ներկայ բաղդիդ մի՛ տըժգոհար·
Ապագայէն յոյս մի՛ կըտրէր,
Կատարեալ իմաստուն եղար:

**ՆԽԸ**

Տղին ու խեւին խորհուրդ մի՛ յայտներ
Ի՛նչ որ ծոցումդ է՝ բոլոր մի՛ վատներ,
Ուրիշի խաբրին ամօթ մի՛ քաշեր,
Ծաբքուն անելիքդ օրին մի՛ աներ :

**ՆԽԹ**

Աչքըդ բաց որ լաւ տեսնաս
Թէ ոտքըդ ո՞ւր ես դըրած.
Ապա թէ ոչ՝ կը կուրանաս ,
Կընկնիս ի փոսը խոր փորած:

**ՆԾ**

Վ,աղ վեր կաց՝ գործի ըսկըսիր ,
Արտը չերթացած՝ ժամ մըտիր.
Լաւ աշխատէ որ լաւ շահիս ,
Ուրախ զըւարթ ի տուն դարձիր :

**ՆԾԱ**

Խաղաղութեան մէջ կռիւ մի՛ ձգեր ,
Ընտրելու ատեն՝ վատը մի՛ ընտրեր.
Ըսկըսած գործըդ կիսատ մի՛ թողուր,
Քեզ չըրնկած բանին մէջը մի՛ մըտներ:

**ՆԾԲ**

Ով աշխարհիս պարտիզումը
Վարդը քաղէ՝ փուշը նետէ,
Զարդ համարի իւր ուսումը, —
Երնէկ անեմ բոլոր սրտէ:

**ՆԾԳ**

Ժամանակիս իմաստունները
Հին իմաստնոց համեմատես,
Հըսկաներու շալակն ի վեր
Թըզուկներ են ելած կ'ասես:

**ՆԾԴ**

Գիրքը մին ծառ՝ վըրան կեռաս,
Երբոր ձեռիդ առնուս կարդաս,
Միայն տերեւը մի՛ շըրջեր,
Նայէ՝ պըտղին համը տեսնաս:

**ՆԾԵ**

Բալխիրըն [1]) ամառուանէ,
Սայլերըն ձըմեռուանէ.
Թէ ո՛ւր գընաս՝ ցորեկուանէ,
Թէ ինչ անես՝ գիշերուանէ:

---

1) Բալխիր, գըզազ, չանա:

ՆԾԶ

Կը ցանկաս բան մի ասես՝
Որ բոլոր աշխարհն գիտնայ.—
*Պազար*ն իշխան մի տեսնես,
Ակնջին բա́ն մի փըսփըսա:

ՆԾԷ

Առաջ հունը գըտիր՝
Յետոյ ջուրը մըտիր.
Առաջ բանը քըննիր,
Յետոյ տուր քո վըճիռ:

ՆԾԸ

Թէ լաւ իմանաս,
Երբ ճամբայ գընաս՝
Մի՛ ասեր կընոջ եւ մի՛ աշկերտի
Թէ ուշ պէտք է գաս:

ՆԾԹ

Մանկութեան ուսումը
Փորուածք է քարի վերայ,
Ծերութեան ուսումը
Գըրուածք է սառի վերայ:

ՆԼ

Ամէն մարդէ բան ընդունիս՝
Ամենէն հարուստ կը լինիս.
Ամէն մարդէ որ խելք սովրիս,
Ամենէն գիտուն կը լինիս:

ՆԼԱ

Գիժը կը դատի,
Խելօքը կուտի.
Գիժը մընայ ի բանտի,
Խելօքը տուն կ'ազատի:

ՆԼԲ

Քեզի տանուտէր կ'ասէ,
Ինձ տէրտէր՝ մեր *մահաշը*.
Մենք որ մեր խելք պակաս է,
Մեզ յայտնի է մեր *հաշը*:

ՆԼԳ

Յիմարն երկու բան չէ կարող անել,
Մէկը՝ միտք անել եւ միւսը՝ լռել.
Իմաստունն երկու բան է սովրել,
Խորունկ մըտածել ու սակաւ խօսել:

ՆԿԳ

Թէ սիրտըդ լաւ կ'ուզէ խռոված,
Թեւըդ սօրտէ՝ աչքերըդ բաց,
Այնպէս՝ որ մահ բերելիս՝
Ոչ տամփուրն էրուի՝ ոչ խռոված:

ՆԿԵ

Ժամիցը դուրս ես եմ գալի,
*Ողորմի Աստուած* դո՛ւն կ'ասես.
Վարպետիցը դո՛ւ ես գալի,
*Խաչ օգնեան* ինձ կը հարցնես:

ՆԿԶ

Ինձի տես ու քեզի լաց,
Մարդու կարօտ մի՛ լինիր.
Ո՛ր տեղ որ ես՝ *դայիմ* կաց,
Փոփոխամիտ մի՛ լինիր:

ՆԿԷ

Զրկան հարցին, ձո՛ւկ աղբար,
Ծովիցն ինչ ունիս *խապար*.
Ասաց, ասելիք տաս ունիմ,
Բերանս ջրով լիքն է՝ աղբար:

### ՆԿԸ

Խելօքն է ծովի նըման,
Ո՛րքան լընու՝ կը տանի ·
Անմիտն է տըկի նըման,
Ջափ մ'աւել լնու՝ կը պատռի:

### ՆԿԹ

Խելօքն յիմարին առջեւ
Գիտես ինչի՞ նըման է ·
Ճըրագը կուրին առջեւ
Վառի, ու նա չըտեսնէ:

### ՆՀ

Մի եւ նոյն ծաղկանոցէն
Մեղուն մեղր առաւ՝ օձը թոյն.
Ինչ զարմանք՝ նոյն դպրոցէն
Նա լաւն ուսաւ, սա չարութիւնն:

### ՆՀԱ

Մեր երկրումը կովու կըճտին
Կ'առնուն կը բերեն դանակը ·
Ձեր երկրումը կովը ճալկեն՝
Կը հանեն ի դարակը:

ՆՀԲ

Թէ որդի ես՝ հօրդ բարւոյն նմանիր·
Հպատա՛կ ես՝ լաւ իշխանին նմանիր
Աշակե՛րտ ես՝ վարդապետին նմանիր,
Քրիստոնեա՛յ ես՝ Քրիստոսի նըմանիր:

ՆՀԳ

Փոքրը մի՛ արհամարհեր
Որ մեծէն զուրկ չըմընաս·
Մեծին մի՛ հակառակիր՝
Որ փոքրէն վար չըմընաս :

ՆՀԴ

Տըգէտն երեք տեսակ է.—
Մէկն այն որ բան չը գիտէ ;
Մէկն որ կարծէ թէ շատ գիտէ,
Մէկն որ գիտունը կ'անարգէ:

ՆՀԵ

Հարիւր բըժիշկ մէկտեղեցան
Հիւանդ մի փըրկել չըկարցան·
Ասես թէ ինչ էր ցաւը, —
Ցաւ կամաւոր յիմարութեան :

ՆՀԶ

Տուն մի՛ շինէր ճամբի վերայ,
Ոչ եղեգանց շամբի վերայ,
Ոչ բերդի քով՝ ոչ խանի քով,
Եւ ոչ *խաստախանայի* քով:

ՆՀԷ

Ասենով իշուկի մը ծընօտով
Զարդուեցան այլազգիքհազարներով
Ի՞նչ զարմանք՝ երբ գիտունին մէկը
Յաղթըւի յանկարծ տխմարին խօսքով

ՆՀԸ

Երբոր քարոզն աւարտի
Վարդապետն ի յատենին,
Թող քարոզն ի քում սրտի
Ընկլսի մա՛յն ատենին:

ՆՀԹ

Թէ առաջուց գիտնայինք
Ի՛նչ պէտք է գայ մեր գըլխուն,
Մէկմէկ մարգարէ կըլնէինք
Ես՝ դուն ու մեր խեւ խաչօն:

ՆՁ·

Բան մի չըգիտեր՝ ու սովրիլ չո՛ւզեր ·
Ծախու բան կառնու՝ գին չի՛վճարեր
Այնքան բան կուտայ՝ որ իրեն չըմնար
Տաս կըխոստանայ, բան չըկատարեր:

ՆՁԱ.

Ծուլին համար
Երկու հեղ ժամ չըլլիներ·
Խըլին համար
Երկու *կզան* չըլլիներ :

ՆՁԲ

Խեղառին ուսում մի՛ տար ,
Աշխարհիս կըրակ կուտայ·
Խեւին ձեռքը դանակ մի՛ տար,
Տունըդ կ'անէ տակնուվերայ :

ՆՁԳ

Մարդըս քանի որ ապրի՝
Նոր նոր բաներ կը սովրի·
Երանի՜ է՝ չարը թողու ,
Միշտ օգտակար բարին սովրի:

**ՆԶԴ**

Թէ որբութիւնն ու սըրբութիւն
Մի եւ նոյն բան լինէին,
Տխմարութիւն ւ' արդարութիւն
Մի եւ նոյն կը լինէին:

**ՆԶԵ**

Տըգէտ դատաւոր,
Յիմար բըռնաւոր·
Տըգէտ կարգաւոր,
Էշ պըսակաւոր:

**ՆԶԶ**

Գինին քացախ որ դառնայ՝
Բարկ ու կըտրուկ կը լինի·
Թուրքը գիտուն որ դառնայ՝
Շատ խեւտըրուկ կը լինի:

**ՆԶԷ**

Քո խելքը ղեկէ, անձդ նաւ պատրաստ
Կիրքդ է քամի, ականջդ առագաստ
Թէհասնիլ ուզես յայն նաւահանգիստ
Նայէ որ հոգիդ լինի միշտ ըզգաստ:

ՆՁԸ

Գեղարփիւծն ըսեն՝ ամէն գոյն առնու
Բայց ի ներմակէն.
Մոլորուած մարդը ամէն ձեւն առնու
Բայց ի շիտակէն:

ՆՁԹ

Երնեկ անոր որ խելօքին
Յարգը ճանչնալու խելք ունի.
Երնեկ անոր որ անմըտին
Համբերելու չափ սիրտ ունի:

ՆՂ

Ինձ սեւերես մի ասեր,
Մի ասեր՝ տըգէտ տըխմար.
Ամէն տեղ է մութ գիշեր,
Պատեր է մեզ բանձր խաւար:

ՆՂԱ.

Աշխարհումս է կոյրը խիստ շատ
Իմաստուն քիչ խելառը շատ,
Յիմարք ձըգին պատէ ի պատ,
Խարխափով գալողն՝ էլի գատ:

ՆՂԲ

Էշն ի՞նչ գիտէ նուշն ի՞նչ է,
Վարդը ի՞նչ է՝ փուշն ի՞նչ է.
Գեղջուկ մարդը ի՞նչ գիտէ
Լեղին կամ անուշն ի՞նչ է:

ՆՂԳ

Տըգէտը նա չէ՝
Որ բան չըգիտէ.
Նա՛ է որ կարծէ՝
Ամէն բան գիտէ:

ՆՂԴ

Ուղտը կորցրել ես,
*Քօչակին* ման ես գալի.
Ջաղացքը կորցըրել ես,
*Չախչախին* ման ես գալի:

ՆՂԵ

Կօշկակարին կօշիկը ծակ կըլինի,
Ազգասիրին քըսակը ծակ կըլինի.
Կարդացողին անկանը ծակ կըլինի,
Ճասզէտ մարդուն գտակը ծակ կըլինի:

ՆԿԶ

Լաւ է յարմար գիրք մի կարդաս ,
Խըրատ առնուս խօսքերէն ,
Քան թէ յիմար մէկուն երթաս ,
Զանձրանաս փուճ *շաղփ*երէն :

ՆԿԷ

Դուն թէ գիտես հազա́ր բան՝
Մէկ գիտցողին բան հարցուր·
Գուցէ առնուս պատասխան
Քո հազարէն նո́ր ու սուր :

ՆԿԸ

Քըրդի ժողով գընացի ,
Ապուշ դարձայ մընացի . . .
Ականջըս մեծ՝ կանչըս մեծ
Քո́ւրդն էր ասու́մ խելացի :

ՆԿԹ

Ով անմըտին խըրատ կուտայ ,
Հող կը ցանէ գետին վերայ·
Թէ մէկ մաքր վըրան մընայ ,
Մեծ մասն առնու ջուրը գընայ:

Ճ

Խելացի մարդուն խըրատը
Խելքին միտքը կը պղտորէ·
Էշն որ ուտէ չկերած խոտը ,
Փորուն ցաւը կը բըռնէ :

ՃԱ.

Ծըներ ես դուն Ապարան ,
Սըներ ես Պաշ-Ապարան ,
Քեզ ի՞նչպէս հասկացընեմ՝
Ինչ՞ է Վան՝ ի՞նչ Երեւան :

ՃԲ

Օտար բըռունից չուտողը
Իւր բըռունցը տանձ կարծէ·
Փողի երես չտեսնողը
Ծոցին փողը գանձ կարծէ :

ՃԳ.

Քեզ ա՛յս երկրումըս չեն գիտեր ,
Ուրիշ երկիր երթալ պիտէր ,
Սազ մի գըտանք կ’ասէին,
Հաւնոցում կը փակէին :

ՃԴ

Քան թէ խօսք մի ասողը՝
Լըսո՛ղը խելօք պիտի․
Քան թէ խըրատ տըւողը՝
Առնո՛ղը խելօք պիտի ։

ՃԵ

Գըլուխն իր տանն է թողեր,
Այնպէս ճուկան է եկեր․
Ի՞նչ զարմանք՝ թէ բազմութեան մէջ
Գըլխին գըտակն է կորուսեր ։

ՃԶ

Ջորին *հաճի* չը լինիր՝
Թէ հազար հեղ երթայ Մէքքէն.
Էշը *տէվրիշ* չը լինիր
Թէ հազար ջուր կըրէ թէքքէն ։

ՃԷ

Եղբայր, ամէն բան չափ ունի,
Ամէն հրաման մի կապ ունի․
Ասինք թէ ա՛ռ տար հեռու,
Չասինք թէ ա՛ռ տար մեռու ։

ՃԸ.

*Տէրս* ունիմ, *տէրման* չունիմ,
Ցաւս անելու հրաման չունիմ.
Հայ եմ, վայլի բան չունիմ,
Խաղ շատ գիտեմ, ձայն չունիմ:

ՃԹ.

Բոշային բընակարանն
Ինչ՞ բան ունի *մուսանտարան*.
Կարդալ գրել չը գիտցողին
Ինչ՞ բանի կուգայ *դուրան*:

ՃԺ.

Եղբայր, դու շատ կը ցանկաս
Որ վարպետ սափրիչ լինիս.
Լաւ է. միայն չեմ ցանկար,
Որ իմ գլխուս վրայ վարժիս:

ՃԺԱ.

Մի՛ ասեր՝ թէ մարդն ինչ է
Որ մարդ ըզմարդ չը ճանչէ. —
Մարդուս խայտուց ներսէն է,
Գիտցիր եղբայր, դրսէն չէ:

**ՇԺԲ**

Մեծը յիմար, փոքրը յիմար,
Օրորոցին մէջ տղայ կար,
Մօտիկ գընացի նայեցայ,
Նորա գըլուխն ալ կ'երերար:

**ՇԺԳ**

Կ'ասեն, բայց մի հաւատար,
Մազը երկայն՝ խելքը կարճ.
Այրուկնոջ խելքն է հաւասար,
*Թէք* էրկան լեզուն է կարճ:

**ՇԺԴ**

Անխելք մարդէն հեռու փախիր,
Խելօք մարդուն հետ հող կրրիր.
Լաւ է սորա գերին լինիս,
Քան թէ նորա մօտ մեծ գըզիր:

**ՇԺԵ**

Թէ կը լինիս անմիտ ոչխար,
Վախեմ ընկնիս գայլու բերան.
Աչքըդ բաց՝ հա՛յ գառնուկ աղբար,
Գայլերն ոչխար հերիք կերան:

**ԾԺԶ**

Կոյրը մեռա՜ւ, ասեն՝ աչքի՛ն մեռնէի
Կուզը մեռա՜ւ, ասեն՝ կնտի՛ն մեռնէի,
Աշխարհս այսպէս է, ո՛վ եղբայր,
Գընա մեռի՛ր, կ'ասեն՝ գայիր սիրէի:

**ԾԺԷ**

Կուրին առաջը ձիւն դրին,
Ասաց, ո՛հ թէ ի՛նչ սեւ է.
Տըգետին քով գիտուն բերին,
Ասաց, վա՛հ թէ ի՛նչ խեւ է:

**ԾԺԸ**

Մի՛ լինիր որդեակ, ահ է,
՝Նըման յիմար չայլամին [1]),
Որ գլուխն ի ծակ կուպահէ,
Ու դուրս կը թողու մարմին:

**ԾԺԹ**

Դուռ պատուհան լաւ փակէ,
Դրացիդ գող մի՛ բռնիր.
Ձիդ ծառին նախ լաւ կապէ,
Յետոյ Աստըծոյ յանձնիր:

---

1) Չայլամ, Տէվէ գուշու:

**ԾԻ**

Բարակ խելքին բաւական է,
Փոքրիկ ճանճին բզզոցը·
Հաստագըլխին ի՞նչ շահ կ'անէ
Ամպերու գոռգոռոցը:

**ԾԻԱ**

Առուին մօտը չը հասած՝
Ծըռներդ մի՛ մերկանար·
Գործին ընկիզբը չը տեսած՝
Խորհուրդըդ մի՛ մերկանար:

**ԾԻԲ**

Մատնիքըդ մատիդ պահիր՝
Թէ չուզես որ կորընչին·
Գաղտնիքըդ սրտիդ պահիր,
Մի՛ թողուր բերնէդ թըռչին:

## Ի

## ԽԱԲԵՈՒԹԻՒՆ ԵՒ ՆԵՆԳՈՒԹԻՒՆ

---

ՏԻԳ.

Աղուիսուկին հարցուցին ,
Խօսքիդ վըկայ մի ունի՞ս.
Աղուէսը նայեց պոչին,
Ասաց, սա՛ վըկայ խօսքիս:

ՏԻԳ

Գայլն որ ասէ քեզ մեղմա՛յ ,
Չը հաւատաս՝ մա՛յ տըղայ·
Ծո՛ւտ արա, կ'ասէ, Տէ՛րտէր,
Ոչխարն անցեր կու գընայ :

ՏԻԵ

Ճըգնաւոր է՝ միս չո՛ւտեր ,
Միայն լոպի՝ սոխ ու սըխտոր.
—Բայց թէ լաւ որս մի գըտնէր,
Նա չէր թողներ միսն ու ոսկոր:

### ՃԻԶ

Ճանը կ'ասեն թէ խածիր,
Նայյաստակին՝ թէ պրծիր.
Ես այսպէս բան չեմ տեսել. —
Խնկար, անապաս փախիր :

### ՃԻԷ

Եղբայր, խորաս թէ որ լսես,
Լաւ տես թէ ինչ խորաս է,
*Համ* կը թըրւացընեն ըզմեզ,
*Համ* կ'ասեն թէ *մուրթաս* է:

### ՃԻԸ

Գողը գողէն գողացաւ,
Դատաւորն վըրայ հասաւ,
Իւր բաժինն ընդունեցաւ.
Աստուած տեսաւ՝ զարմացաւ :

### ՃԻԹ

Մէկուն խաչիկ կ'ասէինք,
Խան-Ճամիէն հանեցին,
Միւսին տաճիկ կարծէինք,
Խաչը ծոցէն հանեցին :

**ՃԼ**

Աղուէսը ցատքեց ցատքըտեց,
Չըհասաւ կուզ կուզ խաղողին.
Կրկնեցաւ՝ դէպ ի վեր թըռեց,
Վա՛յ ասաց քո պէս ազոխին:

**ՃԼԱ.**

Աղուէսըն խաբուսիկ է,
Թող երթայ գայ հաւտունը.
Նորա վերջին երթալիքն է
Մուշտակ կարողի տունը:

**ՃԼԲ**

Շունը գնաց *ղասապխանէն*
Թէ ոտք բերէ *փաչախանէն*
Զարկին շան ոտը կըտրեցին
Դարձաւ եկաւ վընկվընկալէն:

**ՃԼԳ**

Մէկը մէկալը խաբելու
Մեծ խելք մը չէ հարկաւոր.
Մեծն ու պըզտիկը կըրթելու
Զի բաներ խելք չափաւոր:

ՃԼԴ

Տեսնես՝ հագածը ոչխարի մորթ է,
Ինքը գայլերու մեծ առաջնորդ է.
Շատը կարծէին՝ Հայ քրիստոնեայ է,
Յետոյ իմանան՝ կատաղի Թուրք է:

ՃԼԵ

Գայլն ինչ կուզէ,— մութ գիշեր.
Զարն ինչ կուզէ,— մութ օրեր.
Խաբեբան ինչ մարդիկ կուզէ, —
Միամիտներ՝ տգէտներ :

ՃԼԶ

Էն ջրիցը վախեցիր
Որ ոչ թըշշում է՝ ոչ խըշշում,
Էն մարդիցը վախեցիր
Որ վար նայում է՝ ֆըշֆըշում:

ՃԼԷ

Լաւ է փորձած սատանան
Քան թէ անփորձ հրեշտակը.—
Զէ որ հրեշտակ ձեւանան
Շատ անգամ չար դիւանքը:

**ՃԼԸ**

Օձն ամէն տեղ ծուռ ման կուգայ,
Բոյնը շիտակ կը մըտնի·
Խոյեցին իբր յոյն ման կուգայ,
Ձըմեռը տուն հա՛յ կը մըտնի :

**ՃԼԹ**

Դարմանի տակին ջուր ես ,
Պատեանի միջին քուր ես·
Քո ինչ եղածն ես լաւ գիտեմ ,
Դուն աչք ունիմ կ'ասես՝ կո՛ւր ես:

## ԻԱ.

### ԽՆԴՐՈՒԱԾՔ ԵՒ ՏՈՒՐՔ

**ՃԽ**

Զը խընդրողին բան մը մի՛ տար ,
Զը զարնողին դուռ մի՛ բանար·
Զէս տեսներ՝ մայրերըն անգամ
Զուզող տըղուն կար չեն իտար :

**ՏԽԱ.**

Խընդրողին մէկ երեսը սեւ,
Զը տըւողին երկուսն ալ.
Խոստացողին երեսը սեւ
Որ խոստացաւ ու չի՛տալ:

**ՏԽԲ**

Սար ու ձոր
Տէրտէրի փոր.
Ո՛րքան որ տաս,
Կ'ասէ՝ տո՛ւր տո՛ւր:

**ՏԽԳ**

Գիրքը շուտ շուտ կը կարդացուի
Երբոր ի փոխ առնըւած է.
Գիրքը ուշ ուշ կը կարդացուի.
Երբոր ծախու առնըւած է:

**ՏԽԴ**

Կ'ասեն թէ մեր *ղատւուն* կաշին
Թըմբկի վըրայ են անցուցեր.
Բանի որ կը զարնէին՝
Ողջին նըման տո՛ւր տո՛ւր կ'ասէր:

ՃԽԵ

Խըմորը մեծ՝ հացը մեծ,
Ջըրհորը մեծ՝ ջուրը մեծ.
Ինչ՞ անես դու իմ ազգին,
Քիչ տըւաւ՝ շատ պահանջեց:

ՃԽԶ

Պարտքը մարդուս մըտրակ է,
Պաղուկ սըրտի կըրակ է.
Ճուտով վըճարուած պարտքը
Մութ սըրտի վառ ճըրագ է:

ՃԽԷ

Պարտք ունեցողը չը մեռնիր,
Բայց երեսը կը դեղնի.
Սոված մարդըն ալ չը մեռնիր,
Աչուըները կը մըթնի:

ՃԽԸ

Շատ տըւողը գանձէն կուտայ,
Քիչ տըւողը անձէն կուտայ.
Պատուական է այն ընծան
Որ աղքատի ծոցէն կուգայ:

### ՃԽԹ

Ինչ որ այստեղ ձեռքովդ տաս՝
Այն ետեւէդ անդին կուգայ.
Ինչ որ թողուս՝ այնպէս գրնաս,
Ձես գիտեր՝ հոգւոյդ ո՞վ կուտայ:

### ՃԾ

Թէ մէկ լինէր աղքատը ,
Շաքարով կը պահէի.
Երբ աղքատ է երկրին շատը՝
Որ՞ մէկը բան մի շահի :

### ՃԾԱ

Խուրձ մը չոր խոտ ուտելով
Ուղտը սարեր անցեր է.
Փողերով ընծաներով
Ինչե՛ր առաջ գացեր է :

### ՃԾԲ

Քեզի թէ ձի ընծայեցին ,
Ակռաները մի՛ համրեր.
Թէ քեզի գինը հարցուցին ,
Դուն անոր գին մի՛ դրներ :

ՏԾԳ

Ձեռքըդ պարապ՝ դուռը զընաս,
Աղաներս քո՛ւն է կ՚ասեն.
Ձեռքըդ ընծայ մի ունենաս,
Աղա՝ ներս հրամմէ կ՚ասեն:

ՏԾԴ

Որբուկիս հաց ո՛վ կուտայ.
Խըրատ ամէն մարդ կուտայ.
Հաց թէ ունիս՝ տուր խընդրեմ,
Խըրատդ քովըդ մընայ:

ՏԾԵ

Ուղտին խո՛տ է հարկաւոր.--
Վիզ ունի, թող երկընցընէ.
Աղքատին հա՛ց է հարկաւոր,—
Լեզու ունի, թող բանեցնէ:

ՏԾԶ

Չափ մի ունի՝ *պարթևան* կ՚առէ,
Մէկ կը չափէ երկու կ՚առէ.
Ինչ բանի որ լըման առէ,
Գիտցիր որ մաս մի պակաս է:

ՃԾԷ

Թէ ամէն մէկ մօրուքէ
Միայն մին մին մազ խըլես ,
Մօրուքները մօրուք է ,
*Քօսան* մօրուանի կ'անես :

ՃԾԸ

Թէ փոխ ուզեն ու չը տաս՝
Կը քակուիս բարեկամէն.
Թէ փոխ ուզեն ու դուն տաս,
Գրնալիքդ է *մանիֆեստէն* :

ՃԾԹ

Տուր քուկին ունեցածըդ՝
Քանի որ բանը քէն է.
Մահուընէդ վերջ թողածըդ
Ուրիշին է՝ քոնը չէ :

ՃԿ

Քանց ամէն պարտատիրոջ
Պարտքըդ տուր վերին Տիրոջ.
Այս միայն է ճանապարհ
Որ մարդ *մուֆլուզ* ըլնի ոչ :

ԾԿԱ.

Լաւ է Հային պարտք ունենաս
Հոր մի հաց ,
Քան թէ Թուրքին պարտք ունենաս
Փոր մի հաց :

ԾԿԲ.

Երկու կարմրախայտ
Տանիմ Տէրտէրին ,
Նա ճարը կանէ
Իմ սրտի *տէրտին* :

ԾԿԳ.

Տուր սիրով՝ թէ կուտաս,
Փոխարէնը սէր կ'առնուս·
Փողըդ փոխ թէ կուտաս ,
Փոխարէնը հեռ կառնուս :

ԾԿԴ.

Ի ցոյցըս մարդկան երբ տըւիր ,
Երկու մեծ վըննասներ արիր·
Արած բարիքըդ վատնեցիր ,
Փող տըւիր՝ նախատինք առիր :

## ԻԲ

### ԽՕՍՔ ԵՒ ԳՈՐԾ

---

**ՇԿԵ**

Ձեռքինդ է ոսկի տըփիկ, —
Ինչ՞ ցան, մէջէն ձագը թըռաւ.
Սըրտիկըդ լաւ սըպըրկիկ, —
Ինչ՞ ցան, բերնէդ խօսքը թըռաւ :

**ՇԿԶ**

Կակուղ լեզու թէ ունիս՝
Օձը ծակէն կը հանես.
Ծակող լեզու թէ ունիս,
Սուրբը տընէդ կը վանես :

**ՇԿԷ**

Ամէն բան իւր ատենին,
Թէ ոչ՝ լեզուդ թող կըտրեն.
Անժամ խօսող աքլորին
Գլուխն յիրաւի կուկըտրեն ;

ՃԿԸ

Լեզո՞ւն է սուր՝ թէ սուր սուսեր. —
Հաւատա ինձ որ լեզուն.
Լեզուն անոսկր է մի սանր,
Կուջարդէ ինչ ոսկորներ :

ՃԿԹ

Սիրտ ասածըդ *պիլլոր* է,
Թէ կոտրի՝ չը կարկատուիր.
Խօսք ասածըդ կըլոր է,
Թէ գլորի՝ ես չառնըւիր :

ՃՀ

Խոց որ բացուի դանակով՝
Կը փակուի ժամանակով.
Խոց մը որ բացուի լեզուով՝
Չը փակուիր ոչ մէկ բանով :

ՃՀԱ.

Մէկ անխոհեմ խօսքն ինչ է. —
Աշխարհս իրար կը խառնէ.
Ճանճը ինչ է. ոչինչ է,
Բայց մարդու սիրտ կը խառնէ :

ՃԿԲ.

Հիմն աւազ է, շուտով կընկնի,
Շատ կը վազէ, շուտ կը յոգնի.
Դու մի՛ խաբուիր գոռգոռոցէն,
Փոթորիկ է, շուտով կ'անցնի:

ՃԿԳ.

Չեմ գիտեր՝ խե՞լքը պակաս է
Թէ սիրտը թոյնի թաս է.
Սրտին ուզածն որ միշտ կ'ասէ՝
Սրտին չուզածը թող լըսէ:

ՃԿԴ.

*Լափով* փըլաւ էփուիլ չի՛,
Բրինձ ու եղ է հարկաւոր.
Խօսքով բերդ առնուիլ չի՛,
Զէնք ու *կարիճ* է հարկաւոր:

ՃԿԵ.

Աշխարհըս թէ շինել պիտի,
Ձեռք առ լեզուն ու գրիչը.
Աշխարհըս թէ քանդել պիտի,
Ձեռք առ լեզուն ու գրիչը:

ՇՀԶ

Լեզուի նըման քաղցր ինչ կայ·
Մեղր ու շաքարը մէկդի·
Լեզուի նըման դառն ինչ կայ,
Թոյնն ու լեղին թող մէկդի:

ՇՀԷ

Մարդու մորթին չեն հագնիր,
Միսը մեզանում չուտուիր·
Մարդու լեզուն ինչ վայ է,
Համեղ քանզ հացն ու պանիր:

ՇՀԸ

Ով որ լեզուն կը սանձի,
Արտսումը գանձ կը գանձի.
Որ կուզայ որ այն գանձով
Գլուխը մահէն կը պրծի:

ՇՀԹ

Մէկ խօսքը բիւր բան կը շինէ,
Բիւր խօսքը մեծ բան կը քանդէ·
Դուն աղէկ խօսիլը գիտցիր,
Այլոց քանդածները շինէ:

ՃՁ

Կաց ու կռուի բանալու
Մի միայն խօսքը բաւ է.
Խաղաղութիւն անելու
Հազար խօսքը սակաւ է:

ՃՁԱ.

Կատակը անուշ պիտի՝
Բանց քաղցրը զինին անուշ,
Կատակն անձան որ լինի՝
Կը խոցէ չար քան ըզփուշ:

ՃՁԲ

Հազար լըսէ՝ մէկ խօսէ,
Տես դիմացինդ ինչ կ'ասէ.
Միայն լեզուին մի նայիր,
Հասկըցիր միտքը ինչ է:

ՃՁԳ.

Խօսքը *pkf* չէ՝ ջուխտակ է,
Մին ծուռ՝ միւսը շիտակ է.
Ով որ ուզածը կ'ասէ՝
Պէտք է չուզածը լըսէ:

ՇՁԴ

Թէ նա լեզու չունենար՝
Ախոռին մէջ կը կապէին.
Լեզուին հետ գըլուխ — մըլուխ
Մըկները կը տանէին :

ՇՁԵ

Խօսքի *սառաֆ* եղիր աղէկ,
Նայէ *խա՛մս* թէ պակաս է.
Ականջըդ երկու՝ լեզուդ մէկ,
Երկու լըսէ՝ մէկ խօսէ :

ՇՁԶ

Խօսք կայ որ եթէ ասես
Օրն անգամ մի՝ սակաւ է.
Խօսք ալ կայ՝ որ թէ ասես
Տարին անգամ մի՝ բաւ է :

ՇՁԷ

Անբանին սանձէն
Բանականին լեզուէն
Կը բռնեն մարդիկ՝ եղբայր,
Զգուշացիր ծուռ խօսքէն :

### ՃՁԸ

Մէկ փող տըւի՝ խօսեցար ,
Գըլուխըս դըրդում դարձաւ.
Սա տար փողն ու եղբայր ,
Դադրէ՝ դադրի գըլխուս ցաւ:

### ՃՁԹ

Ո՞վ է բըռնողը
Սոխակըն սիրուն
Վանդակ դընողը.—
Լեզո՛ւն է լեզո՛ւն :

### ՃՂ

Եթէ մարդուս ձեռքէն գար
Իրեն լեզուէն եկածը ,
Ամէն բոշա փաշա կըլլար ,
Վա՜յ էր մեր հայրենեացը :

### ՃՂԱ

Խօսքի որսորդ եղեր է ,
Խօսքը բերնէդ քաղեր է.
Ցանցը պարապ լարեր է,
Լորով [1]) լեցուն քաշեր է :

---

1) Լոր, Պըլտըրճին :

**ԾԴԲ**

Ես այն գիտունին մեռնիմ
Որ ինչ ասեմ՝ *ճուղապ* տայ.
Ի՛նչ քար որ վեր վերցընեմ՝
Նա տակէն ողջ դուրս կուգայ:

**ԾԴԳ**

Տաս արցունքը աչքին վընաս,
Անտաճ խօսքը անձին վընաս.
Քաջ մարդը մահէ չի՛ վախեր,
Բայց վատ խօսքը քաջին վընաս:

**ԾԴԴ**

Տաս մի՛ խօսիր յիմարին հետ ,
Քեզի ամօթ կը բերէ .
Լեզուին ինչ որ գայ խենթումենք՝
Համարձակ դուրս կը բերէ :

**ԾԴԵ**

Խօսքը կտրըճին կէսն է ,
Ուժ ու զէնքը միւս կէսն է .
Այս կէսը ձախի պէս է ,
Աջն աւելի գործ տեսնէ :

ՃՂԶ

Փողին սուտը՝ պակասը
Տիրոջն է, քեզ ի՞նչ վընաս.
Խօսքին սուտը՝ պակասը
Տիրոջն է, քեզ ի՞նչ վընաս:

ՃՂԷ

Նետը բըռաւ աղեղէն,
Ետ չը՛ դառնար՝ ա՛յ եղբայր.
Խօսքը բըռաւ քո բերնէն,
Ետ դարձընել չես կըրնար:

ՃՂԸ

Թէ գըլուխըդ պիտի կըտրեն,
Քո բըրովըդ չը կըտրեն.
Թէ մեղապարտ անեն ըզքեզ,
Քո ասածովըդ չանեն:

ՃՂԹ

Միթէ Հայ աղբար քի՞չ է,
Որ ի՛նք գրէ՝ ինք կարդայ.
Տըկճորն ի՛նքը կը փըչէ
Ու ինք մինակ պար կուգայ:

Ռ

Կուզես որ լինիս հանգիստ,—
Խուլ եղիր ու տեղըդ նիստ.
Կուզես որ թողնես հանգիստ,
Մունջ եղիր ու տեղըդ նիստ:

ՌԱ.

Թէ ասեմ՝ *շատ* կը լինի,
Թէ չասեմ՝ ցաւ կը լինի.
Արդէն սիրտըս ցաւած է,
Չեմ ասեր, թող ցաւ լինի:

ՌԲ.

Մի ասեր՝ որ չը լըսես,
Մի աներ՝ որ չը գըտնես,
Մի տար որ չը սովրեցընես,
Վրայ մի տար՝ չըճանճրացնես:

ՌԳ.

Խօսքին սուտը սակաւ է,
Սըխալ խօսքեր անբաւ է.
Թէ կ'ասեն՝ այս այսպէս է,
Ասա, գուցէ այնպէս չէ այսպէս է:

ՈԴ

Թուրքն ասաց՝ կեր, յետոյ խօսէ,
Հայն ասաց՝ *համ* կեր *համ* խօսէ.
Քուրդն ասաց, թող ես ուտեմ,
Դուն որքան ուզես՝ խօսէ:

ՈԵ

Մեր երկրումը ամէն մարդ
Նախ խորհի՝ յետոյ խօսի.
Ո՞ր երկրի մարդ է այն մարդ
Որ խօսի՝ յետո՛յ խորհի:

ՈԶ

Շատ բան արա՝ քիչ խօսէ,
Շատ մըտմըտա՝ շատ լըսէ.
Խօսքը արծաթ է կ'ասեն,
Լռութիւնը ոսկի է:

ՈԷ

Եղբայր՝ մ՛յն բան մի՛ աներ
Ինչ որ ասել չես կարող.
Եւ առաւել մի՛ ասեր
Ինչ որ անել չես կարող:

ՈԸ.

Թըռչունը կուտով բըռնես ,
Մարդը արծաթով բըռնես .
Գողն ո՛րքան վարպետ լինի՝
Տես որ խօսքերէն բըռնես :

ՈԹ.

Ծորերուդ կը նային ,
Հրամայէ ներս կ'ասեն .
Խօսքերուդ կը նային ,
Հրամայէ դուրս կ'ասեն :

ՈԺ.

Դերձանը բըռնիր զընա ,
Կը հասնիս կըծիկին մօտ .
Խօսքին ծայրը առ զընա,
Կը հասնիս սըրտիկին մօտ:

ՈԺԱ.

Խօսք տըւիր ,
Խօսքիդ վըրան ամուր կեցիր .
Խօսք չի տըւիր ,
Դիւրաւ մի՛ տար, ամուր կեցիր:

**ՌԺԲ**

Բան քէ պատմես՝ դուն մի՛ խընդար
Հանոցի հաւերուն պէս ,
Որ ձուն կածեն այլոց համար ,
Ու կըռկըռան քէ արի տես :

**ՌԺԳ**

Քիչ բարձիր ,
Տուտ դարձիր ·
Քիչ խօսիր ,
Տաս լըսիր :

**ՌԺԴ**

*Նաղլաթ* ասեմ այն *հանաք*ին
Որոյ կէսը գործ չը լինի ·
Դըժուա՛ր քէ այնքան խօսքին
Դէք մէկ բանին գործ չը լինի:

**ՌԺԵ**

Հարցմունք անե՛լն է դըժուար
Թէ պատասխան անելը · —
Հարցմունքին լա՛ւն է դըժուար
Քանց լաւ պատասխան տալը :

ՃԺԶ

Ջապէս լինէր՝ էնպէս լինէր անելով
Իֆլիսը Թիֆլիս չը՛ լինիր·
Քռուին տեղը մին ծով լինէր անելով
Թիֆլիսը Պօլիս չը՛ լինիր:

ՃԺԷ

Ձու ածան հաւը
Կռկռա։ն կըլլի,
Աչքաբաց Հայը
Կռուըռան կըլլի:

ՃԺԸ

Մըտմըտայըն գիտնալ չէ,
Գիտնայըն գործ տեսնալ չէ·
Մէկ մի եսեւ՝ մէկ մ'առջեւ
Քայլելն առաջ երթալ չէ:

ՃԺԹ

Հազար անգամ մեղր ասա,
Մ'իբէ բերանդ անուշնա՞յ·
Խոշոր խօսքէ շահ չը կայ
Երբոր ծայրը գործ չըկայ:

**ՈՒ**

Ով մարդու մէջ չէ մըտեր ,
Խամ պըտուղ է՝ մի՛ ուտեր .
Խամ մարդուն թէ գործ մը տաս,
Պէտք է դուն ալ հե՛տ զընաս :

**ՈՒԱ**

Թուրքն անիրաւ ,
Խօսքըն իրաւ ,
Ո՛րքան իրաւամբ կ'ասէ ,
*Լաֆ ըլան պիշմէզ փիլաւ* :

**ՈՒԲ**

Քուրդն անիծած ,
Խօսքն է օրհնած .
Խօսքն անիծած ,
Միտքն է օրհնած :

**ՈՒԳ**

Ինչ որ այսօր կարող ես՝
Մի՛ թողուր վաղուի օրին .
Ինչ որ անձամբ կարող ես՝
Մի՛ յանձներ մէկ ուրիշին:

ՌԻԴ

Արի աղբար՝ եփենք ճալուայ,
Միայն ալիւր ու եղ չը կայ.
Աքար՝ տապակ՝ մեղըր չը կայ.
Թէ չէ՝ ուրիշ ամէն բան կայ,

---

ԻԳ.

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԿԱՐԳ ԿԱՆՈՆ

---

ՌԻԵ

Գայլուն պահ տըւին գառը,
Կատուին գառան ճիկարը,
Թըրքին խընձորի ծառը.—
Ապուշ մընաց խիկարը:

ՌԻԶ

Թէ լաւ հօգաս՝ բուրաստան,
Թէ չը հօգաս՝ մացառստան.
Հայն է իւր տանը քանդող,
Ինչ անէ խեղճ Հայաստան:

**ՃԻԷ**

Թան ծախողը թէ կոյր է,
Թան առնողն ալ կոյր պիտի.
Աչքաբաց ժողովրդին
Առաջնորդը սո՛ւր պիտի:

**ՃԻԸ**

Գառն ու մաքին ինչ անէ,
Նոխա՛զ առաջնորդ հոտի.
Խեղճ ժողովուրդն ինչ անէ,
Ձուկն ի գլխէն կը հոտի:

**ՃԻԹ**

*Իմամ*ն որ *նամազ*ն աւրէ,
*Հալխի* նամազն ո՞ւր մնայ.
Տէրան միրուքն որ կրտրէ՝
*Հալխի* գլխին մազ մնա՞յ:

**ՃԼ**

Այդ ընդարձակ աշխարհի տէր
Իշխանն այդպէս պառկելու չէ.
Քառասուն հազար ոչխարի տէր
Ճունը հանգիստ պառկելու չէ:

### ՃԼԱ.

Ոչխարք ունի, լաւ տուն չունի,
Գայլէն ընտիր պահպանի·
Աշխարհք ունի, իշխան չունի,
Նա ընտիր կառավարի :

### ՃԼԲ

Երկու նաւաստես
Ունող նաւակը
Տուտով կը գընայ
Ծովուն յատակը :

### ՃԼԳ.

Անխելք գըլխին ձեռացը
Խեղճ ոտքըն ինչ կը քաշէ.
Անմիտ մեծին ձեռացը
Ժողովքըն ինչ կը քաշէ :

### ՃԼԴ.

Հովիւ չունող ոչխարները
Կը ցրուին սարեր ձորերը·
Ի՞նչ կը զարմանաս դու՝ եղբայր
Որ ցիրուցան են Հայերը :

**ՈՂԵ**

Լաւ է լինիմ իշու խալամ
Քան թէ՝ առիւծու ագի·
Լաւ է ինչ որ եմ այն մնամ
Քան թէ գըլուխ վնա́ս ազգի :

**ՈՂԶ**

Թէ ուղտը պարել սովրի ,
Արջը կար կարել սովրի ,
Մեր Քուրդն ալ մեր աշխարհը
Կառավարել կը սովրի :

**ՈՂԷ**

Եկողը գընացողին
Ողորմիս հանել կուտայ·
Թէ գէշ ասէ գընացողին՝
Ջինքը տեղէն հանել կուտայ :

**ՈՂԸ**

Փոր ծախողին լաճ ու սանը
Ծունն է ու շան լակոտը·
Բռնաւորին մեծ իշխանը
Քուրդն ու Քրդի լակոտը :

**ՈԼԹ**

Տըկլորը բարձըր սարն ելաւ,
Սարին անունը խաղք արաւ·
Մեր աքաղաղը բէկ եղաւ,
Բէկի անունը խաղք արաւ:

**ՈԽ**

Աղուէսն ի մեր մարագին
Ձագ հաներ է, ինչէ՛ն է.—
Մեր ընծերուն ու հովուին
Ինչք՛ս պէտք ասելէ՛ն է:

**ՈԽԱ.**

Որդին գընայ՝
Հէրը հե՛տը·
*Մալը* [1]) գընայ՝
Տէրը հե՛տը:

**ՈԽԲ**

Ես վարպետ մարդ անո՛ր կ'ասեմ
Որ չըստիպեր՝ կը յորդորէ·
Առաջնորդ էլ անո՛ր կ'ասեմ
Որ չը հրամեր՝ կ'առաջնորդէ:

---

1) Մալ Արջառ եւ ոչխար:

ՌԽԴ

Քանի մեր Հայը չունի քաղաքոր,
Ամէն մարդ աղա, բէկ, խանէ դարձեր
Թէ յանկարծ կանգնէրմէկըքաղաքոր
Զրգիտեմ քանի զինուոր կը գտնէր:

ՌԽԴ

Ասեղը ուր որ մըտնի՝
Դերձանն ետեւէն կ'երթայ.
Առաջնորդն ուր որ տանի՝
Ժողովուրդը հոն կ'երթայ:

ՌԽԵ

Ձուկըն գըլխէն կը հոտի,
Ջուրըն գըլխէն կը կըտրի.
Ինչ՞ ասեմ այն խեղճ ազգին
Որ գիժ գըլխու հանդիպի:

ՌԽԶ

Ուղտն ելաւ՝ փիղը նըստաւ,
Փիղն ելաւ՝ ուղտը նըստաւ.
Ինչ որ եղաւ՝
Խեղճ Հայաստանին եղաւ:

**ՃԽԷ**

Տէրտէր արա՝ գեղը գրծի ,
Թէ չի այրի՝ գեսը գրծի . —
Ես քնչ կ'ասեմ . — այդ ասողին
Ծրտէն բըռնիր՝ գեսը գրծի :

**ՃԽԸ**

Կովը ծորթին ,
Հորթը կովին ,
Գլուխը ցաւի
Նախրարածին [1] :

**ՃԽԹ**

Թէ բան գործ չունիս՝
Եղիր գըլխաւոր .
Թէ փող շատ ունիս՝
Լեր երաշխաւոր :

**ՃԾ**

Ծիտերն ասին խիկարայ ,
Ազռւան առինք մեզ ընկեր .
Ասաց, միրտւքըս վըկայ ,
Աղբիւսից դուրս չէք ելներ :

1) Նախրարած, դուար քշող :

**ՈՃԱ.**

Ինչ՞ զարմանաս թէ յոյս չըկայ
Անկարգ երկրէն՝ վաս մարդէն.
Փողի [1]) միջում *փիչըռաւ* չըկայ,
Ինչ՞ ձայն ելնէ՝ քո բաղդէն :

**ՈՃԲ**

Զըմեռուկին երկուսը
Մէկ թեւի տակ չը մեկնիր.
Այս տունին նեռան ու դուռըր
Մինակ հոգալու չես հասնիր :

---

## ԻԴ

### ԿԱՏԱՐԵԼՈՒԹԻՒՆ ԵՒ ՊԱԿԱՍՈՒԹԻՒՆ

---

**ՈՃԳ**

Կ'ասես՝ քան զայս լաւն արա,
Ասելը դըժուար բան չէ.
Ես կ'ասեմ՝ դու այսքանն արա,
Ցեսոյ լաւը պահանջէ :

---

1) Փող, Պոռու, պօռազան :

**ՌԾԴ**

Ամէն շէնք շընորհք մէկտեղ չըլինէր,
Առանց պակսութեան մէ՛կտեղ չլինէր
Ադամ ի դրախտին մեղաց մէջ ընկաւ
Ադամայ որդին անմեղ չը՛լինէր :

**ՌԾԵ**

Վարդը հարկաւ փըշեր ունի,
Մարդը հարկաւ գէշեր ունի.
Միսը՝ ոսկոր, ծառը՝ շուք,
Ցորեկը գիշեր ունի :

**ՌԾԶ**

Եզին լաւը՝ լըծին տակ,
Կընկան լաւն օրոցքին տակ,
Ճորտի լաւն ո՛ւր յայտնի լինի, —
Գոռոզ տիրոջը ձեռին տակ :

**ՌԾԷ**

Կօշիկ մաշիկ կարկատողն ալ
Կօշկակարին նըման է.
Գիր ու գըրուած թարգմանողն ալ
Հեղինակին նըման է :

**ՈԾԸ**

Մեղր ու շաքարն ինչ անեմ
Միջին թէ թոյն է խառնած.
Պանիրն աղէկ՝ ինչ անեմ
Որ շան տըկումն է լըցած:

**ՈԾԹ**

Խուլ ու մունճէն,
Կաղէն կուզէն
Վախցիր՝ եղբայր,
Կրակ ու բոց են:

**ՈԿ**

Բերանը ծուռ,
Աչքը ծուռ,
Ծոծրակէն տես՝
Ճամբայ տուր:

**ՈԿԱ**

Հասակով զաճաճ,
Սըրտով ինքնահա́ճ
Մարդէն հեռու կաց,
Աստուած է գըլխուն զարկած:

**ՈԿԲ**

Ծովուն խուփի յարմարացընել ,
Երկընքի սիւն յարմարացնել
Գուցէ այնքան դըժար չըլնի
Որքան քեզ արդարացնել :

**ՈԿԳ**

Հաստկն երկայն՝
Խելքը կարճ ,
Ինչն՞ է պակաս,—
Երկայն անկաճ :

**ՈԿԴ**

Քոսին ո՛վ որ տընազ անէ՝
Ինքը լա՛ւ մօրուք ունենայ .
Կուրին ով որ տընազ անէ՝
Ինքը ծակի աչք ունենայ :

**ՈԿԵ**

Մօլլին հարցրեր է Քուրդը ,
Մածնով *ապտկութ* կ'առնըւք .
Մօլլան թէ՝ ասէ՛մ ղորդը ,
Կ'առնըւի *հալա փիիս* կըլի :

### ՈԿԶ

Որդի, ինչո՞ւ ես դու խըլնոտ. —
Պա՛պի, ձըմեռն է, ի՞նչ անեմ. —
Ձըմեռն ի՞նչ անէ, մա՛յ լակոտ,
Ես քո ամառըն ալ գիտեմ:

### ՈԿԷ

Ուղտին հարցին, ո՛ւղտ աղբար,
Ինչէ՞ն է ծուռ քո կուռը [1].
Պատասխանեց, չեմ խապար,
Բայց ո՞ր տեղըս չէ ծուռը:

### ՈԿԸ

Պըտուկը պըտկին նախատեց,
Ասաց, կորիր սեւերես.
Սըխտորգուշը այն որ լըսեց,
Թքեց երկուսին ալ երես:

### ՈԿԹ

Կոյր ո՞ւմ ասեմ, խուլ ո՛ւմ ասեմ. —
Երկու հեղ հոր ընկնողի կոյր կ'ասեմ
Երկու անգամ խօսք լըսողին
Ու չանողին խուլ կ'ասեմ:

1) Կուռ, Կռնակ:

## ԻԵ

### ԿԱՐԴ ԿԱՆՈՆ ԵՒ ԺԱՄԱՆԱԿ

---

**ՈՀ**

Նախ տես՝ ապա զարմացիր,
Նախ տուր՝ ապա պահանջիր.
Նախ կեր՝ ապա գոհացիր,
Նախ ցանիր՝ 'ւ ապա հընձիր:

**ՈՀԱ**

Ջուրը պզտըկին,
Խըրատը մեծին.
Թուրը կըտրճին,
Գանգատը մեծին:

**ՈՀԲ**

Ծովի ձուկը չը բըռնըւած՝
Ձուկի ծախսին մի՛ նըստիր.
*Մահմէմին* դաշի չեղած՝
Դաշի *ֆուրսին* մի՛ նըստիր:

**ՈՀԳ**

Աշխարհիս մէջ ամէն բան
Կամաց կամաց կարգի կուգայ․
Սանդուխն աստիճան աստիճան,
*Սազը տիւզէնով* համ կուտայ :

**ՈՀԴ**

Ամէն բան տեղը կուգայ,
Հոգ մի՛ աներ դուն աղբար․
Միայն *քօսան* մնայ *քօսա*
Ու մեռածը չո՛ղջըննար :

**ՈՀԵ**

*Եափունճան*՝ անձրեւ օրին,
Ուտել խըմելը խեւ օրին․
Ըզբօսանքը թեթեւ օրին,
Ճերմակ ըստակը սեւ օրին :

**ՈՀԶ**

Այս ժամանակս ու երկիրս
Ձե՛ն յարմարիր քո խելքիդ,—
Խե՛լք, նայէ դո՛ւն յարմարիս
Ժամանակին ու երկրին :

### ՈՀԷ

Վարդն անցաւ՝ գարունն անցաւ,
Սոխակը ծովերն՝ անցաւ.
Ո՛ւմ ասեմ՝ ո՛ւմ գանգըտիմ,
Առիթը ձեռքէս թըռաւ :

### ՈՀԸ

Որ կայ ճերմակ ու պայծառ
Որ երեսիդ հուր կուսայ.
Որ կայ սեւ, մուք ու խաւար
Որ երեսիդ մուր կուսայ :

### ՈՀԹ

Թող դըժուար լինի,
Թըշուառ չըլինի.
Փոքր ինչ ո՛ւշ լինի,
Բայց անո՛ւշ լինի :

### ՈՁ

Ուշ եկողին պաղ ապուր,
Ապուր չըմնայ՝ քանապուր.
Լաւ էր փոքր ինչ վա՛ղ գայիր՝
Քան թէ էս հէնց *պիապուր* [1]) :

---

[1]) Ամօթալից :

### ՌՁԱ.

Խելօքը մունճ է նըստեր՝
Խորունկ խորունկ միտք կ'անէ.
Խեւը մէկ որդին կարգեր՝
Մէկալին հարսնիք կ'անէ:

### ՌՁԲ

Օգոստոսի կէսն ամառ է՝ կէս ձըմեռ.
Բարով եկան Սեպտեմբերն ու Հոկտեմբեր ,
Չը տեսնէի Նոյեմբերն ու Դեկտեմբեր ,
Տարին լինէր երկու ամառ՝ մին ձըմեռ :

### ՌՁԳ

Ուքսուն տարու մարդ տեսայ ,
Սովրէր *սազին տիզկնը*·
Ասի՝ Ե՞րբ կը չալէ սա ,
Ասաց , հոս չէ՝ անտէնը :

### ՌՁԳ

Որսի շունն որ էտին նայի՝
Կը փախչի նապաստակը.
Նըշան առնողն որ ծուռ նայի՝
Ու՞ր կը մնայ նըպատակը :

**ՈՁԵ**

Պառաւըն այնքան պառւեցաւ,
Երեսըն այնքան քոռմեցաւ,
Որ մին վրկայ չի գըտուեցաւ
Թէ նա տղայ էր՝ մեծացաւ։

**ՈՁՁ**

Անկողինըդ չը մըտած՝
Հալաւներըդ չը հանես․
Գերեզմանըդ չը մըտած՝
*Մաշըդ մուշմըդ* չը քաժնես։

**ՈՁԷ**

Թէ ժամանակը
Եւ քէ ըստակը
Թէ չը կորըսնիս՝
Բաւական ունիս։

**ՈՁԸ**

Սեղան ձըգելու տեղնին հասիր,
Ժամն ըսկըսելու տեղնին հասիր․
Թէ ժամն արձակուի ու յետոյ հասար
Սոված եկել ես, սոված ես դարձիր։

ՈՁԹ

Մինչեւ հասցը բարակցաւ՝
Մենք եղանք բարակացաւ․
Մինչեւ հերքը մեզ հասաւ ,
Վաղուի լոյս վըրայ հասաւ։

## ԻԶ

ԿԱՐԾԻՔ ԵՒ ԿԱՍԿԱԾԱՆՔ

ՈՂ

Ուրիշներն ընտրր գիտես․ —
Ինծի պէս ։
Ուրիշն ընտրր գիտէ քեզ ․ —
Քեզի պէս ։

ՈՂԱ

Աշխարհիս զուր արեր է ,
Ինքը բերան եղեր է․
Աշխարհք ինչ կ՚ասէ ասելով
Էշին սիրտը կը պըղտորէ ։

### ՌՂԲ

Մարդիկ ի՛նչ կ'ասեն՝ թող ասեն,
Դուն մի՛ ծռիր ուղիղ ճամբէն.
Եթէ կուզեն՝ թող ըսպասեն,
Երբոր դառնաս գաս՝ կը տեսնեն :

### ՌՂԳ

Գիտցող չը գիտցող ի՛նչ ասէ՝
Դուն քու պարտքդ լաւ կատարէ.
Թող պատահի ի՛նչ որ կուզէ,
Աստուած ի բարին կատարէ :

### ՌՂԳ

Ջը կարծած քարէդ
Գըլուխ կը ճաքի.
Ջը կարծած տեղէդ
Ճագար [1]) կը ցատքի :

### ՌՂԵ

Մեզանումը թէ խօսք լինի,
Կ'ասեն՝ երկիրն ի՛նչ կ'ասէ.
Փռանկըստանումը խօսք լինի,
Կ'ասեն՝ տես գիրն ի՛նչ կ'ասէ:

---

1) Ասա Թավշանը :

**ՈՂՋ**

Վախցիր վար նայող մարդէն,
Կընկան աւելորդ զարդէն,
Անօնցմէ՝ որ գործ չեն տեսներ՝
Ու խօսքով մեծ մեծ կը չարդեն:

**ՈՂԷ**

Առիւծը մեռաւ գընաց,
Բայց նորա մորթը հին է.
Մեր *տալրիշ* մեռաւ գընաց,
Բայց նորա նորտը հոն է:

**ՈՂԸ**

Արջը հաւկիթ ածեր է
Կ'ասեն՝ Խիկար, իրա՞ւ է.—
Արջն անձոռնի բան մի է,
Ածեր է նա՝ ածեր է:

**ՈՂԹ**

Մեր տիրացուն Տէրտէրին
Հա՛րց թէ ինչպէս կը նայի.—
Ինչպէս որ ուղտ պայտառին
Ձեռքն ու երես կը նայի:

Ջ

Երկու բանի չը նեղանաս մ՛տղայ,
Թէ նեղանաս՝ գիտնաս որ ճանհ մի չը կայ.
Մէկ մի օղոց փոփոխութեանը վրայ,
Մէկ մ'այլ երկրի կառավարութեան վրայ:

ՋԱ.

Թեթեւ ամպերէն կը թըրչի,
Ջուրը չը խըմած կը փըչի·
Թէ մին մոծակ բըզզայ վերէն՝
Կ'ասէ թէ ուրուր կը թըռչի:

ՋԲ

Գողը մընի մեղքը տարաւ,
Կոյրընողը հարիւրի·
Զար կասկածըն ինչեր չարաւ,
Իրար խառնեց չարն ու բարի:

ՋԳ.

Համբերութեան ծառը դառն է,
Բայց պըտուղը մեղր ու ճաշար·
Փափկութեան ծառը մայառն է,
Պըտուղը փուշ ու *գաhրու մահր*:

ՁԴ

Կոյրը կոյր է , լաւ չ՚ի տեսներ,
Բայց փոքր ինչ կը նշմարէ·
Աշխարհը հաստատ չ՚ի գիտեր ,
Բայց բան մի կը կռահէ :

---

## ԻԷ

### ՀԱՄԲԵՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՆԵՂՍՐՏՈՒԹԻՒՆ

ՁԵ

Հարըստին սիրտը հանգիստ,
Աղքատն այրի կը տոչորի·
Մինչ հարըստին կամքը լինի,
Աղքատին կեանքը վըճարի :

ՁԶ

Հալածանք ու նեղութիւն
Խարտոց է մարդու հոգուն·
Կը հանէ ախտից աղտը ,
Կ՚անէ ցոլուն ու սիրուն :

ՁԷ

Ըսակ կորուսիր, բան չըկորուսիր,
Ասեն կորուսիր, շաս բան կորուսիր.
Համբերութիւնըդ կորուսիր,
Ափսոս, ամէն բան կորուսիր:

ՁԸ

Երեք անհամ բան ուրիշին համ կուտայ,
Անօրութիւն՝ որ չոր հացին համ կուտայ,
Մաստիկ ծառաւ, պըղտոր ջըրին համ կուտայ
Եւ աշխատանք որ հանգչողին համ կուտայ:

## ԻԸ

### ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՂՔԱՏՈՒԹԻՒՆ

ՁԹ

Ցոյս չը դըներ բըզակի,
Զասեր՝ չըկայ ինծի պէս.
Հով մը փըչէ յանկարծակի,
Կը ցըրուէ փոշիի պէս:

ՁԺ.

Հարուստն որ կը ծերանայ ,
Սիրտովը կ'աղքատանայ
Հրեան որ աղքատանայ :
Հին հաշիւներ կը գտնայ :

ՁԺԱ.

Շունը տան միսը չուտեր
Թէ առաջն ոսկոր չունի.
Ոսկորի կըտոր մը ձի՛գ ,
Տես կըռիւն ընտո՛ր կըլնի :

ՁԺԲ

Ինչ՞ անէ ոսկի *թասը*
Երբ *թասն* է արիւնով լի.
Ինչ՞ անէ խաղն ու *սազը*
Երբ սիրտն է արիւնով լի :

ՁԺԳ.

Հարուստ մարդը հարըստին
Կը բերէ հարուստ ընծայ.
Հովուիս ընծան է ռեսին [1]).
Ընդունէ, սիրտըս ցընծայ :

---

1) *Զամ պագըզը* :

ՉԺԴ

Խիկար, անշուր չըրաղացին
Փողրակն ինչ է՝ ուրդն[1]) ինչ է.
Անողորմ մեծատունին
Ըռզակն ինչ է՝ գուքն ինչ է:

ՉԺԵ

Եղբայր, ով որ *պաղ* ունի՝
Սրտին մէջը *տաղ* ունի.
Ով որ շատ խաշինք ունի՝
Բաղդին հետ դաշինք ունի:

ՉԺՁ

Ունեւորը քարձրը սարէն
Սայլ ու կառքերը կ'անցընէ.
Չըքաւորը դուրան դաշտէն
Շիտակ ճամբան կը կորսընէ:

ՉԺԷ

Հայր կ'ասեն հարուստ է,
Վասըկածը կորուստ է.
Ազգին ազգէն ինչ օգուտ,
Մեր պատիժն ի վերուստ է:

---

1) Ջրի ճամբայ, Օլուք:

ՉԺԸ

Տանտիրոջ տունը մէկ է,
Վարձուորին հազար մէկ է.
Ես մէկ տուն մի ունենամ,
Հազար մէկէն աղէկ է:

ՉԺԹ

Հարըստին ծոցը փող կայ,
Աշխեռուն վըրայ խօղ կայ.
Կը նայի՝ բայց չը տեսներ
Թէ իր տանը մէջ գող կայ:

ՉԻ

Ուղտն աննոռնի կենդանի
Թէպէտ ընկնի կործանի,
Նորա բամբ ու պախուցը
Իշու մը բեռ կը լինի:

ՉԻԱ

Նաւու մեծին շարժումը մեծ,
Լեռան մեծին զոռումը մեծ.
Մի նախանձիր դու մեծերուն,
Նոցա սըրտին դողումն է մեծ:

ՃԻԲ

Չըքաւորն որ ունիմ ասէ,
Կարծես՝ ամէն բարիք հոն է.
Ունեւորն որ չունիմ ասէ,
Կարծես՝ ամէն չարիք հոն է:

ՃԻԳ

Թէ առողջ ես՝ ունեւոր ես,
Ունեցածիդ յարգը գիտցիր.
Թէ հիւանդ ես՝ չըքաւոր ես,
Հիւանդութեան ճարը տեսիր:

ՃԻԴ

*Մաշը*՝ մաքին,
*Մուշքը*՝ այծին,
Ուրախութիւն՝
Դուստր ու որդին:

ՃԻԵ

Աղքատն ունի հաց ու պանիր,
Գիշերը քունը չի՛տանիր.
Հարուստն ունի ճաշ *ճականիր*,
Գիշերը քունը չիտանիր:

ՁԼԸ

Կուշտը ի՞նչ գիտէ սովածին հալէն.
Քուրքուրն ի՞նչ գիտէ պաղածին հալէն
Խիկար՝ դու գըլխիդ ինքըդ ճարը տես
Հարուստն ի՞նչ գիտէ աղքատին հալէն:

ՁԼԹ.

Ծընծղուկն ալ կ'ապրի կ'ասես,
Բայց վա՜յ անոր ապրածին.
Ոսկերուն գիրուցը տես,
Կը զարմանաս ապրածին:

ՁԽ

Քու լայն օրիդ նեղ քալէ
Որ լայն քալես նեղ օրիդ.
Եարի հետ մէկտեղ քալէ
Որ անէ ճար նեղ օրիդ:

ՁԽԱ.

Հարըստէն բան մի առիր՝ շուտ անցիր
Հետը բան գործ մի՛ ունենար.
Աղքըտէն ըզգուշացիր ու անցիր,
Հետը բան գործ մի՛ ունենար:

ՁԻԶ

Արծաթ ոսկի շատ՝ քեզ անեմ,
Երբ շէնք ու շնորհքը չըկայ.
Շէնքն ու շընորհքը քեզ անեմ
Երբ հասկացողը չըկայ:

ՁԻԷ

Ուժեղին հետ մի կըռուիր,
Կըռնակըդ գետնին կուտայ.
Հարըստին հետ մի կըռուիր,
Գըլուխըդ *դատւոյն* կուտայ:

ՁԻԸ

Ով որ արտումը ցան ունի՝
Եկեղեցումը ձայն ունի.
Ով որ իշխան կըռնակ ունի՝
Ամէն տեղ բաց դըռնակ ունի:

ՁԻԹ

Ո՞վ է հարուստ, ո՛վ խիկար.—
Հարուստ նա չէ որ ունի,
Այլ նա՛ է՝ որոյ համար
Ունեցողը մեծ յարգ չունի:

ԶԼ.

Ո՞ւմ խօսքը անցուկ կը լինի · —
Հարըստին ու սիրեկանին · —
Ո՞ւմ խօսքը մոռցուկ կը լինի · —
Աղքատին ու հեռաւորին :

ԶԼ.Ա.

Հարուստն ինչ է պարզեւած
Որ աղքատըս չընդունի ·
Երկընքէն ինչ է եկած
Որ աշխարհըս չընդունի :

ԶԼ.Բ.

Աստուած իրեն խեռ ծառան
Աղքատութեամբ կը սանձէ ·
Աղքատին համբերութեան
Վարձը յերկինքըս կը գանձէ :

ԶԼ.Գ.

Խիկարը ինչ ժառանգութիւն
Թողել է իրեն որդւոյն · —
Մին փոքր այգի, լաւ կըրթութիւն,
Լաւ օրինակ, չարքաշութիւն :

### ՁԼԴ

Մէկ ուտեմ՝ հազար փառք տամ,
Գոհ լինիմ իմ վիճակին.
Աշխարհըս թէ ունի մէկ համ,
Զարքաշինն է այն բաժին:

### ՁԼԵ

Կուրին ասին, կո՛յր աղբար,
Մոմը թանկ է *պազարը*.
Ասաց, ինձի ի՞նչ աղբար,
Ինձ համար չէ այդ *խապարը*:

### ՁԼԶ

Դերձկին՝ տընէդ ե՛լ ասին,
Ժողվըտէ կահ կարասի. —
Ասեղը գըլխին զարկաւ,
Ասաց, ահա գընացի:

### ՁԼԷ

Ասին, բո՛շա՝ հովն է հիւսիս.
Ասաց, փըչէ՛ փըչէ՛ հիւսիս.
Մէկ բոշայի շունչն որ քաղես՝
Զըգիտեմ ի՞նչ պէտք է շահիս:

ՁԽԲ

Վար ընկնողին ձեռքէն բռնես,
Աստուած քու ձեռքէդ կը բռնէ.
Վար ընկնողին ոտքով զարնես,
Աստուած ալ գլխուդ կը զարնէ:

ՁԽԳ

Թէ որ ամէն բան կորսընես
Ու գտնելու յոյսդ կտրես,
Շապիկդ կը կտրատես
Ու վէրքերուդ պատան կ'անես:

ՁԽԴ

Հայաստանումը ման գալիս
Ինձի փող տաս չը պիտէր.
Փողս առաս ի կամարիս՝
Ապրուստի բան չէի գտներ:

ՁԽԵ

*Պազարումը* ո՞վ կառնու
Թանկ բանկ բարին կամ չարը. —
Ոչ փողատէր մարդը, ոչ,
Այլ աղքատիկ *ճաւչարը*:

**ՁԽԶ**

Ինչ՛ առուտուր անես արա *պազարը*,
Հացի առուտուր մի՛ աներ *պազարը*.
Քեզ չը՛ մընար աղքասաց *անուզարը*
Ասել է որդւոյն խիկարը :

**ՁԽԷ**

Ոսկի ունէր՝ ձի ունէր ,
Ծախեց՝ ծախոտեց, կին առաւ,
Այգի ունէր՝ արտ ունէր ,
Փոխեց փոփոխեց՝ *տարտ* առաւ:

**ՁԽԸ**

Հաց ու պանիր ի ձեռին ,
Նըստած ի ներքոյ ծառին
Մոտ կարկաչուն առուակին,—
Աղամ Եւա ի դրախտին :

**ՁԽԹ**

Թէ պազարումն ինչ որ տեսար՝
Փողը կուտաս՝ կը գընես ,
Օր կուզայ որ ինչ որ ունիս՝
Կը ծախես որ հաց գըտնես :

# ԻԹ

## ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹԻՒՆ

---

ՁԾ

Երեք բան կայ որ մարդուս հետ ծընանի ,
Սէր ապրելոյ յայսմ անցաւոր աշխարհի ,
Երկիւղ մահու՝ ո՛րքան եւ ուշ պատահի ,
Սէր գիտութեան ամէն բարւոյ եւ չարի :

ՁԾԱ

Սրկընքումը թէ ասեն
*Թամաշա* կայ՝ *սէյրան* կայ ,
Կանայք սանդուխ կը դընեն
Որ տեսնեն թէ հոն ի՞նչ կայ :

ՁԾԲ

Աշխարհըս երբ կը վերջանայ ,
Շատ մարդ իմանալ կը ջանայ .
Եղբայր, չէ՞ որ մենք *ղարիպ* ենք ,
Աշխարհ երբ ուզէ վերջանա՛յ :

ՉԾԳ

Հիւանդ է՝ ճար ճարակ չունի,
Կերակրի ախորժակ չունի․
Ոչխարն ամբողջ առջին բերին,
Ասաց՝ ափսո՜ս՝ դըմակ չունի:

ՉԾԴ

Ցաւը կուգայ վազ տալով,
Կը գընայ *նազ* անելով·
Ներս կը մըտնէ *խանփարով*
Ու դուրս կելնէ *մըսխալով*:

ՉԾԵ

Գըլուխըդ պաղ պահիր,
Ոտներըդ տաք պահիր,
Փորըդ միջակ պահիր,
Բժշկի կարօտ չես լինիր:

ՉԾԶ

Վէրքերըս քո առաջ բացի՝
Որ *մըհլամ* դեղ դընես վըրան·
Ինչ՞ բըժիշկ ես՝ ա՜յ խելացի՝
Որ աղ տաքդեղ ցանես վըրան:

## Լ

## ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՌՈՂՋՈՒԹԻՒՆ

---

ԶԾԷ

Ջերմն անեռ է, ես ջերմոտը
Մէկ մըղոն տեղից կը ճանչեմ.
Տաքը տաքի չերքամ մօտը՝
Անունը կըտամ կը կանչեմ :

ԶԾԸ

Երբ կերակրէն վեր կենաս,
Թէ յոգնեցար՝ ոտքի կենաս,
Կամ թէ հարիւր քայլ անես,
Հանգիստ քընով մի *քէֆ* կ'անես:

ԶԾԹ

Թեթեւ լինի քո կերակուր,
Վըրադ գըլուխըդ միշտ մաքուր,
Չըր բարկանաս երբէք ի զուր,
Տարիքդ երթայ մինչ ի հարիւր :

ՃԾ

Ես լաւ քաղաք անոր կ'ասեմ՝
Որոյ բժիշկ օդն ու ջուրն է,
Ես առողջ մարդ անոր կ'ասեմ
Որոյ համեմ սոխ սխտորն է:

ՃԾԱ

Մեծերն որ վէն կուքանան,
Դուն մէկդի կացիր, պըստիկ․
Ուղտերն որ հառա՜յ կըտան,
Իշո՜ւկ՝ ինչո՞ւ գաս մօտիկ:

ՃԾԲ

Աղքատին վարունգ տուին,
Ծուռն է ասաց՝ չը կերաւ․
Ո՞վ կայ որ ամենեւին
Արատ չունի՝ սուտ իրաւ:

ՃԾԳ

Աջ ձեռքը ձայն չը հաներ,
Ձախն էլ պիտի՝ որ ծափ տայ․
Մեծ մարդը մեծ բան չ'աներ
Թէ զփորքը մօտէն փախ տայ:

**ՁԿԴ**

Ես ի Հալապ քառասուն կազ
Տեղ եմ ցատքեր, գիտեն խիկար.—
Հալապն էն տեղ, էս տեղս է կազ,
Ցատքիր տեսնեմ, *ղօչա՛ղ* աղբար :

**ՁԿԵ**

Տըկլոր է, տըկնոր կուզէ
Որ պար գայ նոր փեսի պէս.
Ակռապլիկ է, ձութ կուզէ
Որ ծամէ նոր հարսի պէս :

**ՁԿԶ**

Քանի՜ օր եղար իշխան. —
Ախ՛, մէկ օրիկ մի միայն.—
Եղբա՛յր, սուտ է այս աշխարհ ,
Մէկ օրն ալ է բաւական :

**ՁԿԷ**

Մուրացկանը փող մի գըտաւ,
Կարծեց թէ շատ փարթամ է.
*Տազի* գըլխին մազ մի բուսաւ,
Նա կարծեց թէ *փարչամ* է :

ՉԿԸ

Խոշոր լեռնէն սաստիկ քամի կը փչէ
Խոշոր բերան խոշոր խօսքեր կը փչէ
Այրի՛ գլուխն որ խելքը շատ՝
Խօսքը համեղ ու քիչ է:

ՉԿԹ․

Ոչ այնքան բարձրացիր
Որ նախանձին ու կախեն,
Ոչ այնքան ցածացիր
Որ քեզ ոտից տակ կոխեն:

ՉՀ

Մէկ մի յաման տըգէտը,
Մէկ մի հըպարտ աշկերտը
Գիտեմ գիտեմ ասելով
Տաս սըղալին ու շուտով:

ՉՀԱ․

Մարդըս մարդ է՝ ո՛վ եղբայր,
Ոչ հրեշտակ՝ ոչ անասուն.
Թէ ուս հրեշտակ ձեւացար,
Եղար անբան անասուն:

ՋՀԲ

Հըպարտութիւնը ծաղիկ է
Որ սատանին պարտիզումը կը բուսնի
Մի՛ նայիր որ գեղեցիկ է.
Հոտէն երկինքն ու երկիրըս կը գանի:

ՋՀԳ

Գեղացիին աղբէր ասա , —
Կ'ասէ, ինծ աղա՛ կ'ասեն,
Մրտոյին տէր տէր ասա , —
Կ'ասէ, տէր պապա՛ կ'ասեն:

ՋՀԴ

Գըլխումը խելք ունեցողը
Խելքը իրեն կը պահէ.
Գըլխումը խելք չունեցողը
Օտարի խելք կը ծախէ :

ՋՀԵ

Գեղացին որ շըփանայ՝
Տըրեխ պէտք է որ դիմանայ.
Տըխմարն որ բան սովրենայ՝
Պարեխ 1) պէտք է որ դիմանայ:

1) Քար, քարաժայռ:

ՁԺԶ

Թէ եւ ճերմըկի մազ մօրուք ,
Քանի որ սիրտն է լաւ կըտրուկ՝
Դու մի՛ ասեր՝ դա է ծերուկ ,
Կը համարուիս անփորձ մանուկ:

ՁԺԷ

Տըգէտ ես ու խոնարհ եղա՛ր ,
Գիտունի չափ պատիւ ունիս ·
Գիտուն ես ու հըպարտ եղա՛ր ,
Տըգետին չափ պատիւ չունիս :

ՁԺԸ

Թէ որ կը վայլէ
Թամքը աքլորին,
Հըպարտութիւնը
Վայլէ տըկլորին:

ՁԺԹ

Մի՛ թըքներ երկինքըն ի վեր ,
Թուքը ճակտիդ վերան կուգայ ·
Մի՛ յանդըգնիր գըլխեդ ի վեր ,
Խելքըդ միտքըդ շուտ ման կուգայ :

22

Երբ կը տեսնես առջեւէն
Հըպարտութիւնը կ'երթայ ,
Աղքատութիւնն ետեւէն
Գիտցիր որ շուտո՛վ կուգայ :

---

## ԼԱ.

## ՀՊԱՐՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԽՈՆԱՐՀՈՒԹԻՒՆ

---

22Ա.

Ի՜նչ կատաղի գայլ էր ասի ,
Գառանց պատիժ պատուհասի.
Քանի որ հալւորեցաւ
Շանց խաղալիկը դարձաւ :

22Բ

Մուկն ի ծակը չէ մըտեր ,
Աւելն էտին է կապեր .
Գըլուխդ տինն պահիր ո՛վ մարդ
Մեծ բանի ձեռք մի՛ զարներ :

**ՁՁԳ.**

Ո՛վ սար՝ տեղէդ ել մօտս արի
Ասաց Քրդի երգնաւորը. —
Սարը չելաւ, — ինքը արի՛, —
Ելաւ գընաց սարին ձորը։

**ՁՁԴ.**

Կը հասկընա՞յ իբըր թէ
Կուշտը քաղցածին հալէն.
Կուշտը մանըր կը բըրդէ
Քաղցածին, իրաւ կ՚ասեն։

**ՁՁԵ**

Ծառն որ պըտուղ շատ ունի՝
Գըլուխը վար կախ կ՚անէ.
Մարդն որ բարի գործ չունի՝
Կուրծքը տընկած կը բռնէ։

## ԼԲ

## ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՍՏՈՒԹԻՒՆ

---

**ՋՂԶ**

Մազըս ճերմակ է թէ սեւ,
Քուրդը հարցուց սափրըճին․—
Թո՛ղ որ քափեմ քո առջեւ,
Պարզ կ'երեւի քո աչքին:

**ՋՂԷ**

Խօսքին շիտակն ասողին
Ոտքը յասպանդակ պիտի․
*Խաթր* սեպող՝ սուտ խօսողին
Լեզուն չորացած պիտի :

**ՋՂԸ**

Ճըշմարտութիւն ու լաւ *խաբար*
Ուշ կը հասնին՝ կաղ ի կաղ․
Իսկ սըտութիւն ու սեւ *խաբար*
Շուտ կը հասնին ու շատ վաղ:

**ՃՁԹ**

Ճըշմարտախօսի գըտակըն է ծակ ,
Ոտքըն է պատրաստ՝ դըրնեն յասպանակ
Թէպէտ եւ մարդիկ կը գովեն ըզնա,
Կ'ատեն ինչ ասէ նա շըտկէ շիտակ:

**ՃՂ**

*Դուրուս* խօսողին
Դուռը կանգնի ձին.
Ասէ ասելին ,
Փախչի գընայ Չինումաչին:

**ՃՂԱ**

Մի հաւանիր այն հացին
Որ աղ չունի համ չունի.
Մի հաւատար այն լացին
Որ օր չունի ժամ չունի :

**ՃՂԲ**

Սըտախօսին տունն է այրեր ,
Դըրացին չէ հաւատացեր.
Ոչխարներն գայլն է տարեր ,
Տէրը հովուին չէ հաւատացեր :

ՃՂԳ

Իմացել են թէ մեռել է Ալին ,
Էն չեն իմացել՝ թէ ո՛րն է Ալին.
Մուտու ղորղ բան մի լըսել են՝ աղբէր
Ջոկել չեն կարող սըտին սըղալին:

ՃՂԴ

Ջաղացքը ցորեն կ'աղայ ,
Սա ջաղացք է՝ քամի կ'աղայ.
Սըտախօսին վաստակն ի՞նչ.—
Որ ճիտակն ալ ասէ՝ ոչ ոք հաւատայ:

ՃՂԵ

*Խապարին* ճիտակն ուզես՝
Առ տըղէն ու հարբածէն.
Թէ ձախ ու ծուռը կ'ուզես,
Ծառայէն ու փախուկէն:

ՃՂԶ

Սըտախօսին սըտերուն
Թէ լինէր մաքս ու մաքսատուն.
Քիչ ատենէն կը լինէր
Տընանկ աղքատ ու վատանուն:

# ԼԳ

## ՄԱՐԴԿՈՒԹԻՒՆ ԵՒ ՏՄԱՐԴՈՒԹԻՒՆ

---

**ՉԼԷ**

Քարը զոհար չը լինէր
Ցոսկի սրնտուկ պահելով.
Կրկուն բուբակ չը լինէր
Գողունի փետուրներով։

**ՉԼԸ**

Իշուն ասին՝ ձայնըդ դալար,
Պըլպուլին՝ բէ լուռ կացիր.
Գոնա մարդ չեն, արջ ու արջառ.
Թըռիր խեղճ պըլպուլ՝ հեռացիր։

**ՉԼԹ**

Հաւսն ու բարակը մէկ գին,
Ափսոս բարակ մանողին.
Մուքն ու նըրազը մէկ գին,
Ափսոս նըրազ վառողին։

ՊԱ

Հաւին մէկն ի յաղթիւսին
Մարգրրիտ մի էր գրտեր.
Մեղք սատաց դորա տեսքին,
Ինքը զարեհատ պիտէր:

ՊԲ

Փորձանաւոր մարդու *հայլը*
Փորձանաւորը կ'իմանայ.
Գետին ընկած մարդու *հայլը*
Գետին ընկնողը կ'իմանայ:

ՊԳ

Ծառ չը կար՝ ինչ անէին,
Մարդ չը կար՝ ինչ անէին.—
Մեր բակին այծը առին,
Անունը Ասօ դրին:

ՊԴ

Մինչեւ չը գայ վերջինը՝
Ձը յիշուիր առաջինը.
Օտարներուն խօսք չունիմ,
Ես կուլամ մեր միջինը:

ՊԴ

Գործը տուր բան տեսնողին ,
Թուրը տուր բանեցընողին ·
Ես խաչի զօրքին մեռնիմ ,
Բայց դուն ա՛ջ տուր խաչ բըռնողին:

ՊԵ

Լաւ գըրեան՝
Ազնիւ գինին
Որքան հընեան՝
Այնքան յարգի կը լինին :

ՊԶ

Ձըւազեղի *խաբերը*
*Թաւ*ի կոքը կը պաչեն ·
Տանուտիրոջ *խաբերը*
Նորա ճորտը կը ճանչեն :

ՊԷ

Առջեւդ հընձ կը վառի ,
Կայծքարն ինչո՛ւ կը զարնես.—
Մարգարէն յիւր գաւառի
Պատիւ չունի , ինչ անես :

ՊԸ

Բազէն ի Մըսրի անտառին
Թէպէտ բու՝ թէպէտ բազէ է.
Գոհարըն ի միջի ծովին
Թէպէտ քար՝ թէպէտ գոհար է:

ՊԹ.

Պատենի մէջ Մըսրի պողպատ,
Ինչ՞ օգուտ ·
Քըսակի մէջ ոսկի արծաթ ,
Ինչ՞ օգուտ :

ՊԺ.

Սա թանկ է ,
Բայց ինձ ա՛նկ է ·
Սա աժան է ,
Բայց դաժան է:

ՊԺԱ.

Մին ձի որ քոն չէ՝ մի՛ հեծնիր ,
Ո՛րքան եւ յոգնած լինիս ·
Մին հաց որ քոն չէ՝ մի՛ ուտեր,
Ո՛րքան եւ սոված լինիս :

ՊԺԲ

Ամէն Ղազրի աղքաս Ղազար չեն ասեր,
Ամէն տակռի կարմիր գազար [1]) չեն ասեր,
Մարդ կայ՝ մարդ ալ կայ՝ եղբայր,
Ամէն Հայի Խօճա Նազար չեն ասեր:

ՊԺԳ

Թագաւորը թագաւոր է,
Բայց թագին *շայեղ* պիտի·
Մեր Տէրտէրը փառաւոր է,
Բայց փառքին *շայեղ* պիտի:

ՊԺԴ

Սայլը գընաց որ փայտ բերէ,
Բերաւ՝ բերաւ·
Թէ չը բերաւ՝
Ինքը փայտ է, դիր այրէ:

ՊԺԵ

Մէկը կայ՝ հազար կ'աժէ,
Հազար կայ՝ որ մէկ կ'աժէ·
Դուն մին աժէք ունեցիր
Որ գիտնա՛ս՝ ո՛վ ինչ կ'աժէ:

1) Գազար, Սեխպղին, *Հավուճ* :

ՊԺԶ

Աստուած, զիս չանես կարօտ
Տըմարդի ունեւորին
Ամա՛ն Տէր, չանես կարօտ
Տըմարդի ունեւորին :

ՊԺԷ

Տըմարդին ո՛վ է՝ խիկար · —
Լաւ է չըճանչնաս՝ եղբայր ·
Դըգալով կը կերցընէ
Ու կոթովն աչք կը հանէ :

ՊԺԸ

Խաղողը անուշ արա ,
Մի հարցներ այգուն անունն ·
Մարդուն գործը *նուշ* արա ,
Մի փընտռեր ազգին անունն :

ՊԺԹ

Հող ու մոխիր կեր՝ ա՛ տղայ,
Տըմարդիէն հաց մի մուրար ·
Որ կուզայ որ ճակտիդ կուտայ,
Ծանըր կուզայ քեզ քան ըզքար:

ՊԻ

Կատուի շուքին մէջ մի պառկիր,
Թող որ առիւծը քեզ տանի.
*Նամէրտ քէօփրիւէն* մի անցնիր,
Թող ջուրը քեզ առնու տանի :

ՊԻԱ

Հաց կայ,
Բերան չը կայ.
Բերան կայ,
Հաց չը կայ :

ՊԻԲ

Յաշխարհս անպէտ իրք չըկայ,
Դարանս անպէտ գիրք չըկայ.
Լաւ բանը պահել պիտի,
Որ կը լինի՝ պէտք կուգայ :

ՊԻԳ

Լաւ է այս աւուր ընկուզը
Քան թէ վաղուին *Խարբուզը*.
Այս աւուր հաւու ձագը
Քան թէ վաղուի գէր սագը :

ՊԻԴ

Հաւն երազում ինչ կը տեսնէ.—
Յորեն կորեկ ու գարի.
Հայն երազում ինչ կը տեսնէ.—
Մուտքը ծախսին հաւասարի:

ՊԻԵ

Քաղցած ծարաւ մարդու մըտքէն
Օրը մէկ քաշ փըլաւ կ'անցնի.
Տըկլոր Քըրդին էրած սըրտէն
Օրը հինգ կազ կըտաւ կանցնի:

ՊԻԶ

Քան թէ անցած զատիկը
Լաւ է նորէն գալիքը.
Գիտենք ինչեր եղեր են
Տեսնենք այժմ ըլլալիքը:

ՊԻԷ

Յոյսը կաթի պէս կը թըթուի,
Թէ լաւ պահես՝ սեր կը կապի,
Թէ շատ պահես նա կը թըթուի
Եւ իբր անպէտս դուրս կը վոթուի:

ԴԻՐ

Անճարը կերել է բանջարը ,
Իր կըտսին զարկել է ղանչարը ,
Մէկն որ տէր տիրական չունի ,
Ինչ՞ կը լինի նորա ճարը :

## ԼԴ

### ՅՈՅՍ ԵՒ ՎՍՏԱՀՈՒԹԻՒՆ

ԴԻԹ

Կասուն գլուխըն կուքաքէ ,
Կ'ասեն՝ անձրեւ պիտի գայ.
Թող նախ անձրեւը կաքէ ,
Յետոյ երեսըդ լըւա :

ԴԼ

Քաղցած ես հա՛ , ըսին իշուն ,
Բայց համբերէ համբերէ ,
Կուգայ գարուն , կուգայ աշուն ,
Քեզի առուոյտ կուբերէ :

ՊԼԱ

Ծովն եմ ընկեր, այլ ընկեր,
Մի լինիր ինձ մեղադիր
Որ օձին եմ փաթթըւեր.
Կրնաս նէ դուն ազատիր։

ՊԼԲ

Առաջ քունէդ արթընցիր,
Յետոյ երազըդ քըննիր.
Առաջ ուսում ունեցիր,
Յետոյ յոյսեր երազիր։

ՊԼԳ

Ամռան անձրեւին,
Ձըմռան արեւին,
Մի հաւտար եւ լիրբ կընկան՝
Անին ու անուզարին։

ՊԼԴ

Յոյսըդ սարին վերան էր,
Սարին վերայ ձիւն եկաւ.
Յոյսըդ ծառին վերան էր,
Բըռնած հիւղըդ վար եկաւ։

ՊԼԵ

Զրմեռուան վարդը կրակն է,
Մարդուն ազնիւը քարակն է.
Ոչ կրակին ցուտ մօտեցիր,
Ոչ քարակէն ամուր բռնիր :

## ԼԵ

### ՆԱԽԱՆՁ ԵՒ ՀԱԿԱՌԱԿՈՒԹԻՒՆ

ՊԼԶ

Նախանձոտի խօսքերուն
Ո՛վ մարդ՝ սիրտդ մի՛ մաշեր.
Պտուղ չունող ծառերուն
Ո՞ր խելք քար է քաշեր :

ՊԼԷ

Նախանձորդը քէ փոքր է,
Ծիծաղիր ու անց գնա.
Թէ հաւասար՝ ուրախացիր,
Թէ գլխաւոր՝ ցուս անց գնա:

ՊԼԲ

Ինչեր չանեը նախանձը
Երբ արձակ բողուս սանձը·
Նախ կը խածնէ իւր անձը,
Յետոյ իւր աղբըրտանցը։

ՊԼԳ

Երբոր Աստուած կամենայ
Բանալ մէկուն լաւութիւն,
Նորա վըրան կը բանայ
Նախանձոտացը լեզուն։

ՊԽ

Զար աչքի
Մի ցուցըներ բարի բան,
Զար ականջի
Մի հասցըներ բարի բան։

ՊԽԱ

Պատառն ուրիշի ձեռին
Մեծ կերեւի հարեւանին.
Միայն Հայ հարեւանն է
Որ հաւան է իւր պատառին։

ՊԽԲ

Կատուին ասին, կեղտըտ եար է, —
Տարաւ խորունկը թաղեց.
Գիժին ասին, ինչ *խապար* է, —
Մատը բերանին դըրեց :

ՊԽԳ

Ո՞ւր գըտնեմ բըժիշկ եարտար
Որ անէ մին ազդու ճար
Հաւատք օրէնք ուրացողին,
Ու նախանձով կուրացողին :

ՊԽԴ

Թէ խօսիս՝ հաշէ կ'ասեն,
Չը խօսիս՝ մարդ չէ կ'ասեն.
Որքան կուզես լաւ խօսէ,
Հա՛ չեն ասեր, չէ կ'ասեն :

ՊԽԵ

Նախանձոտ կինն է արեան ծարաւի
Վիշապ օձ դառնայ քանի պառաւի
Սատանան անոր փորը որ մըտնի,
Աստուած ազատէ ձեռքէն յիրաւի ;

# ԼՁ

## ՇԱՀԱՍԻՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՆՁՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

---

**ՊԽԶ**

Այծը հօգուն վախ կը քաշէ
Երբ դանակըն կ'երեւի.
Մըսագործը ա՜խ կը քաշէ
Թէ եղը քիչ կ'երեւի :

**ՊԽԷ**

Փոքրը տանը մեծ տանուն,
Սուտ պատիւն՝ անձիդ մասաղ.
Մի մասներ կեանքը մահուն,
Միրուքըդ գըլխիդ մասաղ:

**ՊԽԸ**

Ոչ Շամին տաքարն ուտեմ,
Ամմըն եղբայր, վազ անցայ.
Ոչ Արապին երես տեսնեմ,
Ամմըն եղբայր, զըզուեցայ :

**ՊԽԹ**

Բրինձ բերենք Մըսըրէն
Ասինք՝ Մըսըր գընացինք,
Մեր ամպարին ձաւարէն [1]
Զուրկ ու սոված մընացինք:

**ՊԾ**

Պարապ սօպրակով
Ձին չի՛ բըռնըւիր ,
Պարապ վանդակով
Ծիտ չի՛ բըռնըւիր :

**ՊԾԱ**

Էշը թակելէն ի՛նչ շահ·
Գէշը ծածկելէն ի՛նչ շահ·
Շինած բանը քակելէն ,
Բերան փակելէն ի՛նչ շահ :

**ՊԾԲ**

Վընասին կէսէն դառնալը
Վընաս չ՛ասուիր՝ վաստակ է·
Վաստակին կէսէն դառնալը
Վաստակ չ՛ասուիր՝ վընաս է:

---

1) Ձաւար, Պուլկուր :

ՊԾԳ

Զամչիկ հաս հաս՝ մեղրիկ մաս մաս,
Քովն էր նըստած փոքրիկ Ահմաս.
Ամաններուն մէջ նայեցանք,
Ոչ մեղր կար՝ ոչ չամչի հաս:

ՊԾԴ

Բարեկամի հետ կեր խըմէ,
Բայց մի աներ առուտուր.
Տանը սիրոյն փորձաքարն է,
Ինչպէս առիր՝ այնպէս տուր:

ՊԾԵ

Ագռաւը մեր գոմէշին
Կըռնակը կը քըթուըտէ.
Երնեկ չը տա՛ս կըտուցին,
Միտքն ա՛ս է որ տիզ [1]) ուտէ:

ՊԾԶ

Մի լինիր ուրագի պէս,
Միշտ դէպ ի քեզ՝ միշտ դէպ ի քեզ.
Հապա լեր սըղոցի պէս,
Մէկ դէպ ի քեզ՝ մէկ դէպ ի մեզ:

---

1) Տիզ, կենդանեաց ոջիլ. Կէնէ:

ՊԾԷ

Աղբարն աղբար անողը
Քըսակը զաս արեր է·
Մեզ հար ու մար տըւողը
Պըսակն ազաս արեր է :

ՊԾԸ

Կատուին երկու աչքերը
*Ճիկար* ծախողի ձողին·
Կեղծւորին խելքը միտքը
Ունեւոր մարդու փողին :

ՊԾԹ

Աշխարհըս դըմակ ,
Դու լինիս դանակ ,
Գիտցիր եղանակ ,
Տեղն ու ժամանակ :

ՊԿ

Մոլլան ինչ՞ կը կանչէ · —
Թուրքն աղօթքի կը ձէնէ · —
Մեր ոչխարին զեն չըլնի՝
Հա՜ կանչէ ու հա՜ կանչէ :

ՊԿԱ.

Երկու քար իրար շրփեն ,
Ալիւրը դո՛ւրս թող բերեն ·
Մեզ ալիւրն է հարկաւոր ,
Հա՛ մէկէն՝ հա՛ մէկալէն :

ՊԿԲ.

Քանի որ ես ողջ լինիմ՝
Հողըս մեռելոց գըլխին ·
Երբոր ես հողը մըտնիմ՝
Հողըս ողջերի գըլխին :

ՊԿԳ.

Կատուին խաղ է ,
Մըկանը մահ է ·
Արջը քեզ ահ է ,
Արջպանին շահ է :

ՊԿԳ.

Երկու Հոռոմ երկու Հայ
Թէ չը կըռուին՝ շատ լաւ ա ·
*Ղատին* կ'ասէ՝ գըլխիս վա՛յ ,
Ես ինչ ուտեմ *փախշալա* :

**ՊԿԵ**

Ինչ՞ գործ կ'ուզես, ինչ պաշտօն ,
Հարցուցին մեր տան իշուն·
Ասաց , ձմեռն ըլլիմ կատու ,
Ամառն ըլլիմ հովուի շուն :

**ՊԿԶ**

Ինչ տեղ հաց՝
Ինչ տեղ գինի ,
Այն տեղ կա՛ց՝
Այն տեղ քընի՛ :

**ՊԿԷ**

Տանտրոջ վըրայ լոյս իջաւ·
Տեսնողն ո՞վ է· — գըզիրը· —
Շատ լաւ աբեղայ դարձաւ·
Ասողն ո՞վ է· — տէրտէրը :

**ՊԿԸ**

Որ՛ ջուրն որ ինծ կը խեղդի՝
Ես անոր մեծ ծով կ'ասեմ·
Ո՛վ ծարուխս մին կար կըթի ,
Ես անոր գէր կով կ'ասեմ :

## ԼԷ

### ՇՈՂՈՔՈՐԹՈՒԹԻՒՆ

---

ՊԿԹ

Ում որ շատ էր կորեկը՝
Սա նորա հաւը դարձաւ·
Լաւ կերակրեց նորեկը ,
Բայց շուտով մորթեց կերաւ :

ՊՀ

Ամէն բանի հա՛ ասողը ,
Ամէն բանի չէ՛ ասողը ,
Ցորեն ու կորեկ ծեծողին
Քովը կեցող՝ *չի՛* ասողը :

ՊՀԱ

Ում սայլովը որ կը քալէ՝
Նորա խաղովը կը *չալէ* ·
Վա՜յ անոր որ մարդու խաբրի
Հաւատն օրէնքը կը ծախէ :

ՊՀԲ

Մածունը սեւ է ասեն՝ սեւ կ'ասէ,
Իմաստունը խեւ է ասեն՝ խեւ կ'ասէ
Ամսուս քառսունն է.—քառսունն է
—Շողոքորթը ամէն խօսքի հա՛ կասէ:

ՊՀԳ

Շողոքորթ գառնուկը
Եօթը մօր կաթ է ծըծեր,
Պարապորդ մանուկը
Եօթը վարպետ է փոխեր:

ՊՀԴ

Հարուստ մարդը օձ կերաւ,
Ասին, Աստուած ճար անէ.
Ճարի համար խեղճը կերաւ,
Ասին, շան պէս սոված է:

ՊՀԵ

Լաւ է գովես՝ բա՛րձրացընես,
Թըշնամւոյդ մէկ լաւութիւնը,
Քանց վաստքեամբ շողոքորթես՝
Բարեկամիդ մոլութիւնը:

# ԼԸ

## ՈՒՐԱԽՈՒԹԻՒՆ ԵՒ ՏՐՏՄՈՒԹԻՒՆ

---

ՊՀԶ

Օր կայ որ ուրախ է մարդ,
Օր ալ կայ որ տրտում է.
Երնէկ՝ լինիս միշտ զուարթ.
Խեւին ամէն օր տօն է:

ՊՀԷ

Հարսնիք երթամ՝
Տուն ի՞նչ տանիմ.
Թէ ձուք ծամեմ՝
Կուլ ի՞նչ տանիմ:

ՊՀԸ

Որբին ասին, ինչո՞ւ կուլաս.
Ասաց, ո՞ւր են իմ հարն ու մար,
Հայուն ասին, ինչո՞ւ կուլաս.
Ասաց, իմ լացս է ինծ համար:

## ԼԹ

## ՉԱՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ

---

**ՊՀԹ**

Հեռու պահէ չար լեզուն,
Մի անեւ քեզ ընտանի.
Ոսկոր բեռող ունին ի տուն՝
Տրնէն ոսկոր կը տանի :

**ՊՉ**

Հաջան ունի չը՛ խածներ,
Քար մի քաշեր զուր տեղը.
Չար լեզուն չի՛ կըծաներ,
Սիրտ մի մաշեր զուր տեղը :

**ՊՉԱ**

Ծառերը զանզան արին
Փայտահարին փայտատից.
Ա՛հ եղբարք՝ սաաց կաղնին ,
Կոթը մեզնի՛ց է մեզնի՛ց :

ՊՁԲ

Այծը իր ոտքէն կախ կ'անեն,
Գառն ու մաքին իրենց ոտքէն.
Աղբէր՝ դուն քեզի նայիր,
Տէրտէրն իր ոտքէն կախ կ'անեն:

ՊՁԳ

Ագռաւի ձայնը թէ Աստուած լսէր՝
Վարդավառին ձիւն կուգար.
Պառաւի ձայնը թէ լսէր՝
Վառվառի գըլխին ձիւն կուգար:

ՊՁԴ

Երթէ կամիս՝ վագր եղիր
Ու գիշատէ քու որսը.
Միայն թէ շիտակ եղիր,
Գաղտուկ մի՛ ծամեր միսը:

ՊՁԵ

Երիկմարդիկը կանգնեցին
Աշտարակըն Բաբելոնի.
Կ'ասեն թէ կանայք քանդեցին
Մեր պանծալի քաղաքն Անի:

**ՊՁԶ**

Ինքն այս տեղ չէ, չի՛ լըսեր,
Իրեն Աստուածն այս տեղ է.
Ես նորան սուրբ չեմ ասեր,
Բայց այս բանիս անմեղ է:



# Խ

## ՁԱՓ ԵՒ ՊԱՅՄԱՆ

---

### ՊՁԷ

Այնքան կը խօսի որ մարդ չի լսեր.
Այնքան կըսպառնայ որ մարդ չի վախեր.
Այնքան կ'երդուըննայ որ մարդ չի հաւտար.
Այնքան կը խընդրէ որ մէկը չի տար:

### ՊՁԸ

Քըսակիդ նայելով՝
Բերանըդ բաց արա.
Դրկիցիդ նայելով
*Տուքան*ըդ բաց արա:

### ՊՁԹ

Ամէն բըրքացող *հաճի* չի դառնայ,
Ամէն Հայացող *մուղսի* չի դառնայ.
*Թամ*մին հանելու շատ փուռ հաց պիտի,
Ամէն հորտ եպիսկոպոս չի դառնայ:

### ՊԴ.

*Եօրղանիդ կէօրէ* ոտներդ մեկնիր ,
Թէ չես ուզեր որ պաղ առնես·
Հասակիդ *կէօրէ* ձեռներդ մեկնիր,
Թէ որ դարակէն բան առնես:

### ՊԴ.Ա.

Տանձ չեմ որ հասնիմ ասեմ,
Խընձոր չեմ՝ կարմրիմ ասեմ.
Ուրիշն հաւնի չը հաւնի՝
Ես ինչ որ եմ նէ այն եմ :

### ՊԴ.Բ.

Այս մածուն է՝ թան չէ ,
Ամէն մարդու բան չէ·
Ասոր երկար սիսեռ կ'ասեն ,
Քո ատամին բանը չէ :

### ՊԴ.Գ.

Գըլխիս տալու հրաման ունիս ,
Տուր թէ կուտաս·
Աչքս հանելու հրաման չունիս ,
Տեղն աչք կուտա՞ս :

ՊԳ.Դ

Երուսաղէմ գընացինք ,
Լոյս չը տեսած մընացինք .
Կուզէինք *մուղսի* դառնանք ,
Ինչ որ էինք՝ այն մընացինք :

# ԽԱ.

## ՊԱՆԴԽՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՅՐԵՆԻՔ

---

ՊԴԵ

Աւազակ՝ արիւնկըզակ ,
Բայց Հայ է , Հայի զաւակ.
Խըրատէ , սաստէ , պատժէ ,
Բայց մի՛ տար մահու բաժակ :

ՊԴԶ

Լաւ է կորչի մէկ Հրնդիկ
Քան թէ բոլոր Հրնդկաստան.
Ո՛չ սատցին Հայ մարդիկ ,
Լա՛ւ է կորչի Հայաստան :

ՊԴԷ

Ինչ տեղ պանիր՝ էն տեղ բանիր ,
Ասել է մեր խեղճ Հայր.
Դուն Խիկարայ խծսքը բըռնիր , —
Ինչ՞ անեմ օտար *սարայը* :

### ՊԼԸ

Մի՛ մրտներ աւեր այգին,
Խաղող չունի՝ շահ չունի.
Աւեր է ազգիդ այգին,
Մի՛ լար վրան՝ շահ չունի:

### ՊԼԹ

Օտարի կարօտ մի՛ լինիր,
Ծուտ կը մրնաս բաց ձեռքով.
Օտարի ձին մի՛ հեծնիր,
Կ'իջնաս՝ կը մրնաս ոտքով:

### Ձ

Սարէն *սարայն* է եկեր,
*Սարայտարը* դուրս կ'անէ.
Եօթն օտարը տունս եկեր՝
Ձիս իմ տընէս կը հանէ:

### ՁԱ.

Մեր սոխակը բըռնեցին,
Ոսկի վանդակ փակեցին.
Ա՛խ հայրենի՜ք հայրենիք
Կ'ասէր կուլար եղկելին:

ՁԲ

Հրեան ասաց . ուր շա՛հ ունիմ
Հրէաստան հո՛ն է ինձի.
Հայըն ասաց . ո՛ւր ժամ ունիմ
Հայաստան հո՛ն է ինձի :

ՁԳ

Սոխակին համար
Բնակարան յարմար
Թող այս այգին չը լինի ,
Միւս *պաղ պաղչան* կը լինի :

ՁԴ

Հայուն երկիրը լաւ լինէր՝
Կ'ասեն, զերի կը լինէ՞ր . —
Մօրաքոյրըդ պեխ ունենար՝
Մ՝իթէ քեռիդ կը լինէ՞ր :

ՁԵ

Մի՛ փընտռեր ծնած երկիրըդ ,
Փընտռէ սընած երկիրըդ ·
Թէ չես ուզեր դարիպ մընալ՝
Սիրէ բընակած երկիրըդ :

ԶԶ

Քանց թէ օտար արքունիք՝
Խրցէն զոհ է իմաստունը.
Յիմարը գնաց հարսանիք ,
Ասաց՝ ես լա՛ւ՝ քանց մեր տունը:

ԶԷ

Ընտանիքըս ինձնէ աւել ,
Հայրենիքըս անկից աւել.
Մարդկային ազգը կը սիրեմ
Հայրենիքէս այլ առաւել :

ԶԸ

Թէ հայրենիքս էր երջանիկ ,
Ասենք՝ թէ թողում ու գընամ.
Ինչպէս թողում խեղճ հայրենիք
Լաւ չէ՞ նորա մատաղ գընամ:

ԶԹ

Ագռաւին տեսած հունտը կանչել չի ,
Թաթարին կոխած խոտը բուսնել չի ,
Խեղճ Հայաստանն ինքըզինքը ճանչել չի ,
Իւր ցանկալի ծառք ու ծաղկունք տեսնել չի:

ՋԺ.

Լաւ է մընամ Հայ *ռանչպար*
Քան թէ լինիմ Պարսից սարտար,
Կամ թէ Հոռմին մեծ զօրավար.
Չե՛մ ուզում մ՛ղքա՛ր :

ՋԺԱ.

Որ գընացիր մի երկիր՝
Տեսար ամէնքը կոյր են,
Դուն էլ մէկ աչքըդ խըփիր,
Թէ չես ուզեր դուրս վարեն :

ՋԺԲ.

Վերեւ թըքեմ՝ երեսս է,
Ներքեւ թըքեմ՝ միրուքս է.
Լաւ է մէկ քովի թըքեմ,
Ոչ միրուք՝ ո՛չ երես է:

ՋԺԳ.

Տիրաւորին Տէրն է պահեր,
Անտէրին գայլըն է տարեր.
Մեր անտերունչ Հայաստանին
Գայլըն ինչանք ո՛ւր է տարեր :

ՋԺԴ

Ինչ՛ որ երթայ՝ *պաղէն* կ'երթայ,
*Պաղձկպանին* քնչը կ'երթայ·
Մեր աշխարհքը *խարապ* եղաւ,
Ազգը խո՛ր քընով կը խորդայ :

## ԽԲ

### ՊԱՏԻՒ ԵՒ ԱՆՊԱՏՈՒՈՒԹԻՒՆ

ՋԺԵ

Լաւ է մարդուս աչքը դուրս գայ,
Քանց թէ անունը վա՛տ դուրս գայ·
Քանզ վատանուն իմաստունէն՝
Բարեբարոյ գիժէն յոյս կայ :

ՋԺԶ

Անպատիւէն քու պատիւըդ
Թանկ ալ լինի՝ ծախո՛ւ առ·
Անիրաւին հետ հաշիւըդ
Ուշ ալ լինի՝ կըտրէ՛ ա՛ռ :

ՋԺԷ

Անունդ եղաւ բոլոր աշխարհ,
Հոգուդ մարմընուդ ինչ օգուտ.
Երնէկ թէ ձգեն վրադ մին քար,
Կամ ողորմիս հանեն հոգուդ:

ՋԺԸ

Հըպարտը ծեծ է կերած դըրսեւը,
Եկել է, բան չէ ասած ներսեւը.
Ասացին, շըլինքդ ինչի՞ է սեւը.
Ասաց, շոգ էր, էրեց զիս տաք արեւը:

ՋԺԹ

Խոզն հրամցուցին սուփրան,
Գընաց նըստաւ ճակատը.
Թաթերը դըրեց վըրան,
Տըրջեց թասն ու գաւաթը:

ՋԻ

Քան թէ սիպտակ միսն երեւի,
Սեւ կարկըտանը լաւ է.
Քան թէ խաղք լինիս յաշխարհի
Պարտակ [1]) պատանը լաւ է:

---

1) Պարտակ. Քող, Ծածկոց, Էօրթիւ:

# ԽԳ

## ՍԷՐ ԵՒ ԱՏԵԼՈՒԹԻՒՆ

---

### ՁԻԱ

Խի՛կար, կը սիրեմ ըզքեզ. —
Հո՛գի, քո զերին եմ ես. —
Խի՛կար, ես չեմ սիրեր քեզ. —
Հողըս զըլխիդ՝ ա՛ներես :

### ՁԻԲ

Զիս սիրողին զերի եմ,
Զը սիրողէն հեռի եմ.
Սէրը բըռնի չը՛ լինիր
Սերտ սիրողին *մկրին* եմ :

### ՁԻԳ

Սիրէ ըզքեզ սիրողը՝
Թէ եւ լինի հողոյ հաւասար.
Մի՛ սիրեր քեզ չը սիրողը
Թէ եւ լինի մեծ նախարար :

ՋԻԴ

Ջրաղացքը երկու քարէն,
Սէրը պիտի երկու կողմէն.
Մինուկ ձեռքը ձայն չը՛ հանէր,
Ձայնը կ'ելլէ երկու ձեռքէն:

ՋԻԵ

Վարդը անփուշ չը՛ լինիր,
Ցաւ ու խայթոց ա՛չքըդ առ.
Սէրն անարգել չը՛ լինիր,
Վիշտ ու վըտանգ աչքըդ առ:

ՋԻԶ

Շատ հեռացան երեսանց,
Շուտ հեռացան ի սրտանց.
Սէրն ոսկեթել մին կապ է,
Թուլ կ'եղնի ուժն հեռուանց:

ՋԻԷ

Սուտ աշխարհիս այս ի ծով
Հաւատք ու սէր ընկղմեր են.
Հաւատք փրկելու յուսով
Խեղճ սէրը կորուսեր են:

**ՃԽԸ**

Հօր պէս պատուէ՝ թէ ծեր տեսար,
Թէ կին տեսար՝ մօր պէս պատուէ.
Թէ տղայ տեսար՝ զաւակիդ պէս,
Եթէ մարդ՝ քեզի պէս սիրէ:

**ՃԽԹ**

Ատամիդ ո՛րն որ ցաւի,
Լեզուդ ի հոն կը դառնի.
Սիրտըդ ո՛ր բանին ձըգտի՝
Աչքըդ ի հո՛ն կը ցատքի:

**ՃԾ**

Սիրես՝ սիրէ՛, բայց գիտցի՛ր
Որ յետ սիրոյն ատել կայ.
Ատես՝ ատէ՛, բայց գիտցի՛ր
Յետ ատելոյն սիրել կայ:

**ՃԾԱ**

Դու ինձ պահի՛ր պօղչամիջին,
Ես քեզ պահեմ մարդամիջին.
Դու սիրի՛ր զիս տանումըջին,
Ես քեզ գովեմ գեղամիջին:

ՁԼԲ

Մեռելին *խաբրը* նայող չը՛ լինիր,
Ընկնողին ձեռքէն բըռնող չը՛ լինիր.
Ինչ՞ անեմ եղբայր՝ ես այն սուտ սէրը
Որ ինծի համար մեռնող չը՛ լինիր:

ՁԼԳ

Ես իրեն հոգի կ'ասեմ,
Նա կ'ասէ, հոգիդ դուրս գայ.
Ես կ'ասեմ՝ աչքիս լոյսը,
Նա կ'ասէ, աչքըդ դուրս գայ:

ՁԼԴ

Ճանապարհին
Հացը բեռ չէ,
Կեղծաւորին
Լացը սէր չէ:

ՁԼԵ

Երկու բան ցաս եմ ասել,
Ծասերուն վաս եմ սսել.—
Քինչ ունենայ՝ ու ցաս մըխսել,
Քիչ գիտնայ՝ ու ցաս խօսել:

ՁԼՁ

Ո՛ւմ սատցի՝ իմը դու ես,
Սսաց, իմ դեւը դու ես.
Սսացի, աչքըդ սիրեմ,
Սսաց, եկ աչքըդ փորեմ:



## ԽԴ

### ՎԱՐՁ ԵՒ ՊԱՏԻԺ

---

ՁԼԷ

Կամաց կամաց կը ծըծես,
Կը ջրնջիս մոծակի պէս․
Անուշ անուշ կը կոնծես,
Լեղի լեղի դուրս կ'անես։

ՁԼԸ

Մէկ մը պրծար խըպըլիկ,
Երկու պրծար խըպըլիկ,
Երրորդին բռնըւեցար
Չես ազատիր խըպըլիկ։

ՁԼԹ

Պառկեցուցէք անիրաւը,
Տուէք ոտքին հազար փէտ․—
Կա՛մ հազարն ի՛նչ է՝ չես գիտեր,
Կամ չես կերած ծեծ ու փէտ։

### ՁԽ.

Քուրջըն ասաց, գաւազանը դրախտէն է.
Մի հաւտար. մեր Ազգին կոյր բախտէն է
Թէ ծուռ խօսքը շիտակի տեղ՝ կը դընէ. —
Գաւազանը բըրտութեան անտառէն է:

### ՁԽԱ.

Անգն ընկայ,
Մազն ընկայ,
Վերջապէս ցանգն ընկայ,
Ագռաւների ճանգն ընկայ:

### ՁԽԲ

Օձին գըլուխըն որ ցաւի՝
Ճամբուն մէջտեղը կը պառկի.
Չարին օրհասըն որ հասնի՝
Ինքիրմէն կը խայտառակի:

### ՁԽԳ

Մինչեւ որ ձին ձի լինի՝
Ձիու տէրն ինչ կուքաշէ.
Մինչեւ տըղան մարդ լինի՝
Տըղու մէրն ինչ կուքաշէ:

# ԽԵ

## ՏԷՐ ԵՒ ԾԱՌԱՅ

---

ՁԽԴ

Տէրը տէր ծառան կ’անէ,
Ծառան ծառայ տէրը կ’անէ.
Ես ազնիւ տէր անոր կ’ասեմ
Որ իր ծառան տէր մի կ’անէ։

ՁԽԵ

Ծառան երէ տէր եղաւ,
Աշխարհիս անտէր եղաւ.
Թէ բոսան փաշա լինի,
Քո մասնին *Մաշա* եղաւ։

ՁԽԶ

Հովուի տան *հաճկըն* որ գայ՝
Հովուին ոտիցը կը խածնէ.
Ծառային *հաճկըն* որ գայ՝
Տիրոջը զեն կը հասցընէ։

**ՁԽԷ**

Պար չի զար սոված արջը,
Ջուր չի տար պարապ փարչը․
Ինչ՞ անէ սոված ծառան
Անզուր տիրոջ առաջը։

**ՁԽԸ**

Ճամբայ չ'երթաս տղայի հետ
Թէ որ *նազին* չես դիմանար․
Գործ մի բռներ *աղայի* հետ՝
Թէ տրնազին չես դիմանար։

**ՁԽԹ**

Մեծ մեծ դռներ,
Սոված շըներ․
Մեծ աղաներ,
Շատ բռշաներ։

**ՁԾ**

Շուներ շուն է՝ պիտի հաչէ,
Որ տիրոջըն ալ հանոյ չէ․
Թէ բակես շունն՝ ո՞վ ինչ կ'ասէ,
Բայց տիրոջը *խաթըր* յարգէ։

**ՁԾԱ.**

Ոչ կուտեմ ձեր կոմըշին,
Ո՛րքան էլ համեղ լինի,
Ոչ կը քըշեմ ձեր գոմշին,
Որքան էլ անմեղ լինի:



## ԽՁ

### ՑԱՒ ՄԱՐՄՆՈՅ ԵՒ ՍԸՐՏԻ

---

ՁԾԲ

Ցաւ կայ՝ կը թակէ ու կ՚անցնի,
Ցաւ կայ՝ կը ծակէ ու կ՚անցնի,
Ինչ՞ ասեմ ես այն ցաւին
Որ ոչ քակէ ոչ անցնի ։

ՁԾԳ

Սէր ունեցողն ի սըրտին
Երգ ունի միշտ ի բերանին.
Ցաւ ունեցողն ի սըրտին
Խօսք ունի շատ ի բերանին ։

ՁԾԴ

Մարդուս լեզուն կը զարնըւի
Ցաւած ատամին վըրայ.
Ցաւագարը կը գանգըտուի
Քաշած ցաւերին վըրայ ։

# ԽԷ

## ՓՈՂ ԿԱՄ ԴՐԱՄ

---

ՋԾԵ

Որսի գընաց առանց շունի ,
Տունը դարձաւ՝ որս մը չունի.
Ով որ ձեռքին լաւ փող չ'ունի՝
Նա ձեռք չը զարնէ մեծ բանի:

ՋԾԶ

Փողին երեսը տաք է ,
Չըտեսի գըլխուն թագ է.
Անիրաւ դատաւորին
Պըռօզը [1]) շուտ կը քակէ :

ՋԾԷ

Փողն եկաւ անձրեւի պէս ,
Թօթափեցաւ տերեւի պէս.
Խիկա՛ր՝ ինչո՞ւ զարմանաս ,
Խելօքն եղած էր խեւի պէս :

---

¹) Մանեակ կամ Լուծ. Կապանք, Անուր, Լալէ :

ՃԾԸ

Քանի որ ցոլայ անիրաւ փողը,
Քովը ման կուգայ անօրէն գողը,
Թող տեղը մընայ իրաւ որ փողը,
Անոր հետ մընայ սեւ սըրտագողը:

ՃԾԹ

Խօսք տո՛ւր ու տուր, ի՛նչ վընաս,
Քըսակըդ բան չի՛ մանար·
Բանն ա՛ն է որ ըսակ տաս·
Տալուն բան չը՛ դիմանար:

ՃԿ

Ոսկին կրակով կը փորձեն՝
Մաքո՞ւր է թէ խառնուրդ է·
Դատւորն ոսկով կը փորձեն՝
Հաւատացեա՞լ՝ թէ Քուրդ է:

ՃԿԱ

Կաշառքը սուտ կըշառք է,
Ծանրը թեթեւ ցոյց կուտայ·
Առնողին ձեռքը ճրագ է,
Մութը տեղը լոյս կուտայ:

**ՁԿԲ**

Բարեկամէդ *պէզրէցմ՛ր* ,
Կուզե՛ս պարի հեռանայ . —
Փոխ ըստակ տուր կամ փո՛խ առ,
Մէկ մ'ալ երես չե՛ս տեսնայ :

**ՁԿԳ**

Ոսկի՛ , ինչէ՛ն ի՛նչ կ'անես.—
Գեղացիէն *ֆեւխա՝ խօճա՝ բէկ՝ աղա* .
Աստուա՛ծ, ինչէ՛ն ի՛նչ կ'անես.
Մեղաւորէս ժամկոչ՝ տէրպապ՝ աբեղայ :

**ՁԿԴ**

Թէ փոխ ըստակ տաս՝
Տուր մարդո՛ւ առաջ ,
Բայց մի՛ պահանջեր
Աշխարհի առաջ :

**ՁԿԵ**

Ցուպ ի ձեռին՝ կօշիկ յոտին ,
Քըսակին մէջ ծըփայ ոսկին ,
Որ ագահի բըռնութենէն
Ժամ մի առաջ ելլեն պըրծին։

ՋԿԶ

Խն՛կար, ինձ մին շըւու[1]) բեր. —
Շա՛տ լաւ որդի, ինչո՞ւ չէ. —
Խն՛կար, փողս առ՝ շըւու բեր. —
Որդի, ա՛ռ շըւուն փըչէ:

ՋԿԷ

Տըղան կարծէ թէ տաս տարին
Անցնելիք բընաւ չունի.
Խենթը կարծէ թէ տասն ոսկին
Հասնելիք բընաւ չունի:

ՋԿԸ

Թէ որդիդ խելք ունի գըլխին,
Փողն իրեն ինչ է հարկաւոր.
Թէ որդիդ խելք չունի գըլխին,
Փողն իրեն ինչ է հարկաւոր:

ՋԿԹ

Մէկին փողն որ աւելնայ՝
Տան սիւնը ծուռ կ՚երեւնայ,
Փողն որ պակսի քըսակին,
Կ'ասէ, փըստածն ալ ձեռք տայ:

1) Շւու. Սրինգ, Տիւտիւկ, Գաւալ:

ՋՀ

Քրդին տըղէն է սատանայ·
Ջուրըն կըգայ Սըլէմանայ·
Ա՛ռ տէրտէր բուրդն ու բամբակը,
Թող հայանայ կամ թըրքանայ։

ՋՀԱ.

Պարտքը տալով կը վըճարի,
Թանը դգալով կը վըճարի·
Այս աշխարհիս մէջ ամէն բան
Եղբայր, փողով կը վըճարի։

ՋՀԲ

Քան թէ ունենամ
Բոլոր աշխարհիս ոսկին,
Լաւ է ունենամ
Շատ խելք եւ անուն անգին։



# ԽԸ

## ՕՐԻՆԱԿ ԲԱՐԻ ԵՒ ՉԱՐ

---

ՉՀԳ

Խաղողը սեւ խաղողին
Նայելով կը սեւանայ,
Մարդը նայի խելօքին՝
Ինքն ալ խելօք ձեւանայ:

ՉՀԴ

Մարդ մարդու քահանայ,
Մարդ մարդու սատանայ.
Ինչ՛ մեծ բան է օրինակը.—
Խիկարն ասոր կը հիանայ:

ՉՀԵ

Քունը քուն կը բերէ,
Յորանջը յորանջ կը բերէ.
Ներհակին ներհակ պատճառ,
Խուլ ականջը կա՛նչ կը բերէ:

ՋՀԶ

Երբ իջուն ծովը *կապես*՝
Կ'առնու նորա պախուցը.
Պախուցը թէ որ թափես՝
Կ'առնու նորա բարուցը:

ՋՀԷ

Աղջիկը մօրը վրան
Ինչ որ տեսնէ ա՛յն կ'անէ,
Մանչիկը հօրը վրան
Ինչ որ տեսնէ՝ ա՛յն կ'անէ:

ՋՀԸ

Թէ վարդապետը
Խրմեց գաւաթով,
Թող նորա ճորտը
Խրմէ ճերեփով:

ՋՀԹ

Մարդը մարդուս հայելին է.
Լաւին նայէ,
Վատին նայէ,
Քո պակասութիւնդ ճըտկըտէ:

ՁԶ

Փընջին միջում ծընծաղիկը
Մանուշակի հոտը կ'առնու ,
Լաւ ընկերաց մէջ մանկիկը
Օրինակին լաւը կ'առնու :



## ԽԹ

## ՋԱՆԱՋԱՆՔ

---

ՋՁԱ.

Լաւ է լայն արձակ տեղը
Ծեծ ուտես կամ *փալախա*,
Քան թէ նեղ՝ խըղճուկ տեղը
Հաց ուտես կամ *փախլաւա*:

ՋՁԲ

Աստուած կարօտ չ'անէ ըզքեզ
*Հաքիմի* ու *հէքիմի*.
Աստուած գերի չ'անէ ըզքեզ
Ուտեմ խըմեմ հագնիմի:

ՋՁԳ.

Կովը տան կենայ՝ բուս ուտէ,
Հաւը տան կենայ՝ կուտ ուտէ,
Հայը երկրէ երկիր ման գայ՝
Տաս վաստըկի ու քիչ ուտէ:

ՃՃԴ

Վաղուի ճաշուն՝ խրլէ եւ կեր,
Օրհասրկին՝ զրնէ եւ կեր.
Իրիկունը՝ թէ ծրրի տան
Խիկարն ասաց թէ մի ուտեր :

ՃՃԵ

Շիտակ խալէ, ո՛վ եղբայր,
Տես որ ոտքրդ չը սահի.
Թէ սահեցար ու ընկար՝
Կ՚ըլլան զարնող զարնողի :

ՃՃԶ

Այս Հայը Հայ չէ, վա՜յ է
Որ իր ազգին կուտայ կրակ,
Ինք ծայն ծրզած կը վայէ,
Հանիք, կըրա՜կ կայ կըրա՜կ :

ՃՃԷ

Պանին մեռնիմ, պասը պաս է.
Բայց մախոխըն ինչ ըսպաս է.
Ո՛վ ինչ որ կ՚ուզէ թող ասէ,
Ես կ՚ասեմ թէ պասուհաս է :

ՁՁԸ

Կաքիլ կաքիլ կը ժողվի ,
Կը լինի նըման ծովի ·
Մի՛ կոխեր հացի փըշրանք ,
Որ չը հանդիպիս սովի :

ՁՁԹ

Մօրուքին նայիս՝
Իսկ հայր Աբրահամ·
Արարքին նայիս ,
Սեմ չէ, հապա Քամ :

ՁՂ

Թէ սըրտիկըդ է մաղձով լի ,
Բերանըդ է հարկաւ լեղի ·
Բերանըդ որ լեղի լինի ,
Ամէն բան լեղի կը լինի :

ՁՂԱ

Ուրիշներու երազը մարել
Ինչի՞դ է պէտք՝ ա՜յ եղբայր ·
Մատուըներուդ ծայրը այրել
Ինչի՞դ է պէտք՝ ա՜յ եղբայր :

ՋՂԲ

Կոյրն ասաց, կացիր տեսնենք
Սա կաղն ընտիր կը պարէ·
Կաղն ասաց, վազիր տեսնենք
Խըլին ինչ խապար է:

ՋՂԳ

Քամին ասաց մարագին[1])·
Դուռըդ բաց՝ դարման բերեմ·
Մարագը թէ վայ քո գըլխին,
Քո ոչ բերածը՝ ոչ տարածը կ'ուզեմ:

ՋՂԴ

Չեն հարցըներ՝
Ո՞վ է հարըդ կամ մարըդ·
Կը հարցընեն՝
Ինչ՞ է վարքըդ հանճարըդ:

ՋՂԵ

Լեզուն է աղբիւր բանի,
Պէտք չէ բըխէ քաղցր ու լեղի·
Մարդունն է մէկ փերթ[2]) արած,
Օձինըն է երկու ճըղի:

1) Երդնոց, Սամանլըղ։ | 2) Կտոր. Փարչէ։

ՋՂԶ

Ա՛ տղայ՝ ասա, *մյր* ասա. —
Ձեմ ասեր. — Ինչի՞ համա. —
Այրէն յետոյ *քեն* կուգայ,
Վերջ չունի՝ անո՛ր համա :

ՋՂԷ

Ջուրը աղբիւրէն,
Ցորենը հորէն.
Աղջիկ զաւակը մօրէն,
Իսկ մանչ զաւակը հօրէն:

ՋՂԸ

Ա՛խ, ժամանա՛կ ժամանակ,
Այս ինչ օրերու հասանք.
Նըժոյգները յարդ կ'ուտեն,
Գարին կ'ուտէ աւանակ :

ՋՂԹ

Դո՛ւն ես որ կը պարծենաս՝
Թէ չ'ունիմ պակասութիւն,
Հայլին ձեռք առ՝ կը տեսնաս,
Կուտաս այլոց թողութիւն :

Ռ.

Աղցանին աղ շատ պիտի ,
Եղ դընողն առատ պիտի ,
Վըրան քացախ լեցընողն
Վախլուկ ու ժըլատ պիտի :

ՌԱ.

Կարմիր ու քրտնած մարդէ ,
Քաչալ ու շիլ կինմարդէ ,
Ծուռբերանէ ծուռքիթէ
Աստուած ըզքեզ ազատէ :

---

Այբ բէն գիմ դա ,
Յոյ ւիւն փիւր քէ·
Այսքան առակ սիրով կարդա,
Հազար ու մէկը հերիք է :

ՎԵՐՋ



Մժղան ձայնը ուշմին *սազ* է,
Թմբկինը՝ խըլին նուագ է։

Ճ. Ա.



# ՅԱՆԿ ՆԻՒԹՈՑ


| Գլուխ | | Էջ |
|---|---|---|
| | ԾԱՆՈՒՑՈՒՄ ............ | Ե. |
| Ա. | Ագահութիւն եւ Շռայլութիւն.. | 15 |
| Բ. | Ազատութիւն եւ Գերութիւն.... | 19 |
| Գ. | Ազգական եւ Ամուսին....... | 21 |
| Դ. | Ազգութիւն եւ Հայրենիք...... | 27 |
| Ե. | Ամօթ եւ Անամօթութիւն...... | 34 |
| Զ. | Աշխատանք եւ Ծուլութիւն.... | 35 |
| Է. | Առաքինութիւն եւ Մոլութիւն. | 44 |
| Ը. | Արդարութիւն եւ Անիրաւութիւն | 57 |
| Թ. | Բաղդ եւ Դժբաղդութիւն..... | 63 |
| Ժ. | Բարեկամ եւ Թշնամի........ | 75 |
| ԺԱ. | Բարերարութիւն եւ Ապերախտութիւն.................. | 94 |
| ԺԲ. | Բարկութիւն եւ Հեզութիւն.... | 94 |
| ԺԳ. | Բնաւորութիւն եւ Կրթութիւն.. | 100 |
| ԺԴ. | Գեղեցկութիւն եւ Տգեղութիւն. | 105 |
| ԺԵ. | Գովութիւն եւ Պարսաւ....... | 106 |
| ԺԶ. | Երեւոյթ եւ Իսկութիւն....... | 109 |
| ԺԷ. | Երկիւղ եւ Քաջութիւն....... | 114 |

Գլուխ — Եր

ԺԸ. Ընկերութիւն եւ Առանձնութիւն 119
ԺԹ. Իմաստութիւն եւ Յիմարութիւն. 126
Ի. Խաբէութիւն եւ Նենգութիւն.. 152
ԻԱ. Խնդրուածք եւ Տուրք.......... 156
ԻԲ. Խօսք եւ Գործք.............. 163
ԻԳ. Կառավարութիւն եւ Կարգ կանոն.................... 178
ԻԴ. Կատարելութիւն եւ Պակասութիւն...................... 185
ԻԵ. Կարգ, Կանոն եւ Ժամանակ. 190
ԻԶ. Կարծիք եւ Կասկածանք..... 195
ԻԷ. Համբերութիւն եւ Նեղսրտութիւն........................ 199
ԻԸ. Հարստութիւն եւ Աղքատութիւն. 200
ԻԹ. Հետաքրքրութիւն............ 211
Լ. Հիւանդութիւն եւ Առողջութիւն 213
ԼԱ. Հպարտութիւն եւ Խոնարհութիւն 219
ԼԲ. Ճշմարտութիւն եւ Ստութիւն... 221
ԼԳ. Մարդկութիւն եւ Տմարդութիւն 224
ԼԴ. Յոյս եւ Վստահութիւն......... 232
ԼԵ. Նախանձ եւ Հակառակութիւն 234
ԼԶ. Շահասիրութիւն եւ Անձնասիրութիւն................ 237
ԼԷ. Շողոքորթութիւն ............ 243

| Գլուխ | | Եր |
|---|---|---|
| ԼԸ. | Ուրախութիւն եւ Տրտմութիւն.. | 245 |
| ԼԹ. | Չարախօսութիւն ............ | 246 |
| Խ. | Չափ եւ Պայման........... | 249 |
| ԽԱ. | Պանդխտութիւն եւ Հայրենիք.. | 252 |
| ԽԲ. | Պատիւ եւ Անպատուութիւն... | 257 |
| ԽԳ. | Սէր եւ Ատելութիւն ......... | 259 |
| ԽԴ. | Վարձ եւ Պատիժ ........... | 264 |
| ԽԵ. | Տէր եւ Ծառայ............. | 266 |
| ԽԶ. | Ցաւ Մարմնոյ եւ Սրտի...... | 269 |
| ԽԷ. | Փող կամ Դրամ............ | 270 |
| ԽԸ. | Օրինակ Բարի եւ Չար...... | 273 |
| ԽԹ. | Զանազանք................ | 275 |

Տպագրութիւն Արամեան

Typographie Aramian